# ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Լ. ՏԱՐԻ ԹԻՒ 07 (1457) ՇԱԲԱԹ, ՄԱՐՏ 06, 2010
VOLUME 30, NO. 07 (1457) SATURDAY, MARCH 06, 2010

Պաշտօնաթերթ՝
Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104


## ՄԵՐ ԱՆԿԻՒՆԷՆ

### ՄԻԱՑԵԱԼ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՄԸ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԱՌԻԹՈՎ

**ՏՕՔԹ. Ա. ԳԱԶԱՆՃԵԱՆ**

22 Փետրուար 2010 թ.ին, մեր Սփիւռքահայ երեք աւանդական կուսակցութիւններու՝ ՍԴՀԿ.ի, ՀՅԴ.ի եւ ՌԱԿ.ի կեդրոնական Վարչութիւնները հրապարակեցին միացեալ հաղորդագրութիւն մը, որ ուշադրութիւնը գրաւեց հայ զանգուածներուն: Մեր ներկայ սիւնակին մէջ, պիտի համառօտակի անդրադառնանք հաղորդագրութեան ձեւին, եւ մասնաւորաբար, բովանդակութեան մասին, ուր արտայայտութիւն գտած են երկար տարիներ ազգային պահանջք դարձած լիարժէք քննարկումներ, որոնք սերտօրէն առնչուած են մեր ազգի դիմագրաւած մարտահրաւէրներուն հետ:

Հաղորդագրութիւնը իր հրապարակման ժամանակագրական ձեւին մէջ առաջինը չէ: Միացեալ հաղորդագրութիւններու լոյս ընծայումը իրենց արտաքին ձեւով սովորական երեւոյթ էր մեր համազգային իրականութենէն ներս: Ծանօթ է մեր ժողովուրդին, թէ մեր աւանդական կուսակցութիւնները, մերթ հատուածաբար, մերթ իրարու հետ գործակցաբար, կը նշեն Օսմանեան Կայսրութեան կողմէ հայ ժողովուրդի դէմ իրագործուած, իր նախընթացը չունեցող չարաղէտ Ցեղասպանութեան տարելիցը: Որով, ամէն տարի, հաւաքաբար հաղորդագրութիւն մը կը խմբագրուի, պատգամելու համար հայ ժողովուրդին ներկայ գտնուիլ համազգայնօրէն նախաձեռնուած ձգահաւաքներուն՝ ըլլան անոնք կրօնական հոգեհանգստեան արարողութիւններ, քաղաքական հաւաքներ կամ կազմակերպուած քայլարշաւներ եւ Վ.Ե՛Ր.Զ: Ժողովուրդը ունի Մեծ Եղեռնին յաջորդող տասնամեակներու այն դառն փորձառութիւնը, թէ տարելիցներու աւարտէն անմիջապէս ետք ամէն բան կը մոռցուի, նաեւ՝ վերջ կը գտնէ պատգամաբերներու կողմէ երկարօրէն շռայլուած համագործակցութեան հրամայականը: Տարակարծութիւնները կը շարունակուին վերստին: Կրկին գերակշռող կը դառնան հատուածական շահերը: Միշտ տիրապետող կը մնայ Ազգին անունով առանձինն խօսելու մեծամտութիւնը:

Բայց, ըստ երեւոյթին, իր յանդուգն բովանդակութեամբ եզակի է Մեծ Եղեռնի 95րդ Տարելիցի առիթով Սփիւռքահայ երեք աւանդական կուսակցութիւններու՝ ՍԴՀԿ.ի, ՀՅԴ.ի եւ ՌԱԿ.ի կեդրոնական Վարչութիւններու միացեալ յայտարարութիւնը, ուր մեր աւանդական

*Տար.ը էջ 2*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ ՆՇՈՒԵՑԱՒ ՄԱՐՏ 1-Ի ՍՊԱՆԴԻ ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԵԼԻՑԸ

### ԸՆԴԴԻՄՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՆԱԽԱՏԵՍԷ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ




*Մարտ 1-ի հանրահաւաքի մասնակիցները պարզած են զոհուածներու նկարները*

*2008-ի Մարտ 1-ին Հայաստանի նախկին բռնապետ՝ Ռոբերտ Քոչարեանի հրամանին ենթարկուելով, ոստիկանութեան ստորաբաժանումներ եւ այլ զօրքեր բռնի ուժի գործադրմամբ ցրուեցին Երեւանի Ազատութեան հրապարակին վրայ գիշերող ժողովուրդը եւ ապա, օրուայ ընթացքին տեղի ունեցած իրադարձութիւններու ընթացքին սպանդ կազմակերպելով՝ պատճառ դարձան առնուազն տասը հոգիներու սպանութեան:*

*Մարտ 1-ի երկրորդ տարելիցին առթիւ, ընդդիմադիր Հայ Ազգային Գոնկրէսը Մատենադարանի առջեւ կազմակերպեց հանրահաւաք, որու ընթացքին ելոյթ ունեցողները դատապարտեցին իշխանութիւններու վայրագութիւն-*

*Տար.ը էջ 4*

## ՀԱՅ ԱՄԵՐԻԿԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԿԸ ԶՕՐԱԿՑԻ ՏԷՆԻ ԹԱՐՔԱՆԵԱՆԻ ԹԵԿՆԱԾՈՒԹԵԱՆ



*Նկարին մէջ ձախէն աջ՝ Արսէն Տէր-Պետրոսեան, Տէնի Թարքանեան եւ Ժիրայր Կէտէրեան*

*ՍԴՀԿ Հայ Ամերիկեան Խորհուրդը (ՀԱԽ, ACA-PAC) պաշտօնապէս իր զօրակցութիւնը յայտնեց Տէնի Թարքանեանին, որ կը պայքարի դառնալու Հանրապետական կուսակցութեան թեկնածուն՝ Նեվատա Նահանգի Ծերակոյտի աթոռին:*

*Հանրապետականներու նախընտրական պայքարը տեղի պիտի ունենայ Յունիս 8-ի, որու յաղթողը յառաջիկայ Նոյեմբերի պիտի մրցի Ծերակոյտի այժմու ղեկա-*

*Տար.ը էջ 5*

## ԹՈՒՐՔԻՈՅ ՎԱՐՉԱՊԵՏԸ ԿԸ ՍՊԱՌՆԱՅ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ԵՒ ԱՄԵՐԻԿԱՅԻՆ

*Թուրքիոյ վարչապետ Ռեճէփ Թայիփ Էրտողան Մարտի 4-ին Միացեալ Նահանգներու Ներկայացուցիչներու Տան Արտաքին յարաբերութիւններու յանձնաժողովի կողմէ Հայկական Ցեղասպանութեան բանաձեւի սպասուող քննարկումներու մասին խօսելով, լրագրողներուն ըսած է-, «Մեր չփումները կը շարունակուին: Միացեալ Նահանգներ կատարած իմ վերջին այցի ընթացքին ալ քննարկած ենք այդ հարցը: Մեր խումբ մը պատգամաւոր ընկերները ներկայիս այդ հարցով Ամերիկա են: Մեր դիրքորոշումը յայտնի է: Զուիցերիոյ մէջ սկսած գործընթաց կայ, որ կը շարունակուի: կը հաւատամ, որ արդիւնք կ'ըլլայ, եթէ փոխադարձաբար շարունակուին բարի մտադրութիւնները: Եթէ Մարտ 4-ին կամ Ապրիլ 24-ին սխալ քայլ կատարուի, այս գործընթացը կը ձախողի: կը կարծեմ որ, Գոնկրէսի անդամները այս նրբութիւնը հաշուի կ'առնեն»,- ըսած է Թուրքիոյ վարչապետը:*

## ԹՈՒՐՔԵՐԸ ԿԸ ԲՈՂՈՔԵՆ CBS-Ի ՀԱՂՈՐԴՈՒՄԻՆ ԱՌԹԻՒ




***Լրագրող Պոպ Սայմըն ցոյց կու տայ Տէր Զորի անապատէն հանուած հայ զոհերու ոսկորները***

*Փետրուարի 28-ին ամերիկեան CBS հեռատեսիլի ընկերութեան մեծ ժողովրդականութիւն վայելող 60 Minutes (60 Վայրկեան) յայտագրի ընթացքին յայտնի լրագրող՝ Պոպ Սայմըն ներկայացուց Հայկական Ցեղասպանութեան մասին յատուկ հաղորդում, ցոյց տալով ամերիկահայ պատմաբան Փիթըր Պալաքեանի հետ դէպի Տէր Զոր իր կատարած այցելութիւնը եւ հոն գտած ոսկորները՝ որոնք կը պատկանին հայ զոհերուն: «Ճակատամարտ Պատմութեան Համար» խորագրով հաղորդման ընթացքին լրագրողը ըսաւ, որ Հայ ժողովուրդը Թուրքերու կողմէ 1 միլիոն հայերու բռնագաղթն ու սպանդը կը որակէ որպէս իր ազգի Հոլոքոստ: Սակայն Թուրքերը եւ Ամերիկայի իշխանութիւնները կը մերժեն այդ իրադարձութիւնները*

*Տար.ը էջ 2*

**ԱԶԳԱՅԻՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 1988 ՓԵՏՐՈՒԱՐԷՆ 2008 ՓԵՏՐՈՒԱՐ

*ՅԱՐՈՒԹ ՏԷՐ ԴԱՒԻԹԵԱՆ*

*Կլասնոսթ եւ Փերեսթրոյքա: Հրապարակայնութիւն եւ վերակառուցում: Այս անուան տակ, Միխայէլ Կորպաչեվի կողմէ 1985-ին սկսուած տնտեսական եւ քաղաքական բարենորոգումները յանգեցան Սովետական Միութեան փլուզման: Սովետական Հայաստանը չէր կրնար զերծ մնալ այդ շարժումէն Ազատական գաղափարներու տարածման հրապարակային առաջին արտայայտիչները եղան կենսոլորտի պաշտպանները, մտահոգ Նայիրիտի եւ Մեծամօրի առթած վտանգներուն: Անոնց կազմակերպած ցոյցերը շուտով համակեցին բնակչութեան բոլոր խաւերը: Սովետական Հայաստանի քաղաքացին, տասնամեակներով կաշկանդուած իր ձայնը հրապարակաւ արտայայտելու իրաւունքէն, սկսաւ գիտակցիլ, որ փոխանակ միայն հրահանգներ կատարելու, կրնայ նաեւ իր գործօն մասնակցութիւնը բերել երկրի ապագայի մշակման գործընթացին: Սկսաւ ազատ քաղաքացիական հասարակութեան ձեւաւորման գործընթաց մը, որ պիտի թօթափէր ամբողջատիրական հասարակարգ մը, յօգուտ ազատական ու ժողովրդավար հասարակարգի մը ստեղծման:*

*Այս գործընթացը սակայն կրեց մեծ ցնցում մը, երբ 1988 Փետրուար 20ին Ստեփանակերտի Քաղաքային Խորհուրդը ընդունեց որոշում մը, դիմելու Սովետական կեդրոնական իշխանութեան որպէս զի Ղարաբաղը միացուի Հայաստանին: 1988 Փետրուարի վերջաւորութեան տեղի ունեցած Սումգայիթեան ջարդերը այնպիսի ստիպողական վիճակ մը ստեղծեցին, Ղարաբաղեան հարցը դարձաւ աւելի հրատապ ու առաջնահերթ: Յաջորդող ամիսներն ու մի քանի տարին, մինչեւ Սովետական Միութեան վերջնական փլուզումը Դեկտեմբեր 1991ին, յատկանշուեցան նոր զարգացումներու ընդառաջ նոր ուղիներու փնտռտուքով: Հետաքրքրական է նկատել որ այս փնտռտուքներուն մղիչ ուժը ոչ թէ քաղաքական ղեկավարներն էին, այլ հոյլ մը մտաւորականներ, որոնք ընդունակ էին ընկալելու օրուան իրադրութիւնը ու մօտիկ անցեալի պատմութեան դասերու նորարար վերլուծութեամբ առաջարկելու նոր ուղղութիւններ: Ականատես եղանք բանավէճերու, իտէալականի ու իրապաշտականի, մեծ գաղափարախօսութեանց եւ գործնապաշտութեան, սովորական ու համաշխարհային ազգի, թրքամէտութեան, ռուսամէտութեան եւ երրորդ ուժի բացառման ու այլ մօտեցումներու:*

*Հայաստանի անկախացումը Սեպտեմբեր 21, 1991ին եւ պետական կեանքի առօրեայի հոգսերը, ընկան անոնք քաղաքական, տնտեսական, իրաւական, սոցիալական, մշակութային եւայլն, սրեցին իրավիճակը տարբեր հատուածներու եւ անձնաւորութեանց միջեւ: Իշխանական եւ հուսկ՝ տնտեսական լծակներու տիրանալու տենչը, երկրորդական հարթագիծ մղեց մարդու իրաւունքներու եւ հիմնատար ազատութիւններու հիման վրայ ժողովրդավար ու օրէնքի գերակայութեամբ առաջնորդուող երկիր մը կերտելու անհրաժեշտութիւնը: Երկրորդական հարթագիծ մղուեցաւ պետական մտածողութիւնը, ի հեճուկս անձնական փառատենչութեանց: Ղարաբաղեան համազգային պայքարը դարձաւ իշխանափոխութեան նպաստող խաղաթուղթ: Հայրենակերտման դժուարին ու երկարաժամկէտ գործընթացը տեղի տուաւ ամբոխավար գործունէութեան, որ խախտեց երկրի հիմքերը: Սահմանադրական խախտումները, ընտրական զեղծարարութիւնները եւ իրաւական համակարգի աճպարարութիւնները դարձան սովորական երեւոյթներ: Տնտեսութեան մենաշնորհումը քանի մը օլիկարխներու ձեռքին, ծանր հարուած հասցուց միջին դասակարգին, նպաստելով արտագաղթի համաճարակին: Նախագահական ամէն մէկ կեղծուած ընտրութեան հետ աճեցաւ ժողովուրդի ցասումը, հասնելու համար 2008ի Փետրուարեան ծանօթ դէպքերուն եւ տխրահռչակ Մարտ 1-ին:*

*Որքան ալ անսովոր հնչէ մեր այս հաստատումը, սակայն այսօր իրականութիւն է որ 2008 Փետրուարի դէպքերը աւելի նպաստեցին Հայաստան պետութեան զարգացման եւ քաղաքացիական հասարակութեան գոյացման գործընթացին, քան 1988 Փետրուարի դէպքերը: Այս վերջինը ընդվզում մըն էր օտարի պարտադրած բռնատիրութեան ու անարդարութեանց դէմ, որ աւելի հեշտ կը դարձնէր համազգային համախմբման գործընթացը: Ինչպէս նաեւ 1988էն միայն 3 տարիներ ետք Հայաստանի անկախացումի ժողովուրդին կու տար այն սխալ տպաւորութիւնը որ հետապնդուելիք ամէն մէկ իտէալ կարճ ժամանակի ընթացքին իրագործելի պիտի դառնար: Ինչպէս օրինակ Ղարաբաղի միացումը Հայաստանին: Այս կարճաժամկէտ մտայնութիւնը պատճառ կը դառնար անհամբեր վարուելակերպի ու հապճեպ փոփոխութեանց ակնկալութիւններու:*

*Գալով 2008 Փետրուարեան դէպքերուն, անոնք ընդվզում մըն էին սեփական ժողովուրդի մէջէն ծնունդ առած բռնատիրութեան եւ անարդարութեանց դէմ, որ կը դժուարացնէ տարբեր խրամատներու մէջ յայտնուած ժողովուրդի զաւակներու համախմբումը: Սակայն եւ այնպէս Մարտ 1ի զոհերու թափուած արիւնը պիտի ունենայ այն զօդիչ ազդակը որը չունեցաւ անկախութեան անարիւն ձեռքբերումը: Մարտ 1-ի սպանդի պատասխանատուներու յայտնաբերման կոծկումը ապարդիւն քայլ մըն է ներկայ իշխանութեանց կողմէ իր վրայէն թօթափելու այդ պատասխանատուութիւնը եւ անոր բերելիք հետեւանքները: Զոհերու կողքին քաղբանտարկեալներու յայտնուիլը յաւելեալ խթան մըն է քաղաքացիական գիտակցութեան տէր հասարակութեան կազմաւորման: Պէտք չէ մոռնալ նաեւ որ բախտատմաբ 1988ի շարժման 2008ի ցուցարարներուն տնտեսապէս աւելի անապահով վիճակը, գումարած անոնց աչքին առջեւ օլիկարխներու անիրաւօրէն դիզած հարստութիւնները, աւելի կը խթանեն հասարակութիւնը: Հետաքրքրական է նկատել նաեւ որ 2008ի պարագային մտաւորականութիւնը չունեցաւ այն գլխաւոր դերակատարութիւնը որ վիճակուեցաւ 1988ի մտաւորականութեան: Արդեօ՞ք անոնցմէ շատերուն ապրած յուսախաբութիւնը ի տես անցած 20 տարիներու զարգացումներուն, պատճառ դարձած է անոնց հրապարակային անգործունէութեան: Սպասելի է սակայն, որ հրապարակի վրայ գտնուողներու անվախ գործունէութիւնը, հակառակ ամէն տեսակի հալածանքներու, պիտի ունենայ իր ազդեցութիւնը հրապարակէն քաշուածներու վերստին ներգրաւման: Երբ տարուէ տարի տակաւ կ՚աճի թիւը անոնց որոնք կը համոզուին ներկայ կացութեան անմխիթար վիճակին, պիտի բնականաբար աճի այդ իրավիճակէն դուրս գալու ելքեր փնտռողներու թիւը: Հայաստանի (ինչո՞ւ չէ նաեւ Սփիւռքի) քաղաքացիական գիտակցութեան տէր հասարակութեան զարգացումը ի վերջոյ պիտի յանգի մարդու իրաւունքները եւ հիմնարար ազատութիւնները յարգող ժողովրդավար Հայաստանը մը գոյացման: Հայաստանի եւ Սփիւռքի գոյատեւման ու բարգաւաճման ուրիշ ելք չկայ:*

## ՄԻԱՑԵԱԼ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՄԸ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԱՌԻԹՈՎ

*Շարունակուած էջ 1-էն*

երբ կուսակցութիւնները դասական պատգամներ արձակել աւելի, յաչս զիրենք ծնած համայն հայ ժողովուրդին՝ հրապարակային յանձնառութիւններ վերցնող փաստաթուղթ մըն է:

«Կ'ըսուի հաղորդագրութեան մէջ. «Մենք՝համահայկական երեք կուսակցութիւններս,համոզուած ենք, որ մի միայն համախումբ ջանքերով, խոհեմ ու վճռական քայլերով կը կարենանք աշխարհի մէջ ձեւաւորել Հայոց ազգային-պետական շահերը հաշուի առնելու, մեր իրաւունքները յարգելու գիտակցութիւն: Մենք համոզուած ենք, որ միմիայն միասնական ջանքերով, ամենօրեայ աշխատանքով հնարաւոր է լուծել համազգային խնդիրներ»:

Այդ իմաստով, Միացեալ հաղորդագրութիւնը, ըստ երեւոյթին, յուսադրիչ, այլապէս խթանարար ներուժ ունի: Ան կու գայ մասամբ վերականգնելու տարիներէ ասդին հայ հասարակութիւններու մէջ մեղկացող ազգային ակնկալութիւնները, մեր աւանդական կազմակերպութիւններու համատեղ գործակցութեան հրամայականի կապակցութեամբ: Անոնց մէջ, այնպէս կը թուի, թէ համոզում սկսած է դառնալ միասնութեան ունեցած ուժին կառուցողական կարողականութիւնը, անսպառ կարելիութիւնը: Թէ՝ միասնութեամբ տարուած աշխատանքն է, որ պիտի լաւագոյնս արդիւնաւորէ մեր մարտահրաւէրները: Պիտի նուիրագործէ մեր ազգի լուսաւոր ապագան:

Ցանկալի պիտի ըլլար, որ վերցուած յանձնառութիւնները բարբառանքներու սահմաններէն դուրս ելլեն: Դառնան՝ հետեւողական աշխատանքային ծրագիր: Գործնականանան՝ յօգուտ մեր ժողովուրդի ազգային արժէքներու պահպանման: Բարօր ու միասնական կեանքի, հայրենի կառոյցներու հզօրացման եւ ազգային պահանջատիրութեան արդար լուծման հրաշագործ օղակներ: Մաղթենք:

## ԹՈՒՐՔԵՐԸ ԿԸ ԲՈՂՈՔԵՆ

*Շարունակուած էջ 1-էն*

*անուանել Ցեղասպանութիւն:*

*Պոպ Սայմըն հարցազրոյց ունեցաւ նաեւ Թուրք դեսպանին հետ, որ կը ժխտէր Ցեղասպանութեան իրողութիւնը:*

*Հաղորդումը անդրադարձաւ նաեւ «Ցեղասպանութիւն» բառը գործածելու մասին նախագահ Օպամայի տուած նախընտրական խոստումին եւ ամերիկեան գոնկրէսէն ներս քննարկուող բանաձեւերուն:*

*Ընդհանուր առմամբ հայանպաստ այս հաղորդումը դժգոհութիւն յառաջացուցած է Ամերիկայի մէջ գործող թրքական կազմակերպութիւններու մօտ: Ամերիկայի Թրքական միութիւններու դաշնութիւնը (TADF) եւ Ամերիկայի Թրքական միութիւններու համագումարը (ATAA) նամակ յղած են CBS-ի տնօրէնութեան՝ իրենց զայրոյթը արտայայտելով հաղորդման առնչութեամբ: Բացի այդ, Թրքական կազմակերպութիւնները ամերիկաբնակ Թուրքերուն կոչ ըրած են՝ կարելի բոլոր միջոցներով արշաւ սկսիլ հեռատեսիլի ալիքին դէմ:*

*ATAA-ի փոխնախագահ Ալի Ջընար յայտարարած է, որ իրենք պիտի շարունակեն CBS-ի դէմ ուղղուած արշաւը այնքան ժամանակ, քանի դեռ հեռուստաալիքը ներողութիւն չէ խնդրած:*


***ՄԱՍԻՍ*** ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ՝
ԳԱԲՐԻԷԼ ՄՈԼՈՅԵԱՆ
ՍԱՀԱԿ ԹՈՒԹՃԵԱՆ
ՅԱՐՈՒԹ ՏԷՐ ԴԱՒԻԹԵԱՆ
ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ
Հեռ. (626) 797-7680
Ֆաքս. (626)797- 6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

**MASSIS Weekly**
**Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA**
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, Canada $60 (Second Class), $75.00 (Air Mail)
Overseas $85.00 (2nd Class Mail), $125.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To
**MASSIS WEEKLY**
**1060 N. Allen Ave.**
**Pasadena, CA 91104**

# ՀԱՅԱՍՏԱՆ

## ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԳՈՆԿՐԷՍԸ ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ՝ ՔՆՆԵԼՈՒ ՔՈՉԱՐԵԱՆԻ ԵՒ ԱՅԼՈՑ ՀԱՐՍՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ

*Վերջերս ռուսական «ՎԵՐՍԻԱ» եւ «ՎԵԿ» էլեկտրոնային պարբերականները ներկայացրել են Հայաստանի նախկին եւ ներկայ մի շարք պաշտօնեաների ունեցուածքի մասին ընդարձակ հրապարակումներ, համապատասխան ցանկերով: Ըստ յիշեալ պարբերականների, այդ մարդիկ մի քանի տասնեակ միլիոնից մինչեւ մի քանի միլիարդ դոլարի կարողութիւն կուտակել են միմիայն պաշտօնական դիրքի չարաշահմամբ, քանզի բիզնեսի հետ երբեւէ պաշտօնապէս կապ չեն ունեցել: Աւելին, որպէս հարստութեան կուտակման աղբիւր նշւում են նաեւ աւելի ծանր յանցանք ենթադրող գործողութիւններ, ինչպէս՝ նարկոբիզնեսը, տրաֆիկինգը, փողերի լուացումը, միջազգային ահաբեկչութեան հետ կապը եւ այլն:*

*Դրանով հաստատւում են Համաժողովրդական շարժման եւ Հայ Ազգային Կոնգրեսի հանրահաւաքներում ու պաշտօնական փաստաթղթերում տրուած գնահատականները երկրի բարձրագոյն պաշտօնեայի գլխաւորութեամբ Հայաստանում ձեւաւորուած եւ առ այսօր գործող կոռուպցիոն կողոպտիչ համակարգի մասին՝ հաստատուած 1999 թ. հոկտեմբերի 27-ի հետեւանքով: Պարզ ընչաքաղցութեան սահմանագիծը վաղուց անցած այդ կողոպուտի ահռելի չափերն ու իրականացման մեթոդներն այլ բան չեն, քան ողջ մի ժողովրդի ազգային ու մարդկային արժանապատուութեան ցինիկ ոտնահարում, նրան նետուած լկտի մարտահրաւէր: Հենց թալանչիների կողմից ժողովրդից կողոպտուած ունեցուածքի հրապարակուած այդ ցանկերի տակ են թաղուած հարիւրաւոր սպանութիւնները, հարիւր հազարաւորների կործանուած ու խեղուած ճակատագրերը, չկազմուած ընտանիքները, չծնուած երեխաները, կիսատ թողնուած ուսումը, հայրենազրկումը, չարքաշ կեանքի արմատները: Վերջին հաշուով, հենց այդ ցանկերի տակ պէտք է փնտռել նաեւ մարտիմէկեան սպանդի իրական դրդապատճառները, Հայաստանի պետականութեան քայքայման ու Լեռնային Ղարաբաղի գոյութեանն սպառնացող առարկայացած վտանգները, ցեղասպանութեան արդէն իրականացուած խայտառակ ուրացումը:*

*Ահա այդ մարդկանց անունները, ըստ հրապարակումների յաջորդականութեան. Ռոբերդ Քոչարեան, Սերժ Սարգսեան, Հովիկ Աբրահամեան, Տիգրան Սարգսեան, Երուանդ Զախարեան, Սաշիկ Սարգսեան, Գրիշա Յարութիւնեան, Արթուր Բաղդասարեան, Արմէն Գէորգեան, Դաւիթ Յարութիւնեան, Վարդան Այվազեան, Գագիկ Խաչատրեան, Սուրէն Խաչատրեան, Յարութիւն Փամբուկեան, Ալեքսան Յարութիւնեան, Բագրատ Սարգսեան, Անդրանիկ Մանուկեան?*

*Արդ, հարցեր են առաջանում.*

*1. Այս հրապարակումները իրական իմաստով հաղորդագրութիւններ են կատարուած ծանրագոյն յանցագործութիւնների մասին, սկսած պաշտօնական դիրքի չարաշահումից մինչեւ միջազգային ահաբեկչութեան օժանդակութիւն. ինչո՞ւ դրանք առ այսօր հանրապետութեան իրաւապահ մարմինների արձագանքին չեն արժանացել:*

*2. Ինչո՞ւ առ այսօր այդ պաշտօնեաներից եւ ոչ մէկը դրանց որեւէ կերպ չի արձագանքել, ինչո՞ւ ոեւէ մէկը դատարան չի դիմել իր «բարի համբաւն արատաւորելու» կամ «զրպարտութեան» հայցով: Դա չի՞ վկայում, թէ նրանք դրա դէմ որեւէ ասելիք չունեն:*

*3. Ինչպիսի՞ն կը լինէր այսօր Ղարաբաղեան խնդրի լուծման տարբերակը, եթէ այս ցանկում առաջին տեղն զբաղեցնող Ռ. Քոչարեանի կողոպտած 4 միլիարդ դոլարի մի մասը ծախսուած լինէր Լեռնային Ղարաբաղը բնակեցնելու նպատակով:*

*Կոռուպցիոն համակարգն իրաւական մեխանիզմներով կարող է կազմաքանդել միայն համաժողովրդական շարժմամբ ձեւաւորուած լեգիտիմ իշխանութիւնը: Սակայն մինչ այդ, այս պահին, Հայ Ազգային Կոնգրեսն առաջարկում է. Փաստահաւաք խմբի օրինակով ստեղծել Հայ Ազգային Կոնգրեսի եւ իշխանութեան հաւասար ներկայացուցչութեամբ յանձնաժողով, որը կ'ուսումնասիրի սոյն հրապարակումներում ներկայացուած փաստերը:*

## ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԼՈՒԾՈՒՄ ՉԵՆ

*Հայաստանում ընտրութիւնները միշտ կարող են լինել ոչ միայն վստահութեան վերականգնման, այլ նաեւ անվստահութեան խորացման պատճառ, անկախ նրանից, թէ ինչպէս են կազմակերպւում այդ ընտրութիւնները: Այս մասին Tert.am-ին ասաց Ազգային ժողովի «Ժառանգութիւն» խմբակցութեան ղեկավար Ստեփան Սաֆարեան:*

*Անդրադառնալով ՀԱԿ հանրահաւաքի ժամանակ ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի այն յայտարարութեանը, թէ երկրում ստեղծուած իրավիճակից դուրս գալու միակ ելքն արտահերթ ընտրութիւններն են՝ «Ժառանգութեան» ներկայացուցիչն ասաց. «Նման ելք կարող է լինել միայն այն դէպքում, երբ ընտրութիւններն ազատ են անցկացւում եւ հասարակութիւնը ներկայացնող քաղաքական ուժերը ներկայացւում են խորհրդարանում ու իշխանութեան մարմիններում: Բայց քանի որ մեր իշխանութիւնները մահու չափ վախենում են ընդդիմախօսութիւնից, մահու չափ վախենում են իշխափոխութիւնից եւ ամէն ինչ անում են այդ վախերից դրդուած եւ յանուն իշխանութեան վերարտադրութեան: Ես կարող եմ կանխատեսել, որ նոր ընտրութիւններն էլ կարող են դառնալ հասարակական անվստահութեան եւ լարուածութեան առարկայ, բայց ոչ թէ կուտակուած խնդիրների հանգուցալուծում»:*

*«Փորձը ցոյց է տուել, որ ընտրութիւնից ընտրութիւն ընտրական համակարգում ներգրաուած կեղծարարների թիւը շատ աւելի է մեծանում, ամբողջ հասարակութիւնը ներքաշւում է այդ կեղծիքի մէջ, որը բերում է հասարակութեան արատների աւելացմանը: Եթէ ընտրութիւնները չկազմակերպուեն ազատ եւ արդար, ապա աւելի լաւ է նման ընտրութիւններ չունենալ՝ արտահերթ, թէ հերթական»,- նշեց նա:*

*Սաֆարեանը վստահ է, որ իշխանութիւններն արդար ընտրութիւններ անցկացնելու քաղաքական կամք չունեն:*

## ԼԻՆԵԼ ԱՒԵԼԻ ՎՃՌԱԿԱՆ. ԿՈՉ Է ԱՆՈՒՄ ԺԻՐԱՅՐ ՍԷՖԻԼԵԱՆԸ



Ժիրայր Սէֆիլեան

*Մարտի 1-ին «Թէքէեան» կենտրոնի մեծ դահլիճում «Սարդարապատ» շարժման նախաձեռնող խումբը կազմակերպել է տարածաշրջանային խնդիրներին նուիրուած կոնֆերանս, որին մասնակցել են մտաւորականներ, քաղաքական գործիչներ, երիտասարդներ, «Սարդարապատ» շարժման համակիրներ:*

*Հաւաքի սկզբում մասնակիցները մէկ րոպէ լռութեամբ յարգել են 2008թ. մարտի 1-ի զոհերի յիշատակը:*

*Կարեւորելով օրուայ պատմական նշանակութիւնը՝ «Սարդարապատ» խմբի անդամ Ժիրայր Սէֆիլեանը շեշտել է, որ Մարտի 1-ի տասը զոհերը Հայաստանի երրորդ Հանրապետութեան անկախութեան համար զոհուած անձինք էին, եւ այսօր իրապէս վտանգուած է Հայոց պետականութիւնը, եւ հայ ժողովուրդը խնդիր ունի ստեղծելու անկախ եւ ազատ Հայաստան:*

*Այս առնչութեամբ կարծիքներ են յայտնել Մարտի 1-ին զոհուած Սամուէլ Յարութիւնեանի հայրը՝ Էդիկ Յարութիւնեանը, «Սարդարապատ» շարժման նախաձեռնող խմբի անդամներ Հայկ Բալանեանը եւ Տիգրան Խզմալեանը, ԱՍԱԼԱ-ի նախկին մարտիկ, «Մոնթէ Մելքոնեան» հիմնադրամի տնօրէն Ալեք Ենիգոմշեանը, փաստաբան Վահէ Գրիգորեանը, «Կենաց տուն» հասարակական կազմակերպութեան մշակութային կենտրոնի տնօրէն, Հայաստանի ժողովրդական վարպետ Լալա Մնջեանը, ՀՀ նախկին արտգործնախարար, նախկին քաղբանտարկեալ Ալիկ Արզումանեանը:*

*Ամփոփիչ խօսքով հանդէս է եկել Ժիրայր Սէֆիլեանը, որը ներկաներին իրազեկել է «Սարդարապատ» շարժման սկզբունքների, մօտեցումների, Հայաստանում առկայ իրավիճակը շտկելու նպատակով գործնական քայլերի մասին:*

*Հայաստանի առջեւ ծառացած նոր մարտահրաւէրները որակելով որպէս լրջագոյն վտանգներ ուղղուած ՀՀ ազգային անվտանգութեանը՝ Ժիրայր Սեֆիլեանը յորդորել է ներկաներին, շարժման բոլոր համախոհներին՝ այսուհետ էլ աւելի պատրաստակամ, վճռական կեցուածքով եւ միակամ, համատեղ գործնական քայլերով փոխել հայութեան ֆիզիկական եւ հոգեւոր գոյութեանը վտանգող իրողութիւնները:*

## ԳԱԳԻԿ ՇԱՄՇԵԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԲՌՆՈՒԹԵԱՆ ՓԱՍՏՈՎ ՔՐԷԱԿԱՆ ԳՈՐԾ Է ՅԱՐՈՒՑՈՒԵԼ



ֆոտոթղթակից Գագիկ Շամշեան

*«Չորրորդ իշխանութիւն» եւ «Առաւօտ» թերթերի ֆոտոթղթակից Գագիկ Շամշեանի նկատմամբ բռնութեան փաստով Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազ Գագիկ Խաչիկեանի որոշմամբ քրէական գործ է յարուցուել:*

*Ինչպէս «Ազատութիւն» ռադիոկայանին փոխանցեց Գագիկ Շամշեանը, գործը յարուցուել է Քրէական օրէնսգրքի 118 յօդուածով՝ «ծեծ», եւ 164 յօդուածի առաջին մասով՝ «լրագրողի մասնագիտական գործունէութեանը խոչընդոտելը կամ նրան տեղեկութիւններ տարածելուն կամ տարածելուց հրաժարուելուն հարկադրելը»:*

*Գործի քննութիւնը յանձնարարուել է Ոստիկանութեան կենտրոնի քննչական բաժնին:*

*Յիշեալ յօդուածներով սահմանուած ամենամեղմ պատիժը տուգանքն է նուազագոյն աշխատավարձի յիսնապատիկի չափով, ամենախիստը՝ երկու ամսուայ կալանք:*

*Անցեալ Չորեքշաբթի առաւօտեան դատախազութեան շէնքի առջեւ անյայտ անձը ձեռքի պայուսակով հարուածներ էր հասցրել «Չորրորդ իշխանութիւն» եւ «Առաւօտ» թերթերի ֆոտոթղթակից Գագիկ Շամշեանի դէմքին, ապա հայհոյելով մուտք գործել գլխաւոր դատախազութիւն:*

*Ֆոտոլրագրողը տեղափոխուել էր «Նայիրի» բժշկական կենտրոն, որտեղ նրա մօտ ախտորոշուել է ականջաթաղանթի արիւնազեղում?*

*Տեղի ունեցածի կապակցութեամբ գլխաւոր դատախազութեան մամուլի ծառայութիւնը Հինգշաբթի օրը հաղորդագրութիւն է տարածել, որում, մասնաւորապէս, հաւաստիացնում է, որ «դատախազութիւնը հետամուտ է լինելու միջադէպի բոլոր հանգամանքների պարզաբանմանը եւ մեղաւոր անձանց գործողութիւններին համապատասխան իրաւական գնահատական տալուն»:*

## ԼՈՒՐԵՐ

# ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆ. «ԱՅՍ ՏԱՐԻՆ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԵՏ ՄԵՐ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԸ ԴԱՌՆԱՅ ԲԵԿՈՒՄՆԱՅԻՆ»



*Սարգսեան եւ Սաակաշվիլի հանդիպումի ընթացքին*

*Վրաստան կատարած երկօրեայ մասնաւոր այցի երկրորդ օրը Սերժ Սարգսեանը Բաթումիի Սուրբ Փրկիչ հայկական եկեղեցում մասնակցել է մատուցուած կիրակնօրեայ պատարագին, մոմ վառել, այնուհետեւ ծաղիկներ դրել եկեղեցու բակում կանգնեցուած խաչքարյուշակոթողին:*

*Ինչպէս NEWS.am-ը տեղեկանում է նախագահի մամուլի ծառայութիւնից, Ս.Սարգսեանը եկեղեցու բակում շփուել է պատարագին մասնակցած Աջարիայի հայ համայնքի ներկայացուցիչների հետ:*

*Այցի աւարտին երկու պետութիւնների ղեկավարները ամփոփել են այցի արդիւնքները: Միխայէլ Սահակաշվիլին գոհունակութիւն է յայտնել ՀՀ նախագահի հետ Բաթումիում կայացած ոչ պաշտօնական հանդիպման կապակցութեամբ եւ նշել. «Մենք պայմանաւորուել ենք ինտեգրել մեր տնտեսութիւնները, աւելի յաճախ շփուել, աւելի մեծ ջանքեր գործադրել մեր ժողովուրդների էլ աւելի մերձեցման ուղղութեամբ, չնայած այդ յարաբերութիւններն ինքնին շատ սերտ են: Ապագայում նման հանդիպումներն աւելի ինտենսիւ բնոյթ կունենան՝ յանուն այն ամէնի, ինչ մենք անում ենք մեր ժողովուրդների համար: Մենք փոքր երկրներ ենք եւ անհրաժեշտ ենք մէկս միւսին: Մենք կախուած ենք միմեանցից եւ այդ փոխկախուածութիւնը պէտք է ծառայեցնենք լաւ գործեր կատարելուն»:*

*Սերժ Սարգսեանը, իր հերթին, գոհունակութիւն յայտնելով իր վրացի գործընկերոջ հետ ունեցած քննարկումներից, նշել է. «Մենք պէտք է աւելի սերտօրէն աշխատենք, շատ լրջօրէն մտածենք ինտեգրացիոն գործընթացների մասին: Ես համոզուած եմ, որ այս տարին մեր յարաբերութիւնների համար կը դառնայ բեկումնային, չնայած այդ յարաբերութիւնները միշտ էլ լաւ են եղել ու հիմա էլ դրանք շատ լաւ են: Բայց մենք սովոր ենք ոչ թէ տեղում կանգնած չմնալ, այլ առաջ գնալ»:*

# ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՇՏԵՑՈՒՄԸ ԲԱՒԱՐԱՐ ՉԷ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ

*Թուրքիայի արտաքին գործերի նախարար Ահմէթ Դավութօղլուն կարծիք է յայտնել, որ Լեռնային Ղարաբաղի հակամարտութիւնը խոչընդոտ է Ատրպէյճանի եւ Հարաւային Կովկասի կողմից այդքան կարեւոր ներուժի՝ տնտեսութեան, մարդկային կապիտալի եւ բնական ռեսուրսների օգտագործման համար:*

*Ահմէթ Դավութօղլուն կարծում է, որ բանակցութիւնների արդիւնքում Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահներ Սերժ Սարգսեանի եւ Իլհամ Ալիեւի միջեւ ձեռք բերուած առաջընթացը շատ կարեւոր է հակամարտութեան կարգաւորման համար, քանի որ, ըստ Թուրքիայի ԱԳՆ ղեկավարի, մեխանիզմը, որը մշակել է ԵԱՀԿ Մինսկի խումբը, դեռեւս էական եւ յստակ արդիւնքների չի բերել:*

*Միեւնոյն ժամանակ, Ահմէթ Դավութօղլուն նշել է, որ Թուրքիան դեռ յոյս ունի, որ մի օր իրեն կը յաջողուի վերականգնել յարաբերութիւնները Հայաստանի հետ, որը, ըստ Թուրքիայի ԱԳՆ ղեկավարի, այն ամբողջական պատկերի պակասող օղակն է, որը Անկարան կը ցանկանար տեսնել Հարաւային Կովկասում:*

*Անդրադառնալով հայ-թուրքական Արձանագրութիւններին՝ Դավութօղլուն նշել է, որ «դա աննախադէպ ընդառաջ քայլ էր իրաւաբանական եւ հոգեբանական պատնէշների վերացման ճանապարհին, որը մինչեւ այժմ բաժանում էր երկու հարեւան ժողովուրդներին»:*

*Սակայն, ինչպէս նշել է Թուրքիայի ԱԳՆ ղեկավարը, Երեւանի հետ բանակցութիւնների ողջ ընթացքում Թուրքիան քաջ գիտակցել է, որ հայ-թուրքական հաշտեցումը բաւարար չէ Հարաւային Կովկասում ցանկալի խաղաղութեան եւ կայունութեան հաստատման համար:*

*Այդ պատճառով, ըստ Ահմէթ Դավութօղլուի, Անքարան համոզուած է, որ Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ յարաբերութիւնների բարելաւման առաջընթացը պէտք է համալրուի յստակ քայլերով: ուղղուած ԼՂ հակամարտութեան կարգաւորմանը:*

*Դավութօղլուն եզրափակել է, որ «դրա համար կը պահանջուի քաղաքական կամք ու խիզախութիւն»:*

# ՎԵՐԻՆ ԼԱՐՍԻ ԱՆՑԱԿԷՏԸ ՎԵՐԱԲԱՑՈՒԵՑ

*Մարտ 1-ին վերաբացուել է Վրաստանի եւ Ռուսաստանի սահմանային Վերին Լարսի անցակէտը, որը փակ էր 2006-ի Յուլիսից: Այդ մասին հաղորդում է «Ռոյթէրզ» լրատուական գործակալութիւնը:*

*«Դարեալի անցակէտը, որը փակ էր մի քանի տարի, այսօր պաշտօնապէս բացուել է», - լրագրողներին ասել է տեղի ոստիկանութեան պետ Գէորգի Գեգեչկորին:*

*Աղբիւրը նշում է, որ թէեւ անցակէտը երկու կողմից էլ բացուել է, Վրաստանի ժամանակով կէսօրուայ դրութեամբ դեռ որեւէ մեքենայ սահմանը չէր հատել, քանի որ երկու երկրների քաղաքացիներից էլ միւս երկիր այցելելու համար վիզա է պահանջւում:*

*Անցակէտի վերաբացումը յատկապէս շահեկան է Ռուսաստանի դաշնակից Հայաստանի համար, քանի որ մինչեւ փակուելը այն օգտագործւում էր նաեւ Վրաստանի տարածքով դէպի Հայաստան բեռների տարանցման համար: Անցակէտի փակումից ի վեր Հայաստանի եւ Ռուսաստանի միջեւ բեռնափոխադրումները իրականացւում են Փոթի - Նովոռոսիյսկ ճանապարհով:*

*Ռուսաստանը փակել էր անցակէտը 2006 թուականին, երբ Մոսկուայի եւ Թբիլիսիի միջեւ յարաբերութիւնները սրուեցին:*

# ՄԱՐՏ 1-Ի ՍՊԱՆԴԻ ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԵԼԻՑԸ

*Շարունակուածէջ 1-էն*

*ները եւ պահանջեցին բացայայտել սպանդի մեղաւորները:*

*«Գողացող աղուէսի նման մօտեցան գաղտագողի, եւ գողացան այն, ինչ կարող էին գողանալ: Ժամանակը դեռ կը պարզի ճշմարտութիւնը: Այդ օրը դարձաւ ազատութեան, ազատութեան համար նահատակուածների օր», - իր ելոյթին մէջ ըսաւ հանրահաւաքը վարող՝ Արամ Մանուկեան:*

*Մարտ 1-ին սպաննուած Տիգրան Խաչատրեանի մայրը՝ Ալլա Խաչատրեան յայտարարեց, որ պիտի պայքարին, մինչեւ որ բացայայտուին սպանութիւններու բոլոր մեղաւորները: «Մեր որդիները ձեզ հետ միասին դուրս էին եկել փողոց՝ իրենց ձայներին տէր կանգնելու, ազատ եւ իրաւական երկիր ստեղծելու համար: Համոզուած եմ, որ մի օր կը կատարուի մեր բոլորի երազանքը», - յայտարարեց զոհուածի մայրը:*

*Հայ Ազգային Գոնկրէսի համակարգող Լեւոն Զուրաբեան անդրադարձաւ հանրահաւաքի կապակցութեամբ ոստիկանութեան ուժերու ձեռնարկած անվտանգութեան միջոցառումներուն՝ ըսելով. - «Ճանապարհային եւ տրանսպորտային շրջափակումը, որը այսօր իրականացուեց հանրահաւաքի դէմ, ռեժիմի սարսափի ամենացցուն վկայութիւնն է»:*

*Զուրաբեան յայտարարեց, որ արտահերթ նախագահական ընտրութիւններու անհրաժեշտութիւնը պայմանաւորուած է հայ-թրքական յարաբերութիւններու բարելաւման ձախողմամբ, Ղարաբաղի հարցի շուրջ բանակցութիւններուն Հայաստանի մեկուսացմամբ եւ երկրէն ներս ընկերային եւ տնտեսական ճգնաժամի խորացմամբ:*

*Լեւոն Զուրաբեան ներկայացուց Գոնկրէսի պահանջները. անյապաղ ազատ արձակել քաղաքական բանտարկեալները, վերականգնել Մարտի 1-ի սպանութիւններու հանգամանքները ուսումնասիրող մարմինը՝ միջազգային դիտորդներու մասնակցութեամբ, մինչեւ Մայիսի վերջ բարեփոխել ընտրական օրէնսգիրքը, Յունիսէն-Սեպտեմբեր ժամանակամիջոցին կազմակերպել արտահերթ ընտրութիւններ:*

*Ելոյթ ունեցան նաեւ նախկին վարչապետ Արամ Սարգսեան եւ ՀԺԿ ղեկավար Ստեփան Դեմիրճեան եւ ուրիշներ:*

*Հանրահաւաքի գլխաւոր ելոյթ ունեցողն էր Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեան: Ան իր խօսքին մէջ ըսաւ որ, եթէ նախագահական ընտրութիւնները կեղծուած չըլլային, իշխանութիւնները Մարտի 1-ին բռնութեան դիմելու կարիք չէին ունենար. - «Ժողովրդի սառնասիրտ գնդակոծումը՝ ընտրագողութեամբ նուաճուած իշխանութիւնը պահպանելու վերջին եւ միակ միջոցն էր, որից եւ, միջազգային հանրութեան անտարբերութեան շնորհիւ, չխորշեց օգտուել Հայաստանի աւազակապետական վարչախումբը:*

*Լեւոն Տէր-Պետրոսեան կանխագուշակեց ժողովրդական ըմբոստութեան կուտակուող լիցքի եւ իր ուժերէն վեր խնդիրներու ճնշման տակ՝ գործող իշխանութիւններու տապալումը:*

*Ըստ Տէր-Պետրոսեանի, Հայաստանի իշխանութիւնները «թէ՛ իրենց յանցաւոր բնոյթի, թէ՛ արհեստավարժութեան ու տարրական գրագիտութեան բացակայութեան պատճառով», ի վիճակի չեն լուծելու երկրի առջեւ կանգնած որեւէ խնդիր, կատարելու իրավիճակի բարելաւման միտուած որեւէ դրական քայլ կամ արձանագրելու թէկուզ չնչին յաջողութիւն որեւէ ոլորտի մէջ:*

*«Դրանում համոզուելու համար բաւական է յիշել, թէ ինչ են նրանք ժողովրդին տուել իրենց գոյութեան անցած երկու տարիների ընթացքում. միայն բանտ ու արիւն, ոստիկանական ու հարկային տեռոր, տնտեսական գահավիժում ու գործազրկութիւն, մանր ու միջին գործարարութեան ոչնչացում, թանկացումներ ու դրամի արժեզրկում, արտագաղթ ու կապիտալի արտահանում», - ըսաւ Տէր-Պետրոսեան:*

*Անդրադառնալով արտաքին քաղաքականութեան բնագաւառին՝ ընդդիմութեան առաջնորդը թուարկեց նաեւ այս ոլորտէն ներս իշխանութիւններու ձախողութիւնները՝ Ցեղասպանութեան ուրացում, հայ-թրքական յարաբերութիւններու կարգաւորման նուաստացուցիչ գործընթաց, Ղարաբաղի խնդրի խայտառակ հանգուցալուծման հեռանկար:*

*Տէր-Պետրոսեանի կարծիքով. - «Որքան էլ աւազակապետութիւնն իրեն ապահով զգայ եւ որքան էլ ինքնավստահ ձեւանայ, միեւնոյնն է, ժողովրդական ըմբոստութեան կուտակուող լիցքի եւ իր ուժերից վեր խնդիրների ճնշման ներքոյ, մէկ օրում փուլ է գալու, իսկ նրա առաջնորդին յօշոտելու են իր իսկ շրջապատի գիշատիչները: Մեր պարտքն է, արդ, պատրաստ լինել այդ օրուան՝ երկրի կորուստները նուազագոյնի հասցնելու եւ պետութիւնն անկառավարելի վիճակի չմատնելու համար»:*

*Ընկերային պայթունէն խուսափելու եւ զարգացումները սահմանադրական հուն տեղափոխելու որպէս միակ միջոց, Տէր-Պետրոսեան պահանջեց արտահերթ խորհրդարանական եւ նախագահական ընտրութիւններ:*

*«Գոնկրէսի հրապարակած տնտեսական վերափոխումների ծրագիրն, ըստ այդմ, կարող էք այդ ընտրութիւններին մասնակցելու եւ յաղթելու յայտ համարել», - աւելցուց Հայ Ազգային Գոնկրէսի առաջնորդը:*

*Հաւաքի աւարտին Երեւանի փողոցներուն վրայ տեղի ունեցաւ երթ, որ աւարտեցաւ հիւսիսային պողոտայի վրայ:*

# ԼՈՒՐԵՐ

## ԹՈՒՐՔԻԱՅԻ «ԷՐԳԵՆԵՔՈՆ» ԱՀԱԲԵԿՉԱԿԱՆ ԿԱՌՈՅՑԻ ԱՐՄԱՏՆԵՐԸ ԴԷՊԻ ՀԱԿԱՀԱՅԿԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՆ ՏԱՆՈՒՄ

*ԳԷՈՐԳ ՊԵՏՐՈՍԵԱՆ*

«Էրկենեքոնը» թուրքական քեմալիստական, ծայրայեղական, ազգայնական ուղղուածութեան կազմակերպութիւն է: Նրա անդամների հիմնական մասը Թուրքիայի զինուած ուժերի եւ անվտանգութեան մարմինների ներկայացուցիչներն են: Թուրքիայում համարւում է ահաբեկչական կազմակերպութիւն: Կազմակերպութեան անուանումը ծագում է Էրկենեքոն առասպելական տեղանունից: Կան բազմաթիւ առասպելներ այս տեղանուան հետ կապուած, որից կը ներկայացնենք երկուսը:

Ըստ առաջին առասպելի՝ Էրկենեքոնը, որը գտնւում է Ալթայի լեռներում, այն վայրն է, որտեղից ծնունդ է առել թուրք ժողովուրդը: Համաձայն առասպելի՝ թշնամիները կոտորում են թուրքերի մեծ մասին: Շատ քչերն են կարողանում փախչել: Վերջիններս երկար ճանապարհ անցնելուց յետոյ հասնում են լեռնային մի տեղանք, որն անտառներով էր պատուած: Լեռների արանքում մի նեղ արահետ գտնելով՝ նրանք անցնում են այդտեղով եւ հասնում պտղատու այգիներով, ձկնառատ լճակներով, փարթամ անտառներով պատուած մի դրախտային տեղանքի: Նորաբնակները տեղանքն անուանում են Էրկենեքոն (ստուգաբանութիւնը՝ Ergene (թուրք)-լեռնանցք, kon(թուրք)-գառիթափ):

Շուրջ չորս դար նրանք այստեղ են ապրում՝ աշխարհից մեկուսացած, մինչեւ որ բազմանում են այնքան, որ իրենց եւ իրենց պահած անասունների պահանջներին Էրկենեքոնն այլեւս չի բաւարարում: Սակայն արահետը, որով նրանց նախնիները հասել էին այստեղ, փակուած է լինում: Մի դարբին յայտնում է, որ լեռներից մէկը երկաթից է, եւ եթէ ջերմութիւն ստանան եւ հալեցնեն այն, լերան արանքով դուցէ ճամբայ բացուի: Այդպէս էլ վարւում են: Լերան երկաթեայ հատուածում մեծ խարոյկ են վառում: Երկաթը հալւում է, եւ առաջանում է մի նեղ արահետ, որով կարող էին անցնել բեռներ տեղափոխող ուղտերը: Էրկենեքոնի թիւրքերը, ուժերը կենտրոնացնելով, վերադառնում են հայրենիք եւ լուծում նախնիների վրէժը:

Ըստ երկրորդ առասպելի՝ թշնամիները թուրքերին ամբողջովին կոտորում են եւ փրկւում է միայն մէկ երեխայ, որին խնամում է Ասենա անունով մայր գայլը: Ասենան մանկանը տանում է Էրգենքոն տեղանքը, որտեղ նա մեծանում է եւ սերունդ տալիս: Սերունդներն այնքան են շատանում, որ Էրկենեքոնն այլեւս չի կարողանում բաւարարել անընդհատ աճող բնակչութեան կարիքները, եւ վերջիններս որոշում են լքել երկաթէ լեռներով շրջապատուած տեղանքը: Ասենա մայր գայլը նրանց օգնում է եւ ցոյց է տալիս ճանապարհը:

Սա է Էրկենեքոն անուան ստուգաբանութիւնը, իսկ այժմ անդրադառնանք «Էրկենեքոն» կազմակերպութեան գործունէութեանը եւ նպատակներին:

«Էրկենեքոնի» նպատակը Թուրքիան որպէս աշխարհիկ երկիր պահելն է, ինչպէս նաեւ նրա լրիւ ինքնիշխանութիւնը եւ ծայրայեղ ազգայնականութիւնը:

«Էրկենեքոն» անունն առաջին անգամ շօշափուեց Սուսուրլուքի սկանդալից յետոյ: 1996 թուականի Նոյեմբերի 3-ին Սուսուրլուք քաղաքի մօտակայքում վթարի ենթարկուած մեքենայում էին Ստամբուլ փոխոստիկանապետը, մի քուրդ պատգամաւոր եւ «Գորշ գայլեր» ծայրայեղական կազմակերպութեան առաջնորդը, ով գտնւում էր հետախուզութեան մէջ: Մեքենայում մեծ քանակութեամբ գումար եւ զէնքեր յայտնաբերուեցին: Այս ամէնն ի ցոյց դրեց այն փաստը, որ իշխանութեան տարբեր շերտերը համագործակցում են քրէական հեղինակութիւնների հետ:

Առաջին անգամ «Էրկենեքոնի» մասին խօսել է Թոշակի անցած ծովային ուժերի սպա Էրոլ Միւթեջիմլերը 1997 թուականին: Նա մասնաւորապէս ասել է, որ կազմակերպութիւնը գործում է ստուերում, նրա անդամներ են բազմաթիւ սպաներ, լրագրողներ, գործարարներ, ինչպէս նաեւ յաւելել է, որ «Էրկենեքոնը» յանցաւոր խումբ չէ, այլ մի մեծ կազմաւորման մասն է: Ըստ Միւթեջիմլերի՝ կազմակերպութեան անդամ է եղել նաեւ Ալփարսլան Թիւրքեշը:

«Էրկենեքոնի» գործով դատավարութիւնը պաշտօնապէս սկսուեց 2007 թուականին, չնայած արդէն 2001 թուականին Թունջայ Գիւնէյ անունով անվտանգութեան աշխատակցի մանր յանցանք գործելու պատճառով ձերբակալման արդիւնքում «Էրկենեքոնի» վերաբերեալ մանրամասներ ի յայտ եկան: Դրա արդիւնքում Թուրքիայի Ազգային հետախուզական ծառայութիւնը (MIT) փաստօրէն տեղեակ դարձաւ ցանցի գոյութեան մասին: Սակայն դատարանն անմիջապէս, կասկածելի հանգամանքներում, փակեց գործը: 2006 թուականին եւս մէկ ցուցմունք տրուեց: Թմրանիւթերի վաճառքով զբաղուող յանցախմբի առաջնորդ Էնգին Բաղբարը մօտ տասը ժամ տեւած ցուցմունքի ժամանակ նշեց, որ նիւթական օժանդակութիւն է տրամադրում «Էրկենեքոն» անունով մի կազմակերպութեան: Պաշտօնական քննութիւնն սկսուեց միայն այն բանից յետոյ, երբ Տրապիզոնի ոստիկանութիւնն անանուն մի զանգ ստացաւ, որով նշւում էր, որ Ումրիյեում (Թաղամաս Ստամբուլում) պահւում են մեծ քանակութեամբ ձեռքի նռնակներ: Ոստիկանութիւնն անմիջապէս արձագանքեց եւ նշուած հասցէում գտաւ 27 ձեռքի նռնակ: Յետագայ հետաքննութեան արդիւնքում յայտնաբերուեց նաեւ մի փաստաթուղթ, որում պլանների մասին էր գրուած:

«Էրկենեքոնի» դատավարութիւնը սկսուեց 2008 թուականի Հոկտեմբերի 20-ին:

Գործը քննում է Ստամբուլի ծանր յանցագործութիւնների գծով դատարանը: Այն անուանուեց նռնակների եւ փաստաթղթի յայտնաբերման վայրի անունով Ումրիյէ կամ պաշտօնական՝ 2007/1536:

Շար.ը էջ 19

## ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅԵՐՈՒ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԿՈՉԸ ՄԱՐՏ 1-Ի ԵՐԿՐՈՐԴ ԱՄԵԱԿԻ ԿԱՊԱԿՑՈՒԹԵԱՄԲ

*Սիրելի հայրենակիցներ,*

*Ժողովրդի վստահութիւնը վայելող իշխանութեան ձեւաւորումը ազգային անվտանգութեան խնդիր է: Ազգային անվտանգութեան կենսագործունէութեան սոցիալ-տնտեսական, հոգեւոր-հոգեբանական եւ մարդու հիմնարար իրաւունքներու նշանակութիւնն առաջնային խնդիր է. փորձել այն ամփոփել ռազմա-քաղաքականով, անտեսել անոնց փոխկապուածութիւնը՝ բացարձակ անհեթեթութիւն է:*

*Հայկական պետականութեան հզօրացման հիմնական գրաւականը ժողովուրդն է. պետական շահն ազգային շահի արտայայտումն է: Անցեալի ընդհանուր փառքը, ներկայի ընդհանուր ձեռքբերումները, ապագայի նոր նուաճումներու ձգտման հիմքը ժողովուրդի տարիներու ճիգի եւ զոհողութիւններու արդիւնքն են:*

*Հզօր է այն ամբողջականութիւնը, որ ունակ է միաւորելու բազմազան միաւորներ: Հզօրութիւնը կը կայանայ բազմազանութիւններու ներդաշնակութեան մէջ:*

*Արդէն վաղուց հասարակութիւնները բնութեան օրէնքներով չեն առաջնորդուիր, այլ կը պայքարին այդ օրէնքներու դէմ: Մերօրեայ զարգացող հասարակութիւններու կեանքին մէջ տկարը ո՛չ միայն չի ոտնահարուիր զօրաւորին կողմէ, այլ ընդհակառակը՝ կը պաշտպանուի անկէ: Եւ այսպէս ցանկացած երկրի մէջ, ազատութեան դէմ սպառնալիքը կը կայանայ պետութեան տկարութեան հետեւանք: Կը սահմանափակեն ազատութիւնները, երբ իշխանութիւնը վտանգ կը զգայ:*

*Ինչպէս 1999 թ. Հոկտեմբերի 27-ը, նոյնպէս եւ 2008 թ. Մարտի 1-ը, եկաւ կոտրելու մեր ժողովուրդի կամքն ու ոգին: Մարտի 1-ով, մանաւանդ, մեծ հիասթափութիւն ապրեցաւ սփիւռքահայ երիտասարդ սերունդը, իր նորանկախ եւ երանելի երկրի մէջ ականատես դառնալով մասսայական ցոյցի դէմ աներեւակայելի դաժանութեան եւ սպանդի:*

*Հայաստանի Հանրապետութեան մէջ ձեւաւորուած քաղաքական-տնտեսական համակարգերն իրենց ներքին տրամաբանութեամբ, ինչպէս նաեւ նախագահական ընտրութիւններու մէջ յաջորդած մարտիմէկեան իրադարձութիւնները հիմք կու տան արտայայտել ԵՀՀ-ի՝ միջազգային եւ, առաջին հերթին, եւրոպական մասշտաբով ՀՀ պետականութեան, Արցախի, Ջաւախքահայութեան եւ սփիւռքահայութեան իրաւունքները անվերապահօրէն պաշտպանող կազմակերպութեան մտորումներն ու տեսակէտները՝ ձեռնարկուելիք անյապաղ քայլերու անհրաժեշտութեան վերաբերեալ:*

*. Հրամայական պահանջ է երկրին մէջ հաստատել իրական եւ ոչ թէ ձեւական համերաշխութեան եւ փոխհանդուրժողութեան մթնոլորտ: Ապաքաղաքականացնել ոչ մէկ դատավարութիւն եւ ազատ արձակել քաղաքական դրդապատճառներով ձերբակալուած ու դատի ենթարկուած բոլոր ձերբակալուածները: Ձեռնարկել միջոցներ, որոնք ի սպառ կը բացառեն հետագային նման իրադարձութիւններու կրկնութիւնը.*

*. Երկրին մէջ հաստատել օրէնքի գերակայութիւն*

*. Մշակել եւ ներդնել սոցիալական արդարութեան հաստատման ռազմավարական ծրագիր*

*. Վերացնել տնտեսական ոլորտի արտօնութիւնները, ապահովել ազատ, արդար եւ ազնիւ մրցակցութիւն*

*. Ապահովել ՀՀ-ի Սահմանադրութեան պահանջները եւ տարանջատել օրէնսդիր, գործադիր եւ դատաիրաւական համակարգերու գործունէութիւնը*

*. Անցկացնել թափանցիկ եւ արդար ընտրութիւններ՝ ապահովելով արժանապատիւ եւ բանիմաց քաղաքացիներու մուտքն Ազգային Ժողով եւ տեղական ինքնակառավարման մարմիններ*

*. Կիրառել նոր, արդիական մօտեցումներ երկրի տնտեսական եւ ներքին արդիւնաբերութեան զարգացման համար, ապահովել նաեւ արտաքին ներդրումային ծրագրերի ապահովածութիւն՝ այլեւայլ բիւրոկրատական, կրիմինալ եւ օլիգարխիկ-մոնոպոլ խոչնդոտներէն*

*. Ապահովել պետականութեան ամրապնդման եւ հզօրացման համար ներդրում ունեցող քաղաքացիներու բարեկեցիկ եւ իմաստալից կեանք*

*Հարկ կը համարենք նշել, որ հայ ազգի պետական մտածողութեան ընդունակութիւնը, ըլլալով ինքնաբուխ եւ դիմագծօրէն ազգային, իր կայացման բոլոր փուլերով բաւարար չեղաւ քաղաքական աշխարհին մէջ ապահովելու երկրի տարածքային եւ պետական ամբողջականութիւն: Հրամայական պահանջ դարձած է 21-րդ դարու քաղաքակրթութեան շեմին ըլլալ խոհեմ, իմաստուն եւ միասնական ջանքերով դիմակայել մերօրեայ մարտահրաւէրներուն:*

*Ըլլելով վերոնշեալէն կոչ կ՚ընենք համայն հայութեանը, անկախ իրենց զբաղեցուցած դիրքէն եւ ֆինանսա-տնտեսական վիճակէն, ձեռնամուխ ըլլալ վերոնշեալ գործընթացներու իրականացման օժանդակմանը՝ յանուն անխոցելի ազգային միասնութեան, ժողովրդի ազատ ու երջանիկ կեանքի ապահովման եւ հայոց պետականութեան հզօրացման եւ յարատեւման:*

## ՀԱԽ ԿԸ ԶՕՐԱԿՑԻ ՏԷՆԻ ԹԱՐՔԱՆԵԱՆԻ

*Շարունակուած էջ 1-էն*

վար՝ Դեմոկրատ կուսակցութեան անդամ Հէրրի Ռիտի դէմ:

Փետրուար 24-ի Թարքանեանի Լաս Վէկասի գրասենեակէն ներս Հայ Ամերիկեան Խորհուրդի Նեվատայի ներկայացուցչները հանդիպում մը ունենալով թեկնածուին հետ, զօրակցութեան որոշումը փոխանցեցին անոր:

ՀԱԽ-ի ներկայացուցիչներ՝ Ժիրայր Կէտէրեան եւ Արսէն Տէր-Պետրոսեան հանդիպումի աւարտին իրենց գոհունակութիւնը յայտնեցին, որ ամերիկահայ մը կը ներկայանայ որպէս առաջատար թեկնածու եւ մեծ յոյս ունի դառնալու ամերիկեան Ծերակոյտի առաջին հայ անդամը:

**ՎԵՐԼՈՒԾՈՒԹԻՒՆ**

# ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ «ՕՂԱԿ» (ԿՈԼՑՕ) ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՆ ԵՒ 2008 Թ.-Ի ՄԱՐՏԻ 1-Ի ԻՐԱԴԱՐՁՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

*ԱՐՄԻՆԷ ՂԱԶԱՐԵԱՆ*
*Ռազմավարական եւ ազգային հետազօտութիւնների հայկական կենտրոնի փորձագէտ*

*Հոգեբանական պատերազմը յատուկ կազմակերպուած եւ մասնագիտօրէն իրականացուող ազդեցութիւնն է հակառակորդի գիտակցութեան, զգացմունքների եւ կամքի վրայ՝ քաղաքական նպատակների հասնելու համար: 20-րդ դարի ընթացքում հոգեբանական պատերազմի նշանակութիւնն ու ծաւալներն աճել են: Ներկայումս այն դարձել է երկրների, կուսակցութիւնների, ինչպէս նաեւ երկրի ներսում կրօնաէթնիկական եւ սոցիալ-տնտեսական խմբերի միջեւ պայքարի ամենաարդիւնաւէտ միջոցը[1]: Հոգեբանական պատերազմի ներազդեցութեան ձեւերը բազմազան են: Զարգացմանը զուգընթաց կատարելագործւում են նաեւ հոգեբանական ներազդեցութեան մեխանիզմները, որոնք կիրառւում են բարոյա-քաղաքական միասնութիւնը խախտելու համար:*

*Քաղաքականութեան էութիւնը՝ պայքարն է իշխանութեան համար: Իշխանութեան համար պայքարը, իշխելու եւ ենթարկուելու յարաբերութիւնների շարժընթացն անկասկած վերաբերում է հասարակական-հոգեբանական երեւոյթների ոլորտին, քանզի միշտ ուղեկցւում է մարդկանց՝ միմեանց վրայ տարբեր հոգեբանական ազդեցութիւններ ունենալու համար:*

*Հոգեբանական ազդեցութիւնը մարդկանց (անհատի եւ խմբի) վրայ ազդեցութիւնն է, որն իրականացւում է նրանց գիտակցութեան եւ ենթագիտակցութեան գաղափարական եւ հոգեբանական կառուցուածքային փոփոխութեան նպատակներով, յուզական վիճակների փոխակերպումով, վարքի որոշակի ձեւերի խթանմամբ եւ նոր ձեւերի առաջացմամբ:*

*«1991թ. Մարտի 17-ին Խորհրդային Միութեան հանրապետութիւններում անցկացուեց Նոր Պայմանագրով ԽՍՀՄ-ը պահպանելու մասին հանրաքուէ, որին Ատրպէյճանը մասնակցեց եւ «այո» ասաց, մինչդեռ Հայաստանը 6 երկրներից մէկն էր, որ պոյքոտեց այն: Փոխարէնը՝ Հայաստանը Սեպտեմբերին յայտարարեց Անկախութեան հանրաքուէ անցկացնելու մասին: Ի պատասխան դրան՝ նախկին ԽՍՀՄ եւ ատրպէյճանական կենտրոնները Ատրպէյճանի հայաբնակ վայրերում սկսեցին, այսպէս կոչուած, «անձնագրային ռեժիմի ստուգումները»՝ «Օղակ»/ «Կոլցօ» գործողութիւնը: Այսպիսով՝ 1991թ. Ապրիլից մինչեւ Նոյեմբեր Լեռնային Ղարաբաղում խորհրդային 4-րդ բանակի եւ Ատրպէյճանի ՆԳՆ ՄՀՕՋ-ի ստորաբաժանումների համատեղ ուժերով իրականացուեց «Օղակ» պատժիչ գործողութիւնը: Բռնի տեղահանութեան ենթարկուեց Լեռնային Ղարաբաղի Շուշիի, Մարտակերտի, Հադրութի շրջանների, Շահումեանի շրջանի եւ Գետաշէնի ենթաշրջանի բնակչութիւնը: Տասնեակ գիւղեր աւերակներ դարձան եւ հարիւրաւոր հայեր սպանուեցին»:[2]*

*Կատարուածը յայտնի իրադարձութիւն է: Սակայն, կայ մէկ այլ ուշագրաւ փաստ. «Օղակ» գործողութիւնից առաջ (ընթացքում, նաեւ յետոյ) Խորհրդային լրատուամիջոցները սկսել էին հոգեբանական պատերազմ, գրոհ՝ անկախացման (ինքնորոշման) իրաւունքն օգտագործող ցանկացող ժողովրդին անուանելով «էքստրեմիստներ» (գրոհայիններ), «անջատողականներ»: Այստեղ, հոգեբանական գրոհի էութիւնը մարտավարութեան եւ հոգեբանական պաշտպանական մեխանիզմների տեսակէտից բաւականին պարզ է՝ պէտք է արժեզրկել այն, ինչը պէտք է ոչնչացուի, քանզի ագրեսորի կողմից պէտք է «պատճառաբանուած» լինի իր վարքը: Առհասարակ, «դահիճը» կարիք ունի հրէշացնելու (կայ նաեւ հակադարձ հոգեբանական ֆենոմենը՝ ստորացնելու) իր զոհին, հարկադրելու նրան որեւէ արարք գործելու, որը մօտ լինի իր կատարածին, քանզի հէնց այդ է միակ արդարացումը, որ նա կարող է գտնել. կամ էլ, մարտավարութեամբ «դահիճին քարոզւում է» «զոհի» վտանգաւոր, հրէշաւոր լինելը: Ամէն դէպքում պէտք է «աղաւաղել»՝ արժեզրկել կամ ուռճացնել «օբյեկտը», որպէսզի հոգեբանօրէն հնարաւոր լինի ուժ կիրառել:*

*Հոգեբանական պատերազմում ազդեցութեան արդիւնաւէտութիւնը կախուած է համոզմունքների, կարծրատիպերի եւ դիրքորոշումների մեխանիզմների փոխակերպումից, այսինքն՝ կարելի է ասել նաեւ խորհրդանիշների փոխակերպումից: Դրանք հիմնականում ստեղծւում եւ ամրապնդւում են զանգուածային լրատուամիջոցների օգնութեամբ: Սակայն, նոյն այդ ստեղծուած «յատուկ առաքելութիւն» հետապնդող կարծրատիպերից զերծ չի մնում նաեւ քաղաքական ընտրանին, որն ակտիւօրէն մասնակցել է դրանց ստեղծմանը: Ցանկացած երեւոյթ իր նկատմամբ ենթադրում է տարբեր մօտեցումներ, ծայրահեղ վերաբերմունքներ, յուզական յագեցուածութեամբ տարբեր բեւեռներ. «Օղակ» գործողութեան ժամանակահատուածում հայ ժողովուրդն իր «զինուորին» կոչում էր «ազատամարտիկ», եւ նոյն երեւոյթին ուրիշը վերաբերւում էր յուզական այլ բովանդակութեամբ եւ կոչում «գրոհային»: Խորհրդային Միութեան կառավարութեան մակարդակով այս քարոզը ոչ միայն իրավիճակային՝ անմիջական ազդեցութիւն ունեցաւ, այլ նաեւ ենթագիտակցականում որոշակիօրէն «լրատւութիւն» թողեց «հայ գրոհայիններ» կերպարով: Այսպէս՝ 2008թ.-ի Յուլիսին հրապարակուած ռուսաստանեան ամենահեղինակաւոր սոցիոլոգիական ծառայութիւններից մէկի՝ մոսկովեան «Լեւադա» կենտրոնի հրապարակած հարցման արդիւնքների համաձայն (այս արդիւնքները «Լեւադա» կենտրոնի մասնագէտները ստացել են 2007 թուականին անցկացուած հետազօտութիւնների ընթացքում) հարցուածների 2%-ը հայերին ընդգրկել է Ռուսաստանի նկատմամբ թշնամաբար տրամադրուած պետութիւնների ցանկում, 2005-ին՝ 4% (հայերը տոկոսային մաս ունեն նաեւ Ռուսաստանի նկատմամբ բարեկամաբար տրամադրուած պետութիւն սանդղակում): Իհարկէ այդ վերաբերմունքի (թշնամի) հիմքում կը լինեն մի շարք պատճառներ, այդ թւում՝ ներկայումս Ռուսաստանում հայերի հետ որոշակի յարաբերութիւնների համատեքստը, Ռուսաստանում ազգայնական տրամադրութիւնների աճի միտումները, «կովկասեան ազգութեան ներկայացուցիչ» կարծրատիպը: 1990-ականներին (ետխորհրդային Ռուսաստանում) ռուսական հեռուստատեսութեամբ ցուցադրւում էին ահաբեկչութեան մասին հաղորդաշարեր, որտեղ չեչենական ահաբեկումների շարքում ցուցադրւում էին նաեւ 1976թ.-ի Մոսկուայի մետրոյի պայթիւնների հայազգի կատարողներին: Ազգի հանդէպ թէկուզեւ փոքր տոկոսային հարաբերութեամբ արտայայտուած թշնամանքի պատճառները կարելի է փնտռել տեւական քարոզուող «թշնամու կերպարի» մէջ: Վաղ ձեւաւորուած դիրքորոշումների արմատական փոփոխութիւնները հոգեբանական ազդեցութեան օգնութեամբ բաւականին դժուար են: Խնդիրն այն է, որ դիրքորոշումները ձեւաւորւում են երկար ժամանակահատուածի ընթացքում, ըստ անձի արժէքային համակարգի՝ կրում են հաստատուն բնոյթ: Դիրքորոշումները ձեւափոխելու համար անհրաժեշտ է անընդմէջ իրականացնել հոգեբանական ազդեցութիւն, օգտագործել տարբեր համոզիչ փաստարկներ, տարբեր առիթներով ամրապնդել դրանք, եւ, ժամանակ առ ժամանակ ուժեղացնել այդ փաստերի համոզիչ լինելը: «Կերպարների կարծրատիպացման օրինակներից մէկը երկրորդ աշխարհամարտի ժամանակ կոնֆլիկտային յարաբերութիւնների պայմաններում ամերիկացիների կողմից ճապոնացիների ընկալումն էր: Այն բնութագրւում է նրանով, որ ճապոնացին ամերիկացու աչքում կորցրեց իր անհատական գծերը եւ ընկալւում էր որպէս «ընդհանրական՝ ճապոնացի», այսինքն՝ այդ տարիների պատմական իրադարձութիւնների համատեքստում որպէս միայն թշնամի: Դա հրահրեց ամերիկացիներին համապատասխան «գործողութիւններ»[3]:*

*Խորհրդային Միութեան լրատվամիջոցների գործունէութեան նկատմամբ հայ ժողովրդի հակազդումը եղաւ այն, որ ձեւաւորուեց բացարձակ անվստահութիւն, անհաւատութիւն եւ բոյկոտ (օրինակ՝ «ԿՐՈՋՊՕ» թերթը ծաղրւում էր «ծպ ՏՐՈՋՊօ» ձեւով, բացասական վերաբերմունք կար «Ժամանակ» լրատուականի նկատմամբ, միեւնոյն ժամանակ ողջ Հայաստանը հետեւում էր դրան՝ իրազեկուելու, թէ ինչպէս է աղաւաղուած իրականութիւնը):*

*Նման իրավիճակ, սկսած «Օղակ» գործողութիւնից մինչեւ թշնամական դիրքորոշումների ու կարծրատիպերի ամրապնդում եւ լրատուական ծառայութիւնների միակողմանիութիւն, ապատեղեկատւութիւն, տեղի ունեցաւ վերջերս: 2008թ.-ի Նախագահական հետընտրական շրջանում ժողովրդի դժգոհ մեծամասնութիւնը որպէս ընդդիմութիւն դուրս եկաւ Ազատութեան հրապարակ, որին*

*Շար.ը էջ 17*

Blue Cross of California Authorized Agent
Blue Shield of California Authorized Agent
SERVING SINCE 1975
BEDROS S. MARONIAN

(818) 500-9585
BMaronian@AOL.com
FAX 500-9308 ABA INSURANCE SERVICES 805 E. Broadway . Glendale, CA 91205
A.B.A. INSURANCE SERVICES
ԵՐԲԵՔ ՈՒՇ ՉԷ ՎԵՐԱՔՆՆԵԼՈՒ ՁԵՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

# ԴՈԿՏ. ՓՐՈՖ. ԳԷՈՐԳ ԽՐԼՈԲԵԱՆԻ ԱՆՄԱՐ ՅԻՇԱՏԱԿԻՆ

*ՓՐՈՖ. ԱԻԵՏԻՍ ՓԱՓԱԶԵԱՆ*



2010 փետրուարի 6ին խոր վշտով հողին յանձնեցինք նորոգ հանգուցեալ դոկտ. փրոֆ. Գէորգ Խրլոբեանին, մարդկային բարձր արժանիքներով օժտուած առաքինի մի անձնաւորութեան, մի հայ գիտնական եւ դասախօս վաստակաշատ մտաւորականի, որի սիրտը տարիներ շարունակ մեծ նուիրումով բաբախել էր հայ ժողովրդի հոգեւոր կեանքի առաջընթացին, պատմագիտական հարցերի համապարփակ ուսումնասիրութեան, ինչպէս նաեւ իր ժողովրդի բարօրութեան եւ բարգաւաճման վեհ գործին:

Փրոֆ. Գէորգ Խրլոբեանը որդին էր կրօնա-կրթական յայտնի դէմք, Աստծոյ ծառայ, հայագէտ, ազգային-հասարակական գործիչ վերապատուելի Տիգրան Խրլոբեանի, որն իր կենդանութեան օրօք անխոնջ եւ անբասիր ծառայել էր Աստծուն, եկեղեցուն եւ իր բազմաչարչար ազգին: Այնպէս որ Գէորգ Խրլոբեանը իր ժամանակին այս բոլորը նկատի ունենալով ասել է.

«Հայրս եւ Վեհափառ Հայրապետ Վազգէն Ա.ը վճռական դեր են խաղացել իմ հոգեւոր զարգացման աճի մէջ»:

Փրոֆ. Գէորգ Խրլոբեանը իր նախնական եւ յետագայում համալսարանական ուսումնառութիւնից յետոյ, որպէս ուսուցչապետ աշխատել եւ դասախօսել է Հայաստանի եւ արտասահմանի մի շարք համալսարաններում եւ գիտական կեդրոններում: Իր երկարամեայ բազմաբեղուն գրչով անդրադարձել է հայ ժողովրդին յուզող շատ հարցերին, այդ թւում հայ փիլիսոփայութեան, ընկերաբանութեան, համաշխարհային եւ հայ մշակոյթի պատմութեան, հայ ժողովրդի ծագման պատմութեան, Արցախի ազատագրական շարժման, հայոց ցեղասպանութեան եւ վերջապէս աստուածաբանական եւ կրօնական հարցերին: Իր տքնաջան աշխատանքով ձգտել է գիտական զանազան միջոցներով ուղիներ որոնել, դրանց դրական լուծումի համար: Մի խօսքով հայագիտութեան, կրօնագիտութեան, փիլիսոփայութեան, ցեղասպանութեան եւ ընկերաբանութեան վերաբերող ախատութիւններն ամփոփուած են նրա հրատարակած 20 հատորներում եւ շուրջ 400 գիտական յօդուածներում:

Այսօր, որոշ առումով ես ինձ մխիթարուած եմ զգում, որ իր ժամանակին ըստ արժանւոյն գնահատել եմ Գէորգ Խրլոբեանի անցած կեանքի ուղին, նրա մարդկային բարձր կեցուածքն, ինչպէս նաեւ նրա երկարամեայ դասախօսական եւ պատմագիտական աշխատանքները: Նա, իրօք որ արժանի էր այդ բարձր գնահատանքին: Բերեմ մի երկու օրինակ.

Այսպէս 1999 թ. Մայիսի 16ին Կլենտէյլի Church of Brethren եկեղեցւոյ դահլիճին մէջ, Մաշտոց գոլէճի նախաձեռնութեամբ եւ յոբելեանական համագաղութային յանձնախումբի կազմակերպութեամբ տեղի ունեցաւ դոկտ. փրոֆ. Գէորգ Խրլոբեանի գիտամանկավարժական գործունէութեան յիսնամեայ յոբելեանական հանդիսութիւնը: Այդ ժամանակ ինձ բախտ վիճակուեց հիմնականում արժէքաւորելու նրա գիտական եւ մանկավարժական բարձր վաստակը:

Երկրորդը նրա վերջին ծանրակշիռ աշխատասիրութիւնն էր «Ցեղասպանագիտութիւն» խորագրով: Նշենք, որ այս ստուարածաւալ հատորի շնորհանդէսը տեղի ունեցաւ 2007 թ. Ապրիլի 18ին, Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմի Առաջնորդ Գերշ. Յովնան Արք. Տէրտէրեանի հովանաւորութեամբ, Առաջնորդարանի «Գալայճեան» սրահում:

Օրուայ գլխաւոր բանախօսը լինելով ըստ էութեան արժէքաւորեցի եւ բարձր գնահատեցի այս աշխատութիւնը եւս:

Բանը նրանում է, որ Մեծ Եղեռնի փաստը ամբողջ կեանքում հանգիստ չի տուել իրեն եւ տարիների ընթաքում հաւաքելով վերապրողների աղիողորմ վկայութիւնները, ինչպէս նաեւ տարբեր լեզուներով մի շարք երկրների արխիւներում պահուող փաստագրական նիւթերն ու մինչ այդ հրատարակուած աղբիւրագիտական հրատարակութիւնները, շարադրել է «Ցեղասպանագիտութիւն» խորագրով իր այս երկը:

Իրօք որ փրոֆ. Գէորգ Խրլոբեանի այս մեծարժէք աշխատութիւնը ծանրակշիռ ներդրում է Հայոց Ցեղասպանութիւնը միջազգային չափանիշով ճանաչելու եւ դատապարտելու խնդրում:

Ես ներկայ եմ եղել նաեւ փրոֆ. Գէորգ Խրլոբեանի նուիրուած այլ միջոցառումներին եւս, եւ հետաքրքրութեամբ ունկնդրել եմ ելոյթ ունեցողների խօսքը եւ ստացել մեծ բաւականութիւն:

1999 թ. Դեկտեմբերի 12ին առաջին անգամ լինելով ներկայ գտնուեցի Փասատինայի Հայ Աւետարանական Եղբայրներու եկեղեցիի ընկերային սրահում, ուր տեղի ունեցաւ հրապարակային դասախօսութիւն «Հայաստանն Այսօր» թեմայով: Բանախօսն էր Հայաստան-Սփիւռք համաժողովի պատուիրակ դոկտ. փրոֆ. Գէորգ Խրլոբեանը:

Մինչ դասախօսութեան սկսուելը, բանախօսի կողակիցը՝ Տիկ. Անահիտ Խրլոբեան-Սեդրակեանը դաշնամուրի վրայ նուագեց մի քանի հայրենասիրական երգեր, որ մեզ համար անակնկալ լինելով մեծ հաճոյք պատճառեց:

Այդ երեկոյ փրոֆ. Գէորգ Խրլոբեանը կանգ առաւ մեզ հետաքրքրող եւ յուզող շատ հարցերին, թէ լաւ եւ թէ վատ երեւոյթների մասին, բոլոր դէպքերում շեշտը դնելով մեր ժողովրդի աւանդական եւ ստեղծագործական լաւ արարումների վրայ:

2002 թ. հրամանաւ Մեծի Տանն Կիլիկիոյ, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի, Անթիլիասի վանքի տպարանում հրատարակուեց դոկտ. փրոֆ. Գէորգ Խրլոբեանի «Տէրունական Աղօթքի Մեկնութիւն» խորագրով աշխատասիրութիւնը (420 էջ ծաւալով):

Այս ծանրակշիռ հատորի շնորհանդէսը տեղի ունեցաւ Հոլիվուտի Ս. Կարապետ Հայց. Առաք. Մայր Եկեղեցու Կարապետեան սրահի մէջ, հովանաւորութեամբ Գերշ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի:

Ես մասնակցել եմ այս խիստ շահեկան միջոցառման եւ ստացել մեծ բաւականութիւն:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսը հատորի յառաջաբանում, ըստ արժանւոյն բարձր գնահատելով այն, նշել է, որ «Հայր Մեր»ի մասին բազմաթիւ հատորներ են գրուած օտար լեզուներով: Դոկտ. փրոֆ. Գէորգ Խրլոբեանի աշխատասիրութիւնը հայերէն առաջին համապարփակ եւ ամբողջական մեկնութիւնն է, կատարուած հայ եկեղեցւոյ աստուածաբանական մտածողութեան հայեցակէտով:

Այն էլ նշենք, որ իր կատարած բովանդակալից աշխատութիւնները, դասախօսութիւնները բարձր են գնահատուել թէ Հայաստանում եւ թէ Արտասահմանում:

Դոկտ. Փրոֆ. Գէորգ Խրլոբեանը արժանացել է բարձր շքանշանների եւ յատուկ պատուոգրերի: Այս կապակցութեամբ ես շատ տեղին պիտի մատնանշեմ հայ մեծ բանաստեղծ Յովհաննէս Թումանեանի հանրայայտ բանաստեղծութեան հետեւեալ իմաստուն խօսքը.

«Գործն է անմահ, լաւ իմացէ՛ք,
որ խօսւում է դարէ դար,
երնէկ նրան, որ գործով,
կ'ապրի անվերջ անդադար:

Այո՛, Գէորգ Խրլոբեանը իր պատմագիտական մեծ ժառանգութեամբ պիտի ապրի անվերջ, անդադար:

Թող, որ Աստծոյ լոյսը միշտ վառ մնայ նրա շիրիմին:

# ԲԱՑ ՆԱՄԱԿ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

*ՊԵՏՐՈՍ ԱԼԱՀԱՅՏՈՅԵԱՆ*

Համայն հայութիւնը անխառն ցնծութեամբ դիմաւորեց 2009ի Հայկական Հիմնադրամի (Լոս Անճելէս) 16միլիոն տոլլարէ աւելի գոյացումը որ պիտի յատկացուի առաւելաբար կամ ամբողջութեամբ Շուշիի վերակառուցման:

Համայն հայութիւնը պիտի տրտմի եւ ափսոսայ երբ իմանայ որ Շուշիի դպրութեան գոհարը եղող Դանիէլ Ղազարեանի (1883-1958) անուան երաժշտական-ակադեմական համալիր դպրոցին նոյնիսկ 100.000 մը չէ յատկացուած:

Շուշին, Արցախի սիրտը, ունեցած է մշակութային փառաւոր անցեալ, մանաւանդ ԺԹրդ դարու 20ական թուականներէն մինչեւ Մարտ 23, 1920, երբ թրքազերի խուժանը քաղաքը հրոյ ճարակ ըրաւ, մինչ նոյն այդ 1920 տարին Ստալինը Արցախը կը յանձնէր Ազրպայճանին: Այսօր, թէեւ Շուշին եւ Արցախը վերագտած են իրենց հայկական դիմագիծը, բայց աւերի ու քանդումի հետքերը կը շարունակեն մեզ յիշեցնել Վիքտոր Հիւկոյին պատմական խօսքը՝ «Թուրքերը անցած են այդտեղէրէն»:

Շուշիի մշակութային անցեալը մտաւեւեռումը եղած է արժանաւոր հայ քանի մը մտաւորականներու, որոնք գրագէտ Մուրացանի, պատմագէտ Լէոյի, երգահան Դանիէլ Ղազարեանի ծննդավայրը վերածաղկած տեսնելու տենչալով ձեռնարկեցին կառուցողական վեհ գործի: Այդ մեծ իտէալով սնուած մտաւորական երաժիշտ, երգիչ եւ գեղանկարիչ Կարէն Ղարիպեան 1993ին այցելելէ ետք Շուշի, ի տես անոր աւերակներուն, կ'ուխտէ ի գին ամէն զոհողութեան, հիմնել երաժշտանոց-ուսումնարան: Առ այդ, կը կազմէ իր նման յուսալքութիւն չճանչցող տղաներով կոմիտէ մը որուն նպատակն էր վերականգնել Շուշիի հին փառքը, սկսելով անոր փոքրիկներուն մատակարարել երգ-երաժշտութիւն-արուեստ-դպրութիւն:

Շուշիի քաղաքապետը կը յօժարի Կարէնի եւ, իր նման յանդուգն, Արա Եահինեանի գլխաւորութեամբ այս խումբին տրամադրել կիսափուլ 3 կառոյցներ: Գլխաւոր կառոյցը կրնար ունենալ 34 դասարաններ, մէկ համերգասրահ եւ յարակից յարմարութիւններ: Միւս երկու կառոյցները պիտի ծառայէին պատսպարելու 200է ոչ պակաս գիշերօթիկներ: Ղարիպեանի այցելութենէն երկու տարի ետք, 1995ին, ծայր կ'առնեն սկզբնական պատրաստութիւնները «անծայրածիր եւ ամէն ինչ պակսող դժուարութիւններով», կը պատմէ Ղարիպեան: «Հայաստանի հետ միակ կապը հանդիսացող Լաչինի ճամբան գործնականապէս բանի չէր նմանէր եւ յարատեւ ռմբահարման ենթակայ էր. ելեքտրականութիւն չկար, վառելանիւթը՝ հազուագիւտ եւ չափազանց թանկ: Քաղաքը կը գտնուէր բարձունքի վրայ: Մեր տրամադրութեան տակ ունէինք միայն մէկ փոխադրակառք եւ բեռնաբարձ մեքենայ մը: Մեր առաջին գործը եղաւ Հայաստանէն բերել կրափոխիչ 4 բեռնակառք լեցուն: Այդ օրերուն Երեւանէն դէպի Շուշի 10 ժամ կը տեւէր, սակայն բեռնակառքերուն երեք հասր ամբողջ երեք օր յաւակցուցին մինչեւ Շուշի, իսկ չորրորդը աւելի

Շար.ը էջ 17



## ԳԱՂՈՒԹԱՅԻՆ

# ՔԱԼԻՖՈՐՆԻՈՅ ՄԱՐԱՇԻ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ ՎԵՐԱՆՈՐՈԳԵՑ ԻՐ ՈՒԽՏԸ ՀԱՆԴԷՊ ՄԱՐԱՇԻ ԱՂԷՏԻ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒՆ

**ՏՕՔԹ. Ա. ԳԱՋԱՆՃԵԱՆ**

*Իրենց ներկայացուած ձեւ ու բովանդակութեան մէջ, իւրայատուկ էր Մարաշի Հայրենակցական Միութեան կիրակի 21 Փետրուար 2010ին կազմակերպած հոգեհանգստ-*

*կորուստները եւ պատգամեց հաղորդուիլ Նահատակ հերոսներուն ոգիով եւ յարգանքով վերանորոգել Մարաշի Հայրենակցական Միութեան բարգաւաճման ծառայելու իրենց ուխտը:*

*Նահատակներուն հոգիներուն*



Մարաշի ջարդերէն վերապրող 101 տարեկան Պարգեւ Պաղտիկեան

*եան արարողութիւններն ու անոնց յաւարտէն ետք, համանուն միութեան Աստուրեան Սրահէն ներս մատուցած հոգեճաշը, որոնք նուիրուած էին Մարաշի Աղէտի Նահատակներուն 90րդ Տարելիցին:*

*Արդարեւ, Հոգեհանգստեան արարողութիւններ կատարուեցան Փասատենայի Հայաստանեայց Առաքելական Սրբ. Գրիգոր Լուսաւորիչ, Փասատենայի Հայաստանեայց Առաքելական Սրբ. Սարգիս, Կլենտէյլի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայ Կաթողիկէ եւ Փասատենայի Կիլիկիա Հայ Աւետարանական հայաստանեայց եկեղեցիներու մէջ:*

*Յաւարտ եկեղեցական արարողութիւններուն՝ մատուցուած հոգեճաշին մեծ էր թիւը մարաշցիներուն*



Բանախօս Փրոֆ. Կարօ Մոմճեան

*եւ հիւրերուն: Անոնք եկած էին իրենց յարգանքի անխառն տուրքը մատուցելու Մարաշի Աղէտի հերոսական նահատակներուն , որոնք մարտիրոսացած էին, ինչպէս պիտի բնութագրէր Միութեան Տիկնաց Օժանդակ Մարմնի ներկայացուցչուհի, շնորհալի հանդիսավարուհին, Տիկ. Սիլվա Սեմերճեան՝ ..«վասն Յիսուսի եւ վասն հայրենեաց նշանաբանով»: Ան ներկայ մարաշցիներուն եւ հիւրերուն ուղղուած իր աւուր պատշաճի բարի գալուստի սահմաններու մէջ, նաեւ նկարագրեց Մարաշի Ջարդի պատճառած նիւթական, ֆիզիքական, ազգային եւ մշակութային ահաւոր*

*համար տեղի ունեցաւ մոմավառութիւն, որուն իրենց մասնակցութիւնը բերին ինը հայրենակիցներ: Ուշադրութիւն գրաւեց փոքրիկն Նարեկ Սեմերճեան, որ հանդիսացաւ առաջին մոմավարը, երեւոյթ՝ որ ցոյց կուտար համանուն միութեան գոյատեւելու վճռականութիւնը:*

*Բեմ հրաւիրուեցաւ օրուան բանախօս Փրոֆ. Կարօ Մոմճեան: Ան պարզ ու դիպուկ կերպով, նկարագ-*



Օրուան առաջին մոմավար՝ փոքրիկն Նարեկ

*րեց Մարաշի ողբերգութեան պայմանները: Ան շեշտը դրաւ Ֆրանսայի խաբուսիկ այլ, դաւադիր քաղաքականութեան վրայ, որ իր երեք ամսուայ ձեւական հոգատարութենէ ետք, իր զօրքերը հաւաքեց եւ հեռացաւ Կիլիկիայէն, Մարաշը թողլքելով իր վախճանական ողբերգութեան, որուն 90..րդ տարելիցը կը նշուի այսօր հոս:*

*Յարգելի դասախօսը, իբրեւ ուխտաւոր՝ Մարաշ այցելած ըլլալով, կատարած էր նկարահանումներ, որոնցմով իր պատրաստած տեսայ-հոլովակներու միջոցաւ ներկայացուց քաղաքէն համայնապատկերներ, փողոցներ, հայերու եւ թուրքերու պատկանող բնակարաններ, ամայացած թաղամասեր եւ այլ*

Շար.ը էջ 18

# UCLA-Ի ՍԵՄԻՆԱՐԸ ՓՈՔՐ ԱՍԻՈՅ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂՈՒԹՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ




*Յառաջիկայ Մարտի 20ին, 2010, ժամը 9:30-5:30, UCLA համալսարանի Rolfe Hall սրահին մէջ տեղի պիտի ունենայ սեմինար մը նուիրուած փոքր Ասիոյ հայկական գաղութներուն (Ատաբազար, Պուրսա, Պանտրմա, Քէօթահիա եւ Գոնիա):*

*Սոյն միջոցառումը կը հովանաւորուի Հայ Կրթական Հիմնարկութեան արդի հայոց պատմութեան ամբիոնի կողմէ կազմակերպութեամբ փորֆ. Ռիչըրտ Յովհաննիսեանի:*

*Ելոյթ ունեցողներու շարքին կը գտնուին Օսման Քօքէր (Իսթանպուլ), փրոֆ. Ռիչըրտ Յովհաննիսեան, փրոֆ. Փիթըր Քաուի, (UCLA), Տան Մագքին (Լոս Անճելըս), Արա Մելգոնեան (Լոնտոն), Դոկտ. Պարպարա Մէրկէրեան (Պոսթոն), Դոկտ. Յասմիկ Խալաբեան (Երեւան), Դոկտ. Արփի Վարդումեան (Երեւանի մատենադարան) եւ փրոֆ. Սիմոն Փայասլեան (Պոսթոն):*

# ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍ «ՀԱՅԵՐԸ ԹՈՒՐՔԻՈՅ ՄԷՋ 100 ՏԱՐԻ ԱՌԱՋ»

*Իսթանպուլի ծանօթ հրատարակիչներէն՝ Օսման Քօքէր պատմավաւերագրական ցուցահանդէս մը պիտի սարքէ Կլենտէյլի հանրային գրադարանին մէջ, յառաջիկայ Հինգշաբթի Մարտի 12ին, կէսօրէ ետք ժամը 7ին:*

*Ցուցահանդէսը կը ծանօթացնէր հայերու կեանքը Օսմանեան կայսրութեան շրջանին 1900-1910:*

*1914ի Առաջին Համաշխարհային պատերազմէն առաջ հայերուն թիւն էր 4.1 միլիոն, որուն 2.1 միլիոնը տարածուած էր օսմանեան կայսրութեան սահմաններուն մէջ: 1915-1923 շրջանին աւելի քան 1.5 միլիոն հայեր ջարդուած կամ տեղահանուած են Արեւմտեան Հայաստանի իրենց պատմական հողերէն, որուն պատճառով աշխարհի տարբեր երկիրներու կառավարութիւններն ու պատմագէտներն զայն նկատած են որպէս 20րդ դարու առաջին ցեղասպանութիւնը:*

*Վերոյիշեալ միջոցառումը կազմակերպուած է Հայագիտական Հետազօտութիւններու Ազգային Ընկերակցութեան (NAASR),*




*Պոլսահայ Միութեան եւ Արարատ-Էսքիճեան Թանգարանի կողմէ: Իսկ հովանաւորն է Կլենտէյլի Հնարային Գրադարանը:*

*Մուտքը ազատ է:*

*Հասցէն՝ 222 East Harvard Street, Glendale*

ՎԱՐՁՈՒ ՍՐԱՀ
ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ
(200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA

ՀԵՌԱՁԱՅՆԵԼ (626) 797-7680

www.massisweekly.com
Updated every Friday

# Massis Weekly

Volume 30, No. 07 — Saturday, MARCH 06, 2010

## Armenia Commemorates Second Anniversary of March 1st Killings

### "Serzh Sarkisian Will Sooner or Later Resign and Call Fresh National Elections"




YEREVAN -- Opposition leader Levon Ter-Petrosian reverted to harsh criticism of Armenia's leadership but stood by his cautious strategy of trying to topple it on Tuesday as thousands of his supporters marked the second anniversary of the 2008 post-election violence in Yerevan.

Speaking at the first major rally held by his Armenian National Congress (HAK) in over five months, Ter-Petrosian assured them that the administration of President Serzh Sarkisian will sooner or later resign and call fresh national elections. Frequent anti-government demonstrations would be counterproductive in this situation, he said.

"However safe the kleptocracy feels and however self-confident it pretends to be, it will crumble in one day under the burden of a growing

Continued on page 4

## U.S. Aerospace and Defense Industry Companies Warn Against Passage of Armenia Genocide Resolution

WASHINGTON, DC -- The U.S. aerospace and defense industry is urging House of Representatives lawmakers to reject Armenian Genocide resolution, warning it could jeopardize U.S. exports to Turkey.

The chief executives of Lockheed Martin Corp, Boeing Co, Raytheon Co, United Technologies Corp and Northrop Grumman Corp issued a rare joint letter, warning that passage of the measure by the House Foreign Affairs Committee could lead to "a rupture in U.S.-Turkey relations" and put American jobs at risk.

"Alienating a significant NATO ally and trading partner would have negative repercussions for U.S. geopolitical interests and efforts to boost both exports and employments," the CEOs warned in a February 26 letter to the committee's Democratic chairman, Representative Howard Berman.

They said U.S. defense and aerospace exports to Turkey exceeded $7 billion in 2009 and were seen reaching a similar level in 2010, supporting tens of thousands of U.S. jobs. Industry

Continued on page 2

## ACA Praises Congressman Adam Schiff for Sumgait Pogrom Commemoration

GLENDALE -- Earlier today, Rep. Schiff released a statement into the Congressional Record commemorating the 22nd anniversary of the three day massacre of Armenians in Sumgait, Azerbaijan in February 1988.

"The brutal Sumgait pogrom was the continuation of the Azeri policy that begun during the 1905-1907 massacre of Armenians in Baku, Nakhichevan and Shushi. Armenians were killed just for being Armenian." said Peter Darakjian, Executive Director of the ACA. "We commend Congressman Schiff for confronting the Azeri misinformation campaign through this statement commemorating the twenty second anniversary of this massacre." added Darakjian. "Rep. Schiff has not only been an advocate of Armenian American issues but he has taken a firm stand against man's inhumanity to man."

Segments of Congressman

Continued on page 3

## CBS News Program Airs Segment on Armenian Genocide

By Christine Aghakhanian

A twelve minute segment, "A Battle Over History" featuring reporter Bob Simon aired on CBS' "60 Minutes" news program on Sunday Feb. 28 which included interviews with Armenian American author Peter Balakian as well as former Turkish Ambassador to the U.S., Nayib Sensoy.




The segment featured proponents of the Genocide as well as active denialsts and then presented an unbiased approach to the issue while ending the segment with the reasons why the American government is unable to officially acknowledge the Genocide and adding information regarding the new historical commission that is to take place.

Simon and Balakian were shown excavating bones in the Der El Zor desert of Syria where millions of Armenians in the Ottoman Empire were marched to their death during the Armenian Genocide. In one scene, local children who were familiar with the mass graves handed Balakian and Simon fragments of bones that were found in the same areas where Armenians were killed in masses by the Turks. Balakian stated that the mass graves were caves which were used as predated gas chambers where Armenians were burned alive or died from the fumes of the fires with nowhere to escape.

Images of Armenians crammed in the small box carts of the trains were displayed as Balakian talked about how they were forced to buy roundtrip tickets only to be sent off to their deaths. He compared the Holocaust to the Genocide adding that Hitler would

Continued on page 4

## ACA-PAC Endorses Danny Tarkanian for US Senate



Arsen Ter-Petrosyan, Danny Tarkanian and Jirair Guederian

LAS VEGA NV – The Armenian Council of America – Political Action Committee (ACA-PAC) officially endorsed businessman Mr. Danny Tarkanian in the Republican Party primary for U.S. Senate that is slated to be held on Tuesday, June 8, 2010. The announcement was made during a meeting between ACA-PAC Nevada representatives and Mr. Tarkanian on February 24, 2010 at the candidate's campaign headquarters in Las Vegas, Nevada.

"As a long-time Armenian American resident in Nevada, I feel very fortunate and proud to have the opportunity to not only vote for Danny Tarkanian but to also bestow ACA-PAC's official endorsement on to him," said Jirair Guederian, Chairman of ACA-PAC Nevada. "It's February, less than 4 months until the Republican

Continued on page 4

# Vardan Khachatryan: Turkey Will Continue to Drag Out the Ratification of the Protocols Rather Than Reject Them



YEREVAN -- Social Democrat Hunchakian party official, Parliamentarian Vardan Khachatryan during a news conference on Wednesday expressed his belief that Turkey is inclined to drag out the ratification of the protocols rather than reject them. Turkey has an opportunity to protract the ratification of the protocols for another ten months. "The ratification of the Armenian-Turkish protocols may drag out because of the processes taking place in and around Turkey," MP Khachatryan continued.

"Turkey appears to be going to choose this rout, as it is not interested to call off the process suddenly." Khachatrian stated his opinion was backed by the Turkish Parliament's Speaker whom he had met with in Moscow who indicated the possible 10-month postponement of any issue; including Armenia-Turkey protocols.

In addition, Turkey can't free itself of Azeri pressure, as within the framework of Turkish 'neo-ottoman' program Azerbaijan plays a role as a "key geopolitical gamer who opens a corridor of influence towards the Turkic-speaking nations."

Genocide issue discussion is a multilateral process which is mainly directed on pressing the Turkish government in the frameworks of the regional issues continued Khachatryan. The discussion of the Genocide issue in the US Congress mainly depends on the changes of the role of Turkey in the region. "Turkey has been the only country of NATO who had a border with the Soviet Union. It was the only country in the region which was completely trusted by the West but it has lost its positions after the fall of the Soviet Union, and as a result will be unable to succeed on international political stage."

The tension in the region is growing day by day conditioned by various interests, under these conditions Turkey is attempting to tie the Armenian-Turkish relations to the Karabakh settlement. Utilizing the geopolitical pressures of the day, the "Priority for Yerevan must become not to stabilize the Karabakh conflict, but to normalize relations with Turkey." stated the MP.

As for the statements made by Azerbaijan on the resumption of hostilities, in the MP's view point are "actually nothing serious, as the international community takes for granted the peaceful settlement to the Karabakh conflict, and will not stand for actual war to resume."

He pointed out Armenian government should solve issue of refugees from Azerbaijan. "This item must be included in agenda of talks," said Vardan Khachatrian. "Armenians were forced to abandon lots of houses in Baku, much much more than that of abandoned Azerbaijani houses left in Armenia. He added that Azerbaijan's government maintains the status quo of the refugee camps as a tool to coerce the Armenian side.

According to the MP, the Armenian government does not resist Azerbaijan propaganda properly, for this reason many representatives of international institutions already have convictions in the accuracy of the statements propagated by the Azeri side. "Speaking about so-called Khodzhalinskom "genocide", Azeri propaganda gives the number of victims which include Turks - Meskhi who lived in the region in the past but had left the region long before "the tragedy", noted Khachatryan.

# Letter from SDHP "Sarkis Tkhruni" Student-Youth Union to Us Ambassador Maria Yovanovich

Honorable Mrs. Ambassador,

The annihilation of one and half a million of Armenians in Ottoman Empire in 1914-1922's was the biggest crime at the start of the last century, which was conducted not only against the Armenian people but also against all of civilization. The great sorrow of the Armenian Genocide later on served as an example of impunity for Nazi Germany to commit the Jewish holocaust. People were annihilated in their own motherland only because they were Armenians. The Genocide of one and half a million Armenians then was ensued by the banishment of millions of people from their motherland: including orphaned children. It's impossible to describe the pain and anguish that our people suffered by the monstrous extermination.

Mrs. Ambassador, we do not describe to you all the facts of which you are, surely, well-informed.

The US House Committee of Foreign Relations is to discuss the draft resolution of recognizing the Armenian Genocide on 4th of March. The pre-election promises of American presidents one after the another to Armenians have remained unfulfilled promises. The criminal Turkey continues to question the crime committed to suppress the United States from action.

Mrs. Ambassador,

The United States numerously announced its responsibility of a great mission to establish democracy and justice all over the world, but with its vagueness towards the Genocide gives the criminal the possibility not only to reject the greatest crime of the beginning of century, but also to continue its anti-Armenian policy.

As the ambassador of the United States in Armenia, it is your duty to pass our words to the governing body of Washington. The unpunished crime gives birth to new crimes; the supporter of a crime become its accessory and promoter.

Mrs. Ambassador,

On 4th of March and on its further proceedings the United States Government has another opportunity to prove once again that it's really the pioneer of justice and liberty through the whole civil world.

The criminal will be punished in any case, but your country ought to prove that the global values are much more important than the obvious blackmail and threats of cunning Turkish policy.

With best regards,

**SDHP "Sarkis Tkhruni" Student-Youth Union - Yerevan**

# Letter to President Obama

February 27, 2010

Dear President Obama:

In your successful campaign for the presidency in 2008 you told the world that you would "speak truthfully about the Armenian Genocide," and do so as our president.

But in your April 24, 2009 message on Armenian Remembrance Day, you retreated from that pledge - to the glee of the Turkish lobby in the U.S. State Department. In the Prologue to my memoir "Giants of the Earth" I emphasize to the readers of your failed pledge.

You can still honor the memory of the 1.5 million massacred Armenians by declaring it was Genocide in this year's April 24 presidential message. You said it was genocide in your campaign, now repeat it as president.

Sincerely yours,

**Mitch Kehetian**
**Allen Park, MI**

# ACA Texas Urges Genocide Bill Passage

HOUSTON, TX –The Texas branch of the Armenian Council of America along with Armenian American citizens of Texas are strongly urging their Texas Representatives in the Foreign Affairs Committee to cosponsor and vote for House Resolution 252 in the upcoming March 4 hearing. H.R. 252 calls upon President Obama to ensure that the foreign policy of the United States reflects appropriate understanding and sensitivity concerning issues related to human rights, ethnic cleansing and genocide documented in the United States record relating to the Armenian Genocide.

"As Armenian Americans in Texas, I believe that it is our duty to contact our representatives in Congress to urge them to vote on this crucial bill," said Sarkis Ohanian, Chairman of ACA – Texas. "As of today, out of the five Texas Congressional members, Representative McCaul is the only one that has cosponsored the bill. I am hopeful the remaining representatives respond favorably and do the right thing by voting, not only for their constituency, but for mankind and human rights as a whole," added Ohanian.

The Texas Congressional delegation comprised of Representatives; Ted Poe, Ron Paul, Gene Greene, Michael T. McCall and Sheila Jackson Lee makes up the second largest State delegation within the Committee.

House Foreign Affairs Committee Chairman Howard Berman (D-CA) has scheduled a vote on the Armenian Genocide Resolution (H.Res.252) on March 4. Over 137 House Members have cosponsored this measure, spearheaded by Representatives Adam Schiff (D-CA), George Radanovich (R-CA), and Congressional Armenian Caucus Co-Chairs Frank Pallone (D-NJ) and Mark Kirk (R-IL). A similar measure in the Senate (S.Res.316), is led by Senators Bob Menendez (D-NJ) and John Ensign (R-NV) and currently has 13 cosponsors.

# U.S. Aerospace and Defense Industry

**Continued from page 1**

executives are worried about Turkey's continued participation in several big U.S. weapons programs, including the Lockheed F-35 fighter, a $1.2 billion deal with Boeing for 14 CH-47 Chinook helicopters, and Patriot missile sales.

Turkey is one of eight international partners working with the United States on development of the $300 billion F-35 fighter, a program that has already seen some erosion of overseas amid cost overruns and delays in critical testing.

"Turkey is clearly one of the critical partners on the F-35 program and one that is buying a lot of airplanes early in the program, so it would have a corrosive effect if they pulled out," said Jim McAleese, a Virginia-based defense consultant. "It would set the stage for other allies to reevaluate their schedule or even the overall quantity of F-35 purchases."

The nonbinding resolution, which was to be voted on Thursday by the House panel, would require President Barack Obama to ensure that U.S. policy formally refers to the massacre as "genocide" and to use that term when he delivers his annual message on the issue in April -- something Obama avoided doing last year.

The Aerospace Industries Association, which represents more than 270 member companies, expressed concern in a separate letter, noting that U.S. exports to Turkey had more than tripled to over $10 billion in 2008, and U.S. companies were pursuing further arms sales at the moment.

"In this current economy, we cannot afford to turn our back on increasing U.S. exports and sustaining U.S. jobs by alienating one of our most important trading partners," said Marion Blakey, president of AIA, the largest U.S. trade group.

Turkey on Monday warned its ties with the United States would be damaged if the House panel approved the measure.

## UCLA Conference On Armenian Communities of Asia Minor to Have Strong Visual Component




**The Armenian Monastery and Seminary of Armash**

UCLA -- The Armenian Communities of Asia Minor from Adabazar, Bursa, and Banderma to Kutahia and Konia will be featured at UCLA on Saturday, March 20. This is the 18th and final conference in the international series, "Historic Armenian Cities and Provinces," sponsored by the Armenian Educational Foundation Chair in Modern Armenian History and organized by Professor Richard G. Hovannisian. The program will be held on the UCLA campus in 1200 Rolfe Hall from 9:30 a.m. to 5:30 p.m.

Among the presenters is Mr. Osman Koker of Istanbul, editor and publisher of Mr. Orlando C. Calumeno's extensive postal card collection depicting the Armenian communities of the Ottoman Empire a hundred year ago and before. His illustrated talk on Saturday morning is titled "From Banderma and Erminikoy to Armash: Armenians of the Marmara Region." This presentation will be complemented in the afternoon sessions with that of Ms. Ruth Thomasian of the Project SAVE Armenian Photograph Archives, "Armenian Communities of Asia Minor as Seen through the Photograph."

Others on the program include Prof. Richard Hovannisian, with an overview of the Armenian communities of Asia Minor; Prof. Peter Cowe of UCLA on the Konia community during the Seljuk period; Ms. Dawn MacKeen of Los Angeles on Adabazar; Mr. Ara Melkonian of London on Bardizag; Dr. Barbara Merguerian of Boston on Laura Farnham and schools for Armenian girls in Adabazar and Bardizag; Dr. Hasmik Khalapyan of Yerevan State University on the role of the theater among the Armenians of Asia Minor; Dr. Arpi Vardumyan of the Matenadaran in Yerevan on the Armenian musical culture of Kutahia; and Prof. Simon Payaslian of Boston University on the demise of the Armenian communities in Asia Minor.

The conference is supported by the UCLA Center for Near Eastern Studies, Center for European and Eurasian Studies, Bob and Nora Movel Fund, and the Organization of Istanbul Armenians. It is open to the public at no charge. Parking is available in lot 5, entrance from Sunset Blvd at Royce Drive (between Westwood Blvd. and Hilgard Ave, with a fee). Limited free street parking is available on Hilgard Ave. and on Westholme Ave. between Hilgard and Warner.

For UCLA parking maps, see: www.transportation.ucla.edu/maps/index.htm

For additional conference information: hovannis@history.ucla.edu

## ACA Praises Congressman Adam Schiff

**Continued from page 1**

Schiff's statement are below:

Schiff's stated that scores of Armenians were brutally beaten, tortured and burned to death and hundred of others were wounded resulting in thousands of Armenians losing their properties and becoming refugees. The events were inspired by anti-Armenian rallies which led up to the pogroms. Those who orchestrated the events later took on high ranking government positions in Azerbaijan. The current State Advisor for Ethnic Policy to Azeri President Heidar Aliyev is Hidayat Orujev who was a leader of the Communist Party of Azerbaijan during the Pogroms. He warned the Armenians in the region that if they did not stop campaigning for the unification of Nagorno Karabagh with Armenia "100,000 Azeris from neighboring districts will break into your houses, torch your apartments, rape your women, and kill your children."

He continued his statement by adding that there have been many witnesses and survivors of the Sumgait Porgroms who have come forth and spoken about their experiences during the tragedy despite the Azeri government's efforts to cover up the massacre. Eye witness accounts of rapes and victims trying to escape torture were recounted as he revealed a staggering statiscic of a vanished population of a vibrant community of 450,000 Armenians which were wiped out as a result of wider reprisals after the massacre. The Nagorno Karabagh war was a culminating effect which claimed almost 30,000 lives on both sides resulting in over a million Armenian and Azeri refugees.

"This April will mark the 95th Anniversary of the Armenian Genocide, a crime that Azerbaijan's ally and protector Tukey has devoted enormous political resources to deny. Just as we cannot allow the first genocide of the Twentieth Century to fade into history, the memory of the victims of Sumgait must not be forgotten either," said Rep. Schiff.

## My Dear Brother: Armenians in Turkey 100 Years Ago

GLENDALE -- Publisher Osman Koker will show examples from his exhibition of historic postcards documenting the lives of Armenians throughout the Ottoman Empire in 1900-1910, at the Glendale Public Library Auditorium, 222 East Harvard Street, on Thursday, March 18, 2010 at 7pm. Admission is free.




The estimated number of Armenians before the start of World War One in 1914 was about 4.1 million, with some 2.1 million of them living in the territory of the Ottoman Empire. More than 1.5 million Armenians were massacred and deported from their historical lands in Western Armenia in 1915-23 in what many world governments and leading scholars later would describe as the first genocide of the 20th century.

The program is organized by The National Association for Armenian Studies and Research (NAASR) Organization of Istanbul Armenians and Ararat-Eskijian Museum (AEM) and is sponsored by Glendale Public library.

## Armenian Progress in Infrastructure, Education and Business

GLENDALE -- Based on his long-term work as an Executive Director of a private Information Technology training academy in the Republic of Armenia, Jason Paul Kazarian will offer a high-level examination of public and private in-country information technology efforts. He will discuss the country's network infrastructure, assess the state of high-tech education, and explore successful high-tech business models. He will describe the current status, discuss the foreseeable future status, and identify cultural and technological constraints unique to the country. Additionally, he will offer a subjective analysis on how the Diaspora can engage with and invest in Armenian businesses and non-government organizations to promote the Armenia's growth in this crucial sector.

Jason Paul Kazarian received a Bachelor of Science in Computer Science with a Mathematics Minor from California State University, Dominguez Hills; and a Master of Science in Computer Science from the University of Texas, Dallas. He has published a paper on distributed simulation, a thesis on real-time software, and copyrighted two works in the performing arts, two works in the visual arts, and one in open source software package.

Mr. Kazarian has 25 years of professional experience, including 12 years in defense, four years in telecommunications, three years in education, and six years in consulting.

The lecture series presented by the Armenian Engineers and Scientists of America are open to the public and free of admission charge. The lectures are related to scientific and/or engineering topics. 818-547-3372, contact@aesa.org, www.aesa.org



## AMAA Orphan and Child Care Luncheon and Fashion Show Saturday, March 13



BEVERLY HILLS -- "Children Helping Children" is the heartwarming theme of this year's annual AMAA Orphan and Child Care Luncheon and Fashion Show scheduled for Saturday, March 13, 2010 at the world renowned Beverly Hills Hotel! Nordstrom is once again the generous sponsor for this year's fashion show and the committee members are hard at work, accessorizing our beautiful young models and coordinating fittings and practices. The luncheon co-chairs, Lisa Karamardian, Jessica Vartoughian and Christine Minasian are working on every last detail to create a warm and successful fund raising luncheon.

This year's luncheon will once again have an amazing silent auction. The auction will have many authentic gift items from Armenia, handpainted works of art, amazing crystal and porcelain pieces, from Lalique to Baccarat, magnificent jewelry and gift baskets galore, hotel and golf packages, spa packages, not to mention event tickets to virtually sold-out venues!

The money raised will facilitate scholarships, support of kindergartens in Armenia and Karabakh, summer and day camps for more than 6,000 children and teenagers, as well as many art and sports programs, and of course, much needed supplies to so many children in Armenia.

For reservations or further information, please contact Arsine Phillips at (213) 509-4337.

## CBS News Program Airs Segment on Armenian Genocide

Continued from page 1

have never had the idea to commit the Holocaust without the Armenian Genocide ever taking place.

Sensoy was then asked about the bones found in the desert to which he replied with a common denialist statement adding that there can be buried bones found all over Turkey and that does not provide any evidence as to a genocide actually taking place. The common rhetoric used by denialsts of the Armenian Genocide were reiterated by Sensoy as he spoke of both Turks and Armenians dying during World War I. A turning point in the conversation occurerd when Sensoy actually admitted to Simon that Armenians in the Ottoman Empire, were in fact, deported in masses.

Towards the end of the segment, Simon presented the reasoning behind the uphill struggle for Armenian Genocide recognition proponents by introducing the geopolitical significance of Turkey as a U.S. ally. He then discussed the issue of President Obama's failed pledge to acknowledge the Armenian Genocide as was promised during his candidacy before taking office. He concluded the segment by adding recent developments including the historical commission on the Armenian Genocide.

"We applaud Bob Simon for approaching the Armenian Genocide issue from an unbiased angle that has been averted by the mainstream media in the past," said Peter Darakjian, Armenian Council of America (ACA) Executive Director. "However, the historical commission undermines the enormity of the Genocide reducing one of the bloodiest chapters in world history to an issue of debate by a commission selected by sympathizers of Genocide deniers whose main interests lie in the area of historical revisionism."

"Armenians and historians worldwide have always stood by the fact that the Armenian Genocide is not a matter of debate. This devalues the memory of our ancestors and the struggles they faced creating a dangerous precedent for others to commit acts of genocide without repercussions for their illegal acts," added Darakjian.

ArmenienInfo.net
News. Informationen. Kommentare.

## Armenia Commemorates Second Anniversary of March 1st Killings

Continued from page 1

wave of popular upheaval and issues it is inherently unable to address," he said in a 50-minute speech. "And its leader [Sarkisian] will be ripped apart by predators from his own entourage."

"Our duty is to be prepared for that day in order minimize the country's losses and prevent the state from becoming unmanageable," Ter-Petrosian told the crowd before it marched through the city center to the scene of the vicious attacks on opposition protesters by security forces that broke out on March 1, 2008 killing ten people and injuring more than 200 others.

The rally was keenly anticipated by HAK supporters, including those dissatisfied with Ter-Petrosian's obvious reluctance to make another push for power. The former Armenian president indefinitely suspended regular anti-government protests in September, saying that the HAK can not topple Sarkisian without the backing of other major political groups.

In a landmark November speech, Ter-Petrosian expressed his readiness to recognize Sarkisian's legitimacy if the latter embarks on sweeping political reforms and frees all remaining political prisoners.

Ter-Petrosian on Monday renewed his scathing verbal attacks on the Sarkisian administration, decrying its "criminal essence" and alleged inability to "solve any problem facing the country." The authorities, he charged, have "never realized the need to establish an honest dialogue and national solidarity for confronting the existing challenges." He also denounced the Turkish-Armenian rapprochement as a "humiliating process" and blamed Sarkisian for "the prospect of a disgraceful settlement of the Nagorno-Karabakh conflict."

The HAK leader went on to defend his cautious strategy against criticism from more radical opposition elements, saying that holding rallies too often only "lessens their impact." "Nonetheless, many stubbornly do not accept this explanation and ignore or find secondary the daily, arduous and enormous work that the Congress has been doing since its formation," he complained.

Ter-Petrosian insisted that the HAK has done its best to achieve its objectives over the past two years. "Let's not forget that politics is, first of all, an art of the possible," he said.

One of Ter-Petrosian's closest associates, Levon Zurabian, likewise claimed that the Sarkisian administration will eventually have no option but to call snap presidential and parliamentary elections because of what he described as its mounting foreign and domestic policy failures. He said the fact that the authorities again seriously restricted transport communication between Yerevan and the rest of the country ahead of the demonstration shows that they are "terrified" of the opposition.

## ACA-PAC Endorses Danny Tarkanian

Continued from page 1

primary in the Silver State, Danny is the front runner not only in the primary but also in the general elections, and the Armenian American community must utilize all opportunities to help ensure his victory," added Guederian.

"This is historical election for our community and Danny will be monumental in truly representing the voice and concerns of all Armenian Americans. I am assured he will carry out the duties of his office with diligence and a great ability preserving the pride of the community" said ACA-PAC Nevada representative and the campaign's Armenian American coordinator Arsen Ter-Petrosyan.

"It is a privilege to have the ACA-PAC's official endorsement," said Tarkanian. "Members of ACA-PAC have been a driving force within my campaign from the beginning and very influential in garnering support, not only from Nevada's Armenian American community but from the general constituency as well. I look forward to working with them on areas of critical importance to Armenian Americans including passage of an Armenian Genocide Resolution, increasing aid to Armenian and Nagorno Karabagh, and ensuring U.S. development of programs promoting sustainable economic growth and good governance in Armenia."

Tarkanian, a native of Nevada has strong roots in the community stemming back from his days as a UNLV star athlete and later community advocate and successful business owner. His contribution to Nevada residents has earned him a position as a front runner among other republicans running for the same seat. He is the son of proud Armenian American and legendary UNLV basketball coach Jerry Tarkanian whose historical victory will make him the first Armenian American to hold a seat in the Senate.

After graduating from University of San Diego and earning a law degree, Tarkanian established himself as a successful businessman in Nevada and became highly active in his community establishing The Tarkanian Basketball Academy in Clark County which serves over 350 children in the area. Tarkanian is a father of four and lives with his wife Amy in Las Vegas.

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ
Եթէ ձեր տրամադրութեան տակ ունիք հայերէն գիրքեր,
եւ կը ցանկանաք զանոնք նուիրել
Կայծ Երիտասարդական Միութեան գրադարանին՝
հաճեցէք կապ պահել մեզի հետ:
G.Y.O. 1060 N. ALLEN AVE. PASADENA, CA 91104
Norserount@sbcglobal.net

# ԹՈՐԳՈՄ ՊԱՏՐԻԱՐՔ ԳՈՒՇԱԿԵԱՆ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

## ՎԱԽՃԱՆՄԱՆ ԵՕԹԱՆԱՍՈՒՆ ԱՄԵԱԿ (1874-1939)

*ԴՈԿՏ. Տ. ԶԱՒԷՆ ԱՒ. ՔՀՆՑ. ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆ*

### Արմաշի Դպրեվանքի Տիպար Հոգեւորականը

*Պարտիզակ ծնած էր Մկրտիչ Պիլիճեան 1874 Թուին: Հոն աշակերտած էր Եղիշէ Ծ. Վրդ. Դուրեանին, եւ ապա Արմաշէն ընդունուած վերատեսուչ Օրմանեան Մաղաքիա Եպիսկոպոսէն, ուրկէ ամենէն փայլուն շրջանաւարտն էր որ կ'ընծայուէր Հայ Եկեղեցիին 1896 Թուին, ձեռնադրուելով նոյն ինքն Օրմանեանէ՝ վերակոչուելով Թորգոմ Գուշակեան: Պարտիզակի եւ ապա Արմաշի մէջ Դուրեանի աշակերտած, նախախնամութեան մէկ որոշումով 1931 Թուին Գուշակեան պիտի յաջորդէր Դուրեան Պատրիարքի Երուսաղէմի Առաքելական Աթոռին որպէս Պատրիարք Հայ Երուսաղէմի:*

*Թորգոմ Պատրիարք Վարչական եւ գրական մեծ վաստակ կը Թողուր իր ետին երբ յանկարծամահ կ'ըլլար Երուսաղէմի մէջ 64 տարիքը չլրացուցած: Հոգեւորականներու խմբական եւ կամ եպիսկոպոսական ժողովի մը կատարելիք գործերը միայնակ կատարած Թորգոմ Պատրիարք Գուշակեան կը մնայ մեր վերջին շրջանի պատմութեան մէջ բացառիկն ու ամենէն արդիւնալիցը: Առաջնորդական պաշտօններ կատարած, Հայրապետական Նուիրակի առաքելութեամբ Ծայրագոյն Արեւելք եւ ապա Եւրոպա շրջած, Երուսաղէմի իր պատրիարքութեան կարճ միջոցին կարառուն հոգեւորականներ դաստիարակած եւ ձեռնադրած, ութ տարիներ ՍԻՈՆ ամսագիրը իր իսկ խմբագրապետութեամբ բարձրագոյն մակարդակի հասցուցած, առաւել եւս Հայ Եկեղեցիին կը Թողուր գրական մեծ վաստակ, քարոզագիրքերով, Հայ Եկեղեցւոյ բարեկարգութեան վերաբերեալ շարք մը հեղինակաւոր խմբագրականներով, աշխարհաբարի Թարգմանելով նաեւ Նարեկ Աղօթամատեանը՝ գերազանց ոճով եւ ժողովուրդին հասկնալի լեզուով:*

### Եգիպտահայոց Առաջնորդը

*Թորգոմ Ծ. Վրդ. Գուշակեան եպիսկոպոսական ձեռնադրութիւն կը ստանար 1910 Թուականին Մատթէոս Բ Իզմիրլեան Ամենայն Հայոց Կաթողիկոսէն որպէս Թեմակալ առաջնորդ Սեբաստիոյ: Սեբաստիայէն Եգիպտոսի Թեմին ծառայութեան կը կոչուէր 1914 Թուին ու Մայիսի 3-ին Գահիրէ կը հասնէր: Նոյն օր պաշտօնական Թափորով Թորգոմ Եպիսկոպոս մուտք կը գործէր քաղաքի հին Ս. Աստուածածին եկեղեցին՝ ի ներկայութեան Եգիպտահայ գաղութի առաջնորդող դէմքերուն՝ գլխաւորութեամբ Պօղոս Նուպար Փաշայի որ հիմնադիր Նախագահն էր ՀԲԸ Միութեան:*

*Առաջնորդական իր բազմազբաղ գործունէութեան աւընթեր Թորգոմ Եպիսկոպոս կարողացաւ իրականացնել Գահիրէի նորաշէն Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Եկեղեցւոյ շինութիւնը, Լեւոն Նաֆիլեանի ճարտարապետութեամբ, որ աւարտեցաւ 1928 Թուին, հայկական իսկական ոճով գեղակերտ տաճար մը ինքնին, որ արտասահմանի հայ եկեղեցիներուն մէջ ցարդ կը մնայ որպէս ամենէն տիպարը: Տաճարի բարերարը Գրիգոր Եղիայեանն էր որուն կտակին համաձայն եկեղեցին շինուեցաւ յետ մահու: Գրիգոր Եղիայեան մահացաւ Գահիրէի մէջ 1911 Թուին: Սրբազան Հօր կենսագիրը՝ բանասէր եւ պատմաբան Արշակ Ալպոյաճեանի վկայութեամբ »չորս տարի տեւող այս մեծ շինութիւնը Առաջնորդի աշխատանքին եւ ճիգերուն արդիւնքը կարելի է համարել«: Իսկ »Արեւ« օրաթերթի խմբագիրը՝ բանաստեղծ Վահան Թէքէեան ըսեր էր այն ատեն Թէ »իր դաստակերտն էր այս եկեղեցին նիւթական շէնքը, եւ ո՛ր կողմ որ դարձնէք ձեր նայուածքը, Թորգոմ Եպիսկոպոսը կը գտնէք անոր մէջ«:*

*Սրբազանը կառոյց նաեւ Առաջնորդարանի շէնքը, եւ Պօղոս Նուպարի բարերարութեամբ՝ Նուպարեան Վարժարանի դպրոցաշէնքը Հելիոպոլիսի մէջ: Երկու վարժարաններ, Գալուստեանն ու Նուպարեանը, հանդիսացան լոյսի փարոսները հազարէ աւելի հայ պատանիներուն: Ս. Աստուածածին եկեղեցին, Պէյն-էլ-Սուրէյն Թաղամասին մէջ, որ կառուցուած էր Գաբրիէլ Եպս. Մարաշցիի կողմէ 1839 Թուականին որպէս առաջնորդանիստ եկեղեցի, նորաշէն եկեղեցւոյ օծումէն ետք յետագայ տարիներուն շարունակեց ծառայել իր շրջանի հայութեան որպէս ծխական եկեղեցի: Պետութեան որոշումով 1958 Թուին Ս. Աստուածածին եկեղեցւոյ շէնքը փլցուեցաւ:*

### Հնդկահայոց Հայրապետական Նուիրակը

*Գէորգ Ե Սուրէնեանց Ամենայն Հայոց կաթողիկոսը իր Ապրիլ 22, 1916 Թուակիր կոնդակով լիազօր նուիրակ կը նշանակէր Թորգոմ Եպս. Գուշակեան զինք գործուղղելով Հնդկաստան, տակաւին երկու տարի հազիւ պաշտօնի կոչուած որպէս Թեմակալը Եգիպտահայ Թեմին: Պոմպէյ կ'ըլլար իր առաջին հանգրուանը ուր 40 հայեր կը բնակէին: Հոն ՀԲԸ Միութեան մասնաճիւղ մը կը կազմէր, ինչպէս նաեւ կեդրոնական մասնաճիւղ մը՝ երբ շուտով Կալկաթա կը հասնէր: Դեկտեմբերին դէպի հիւսիս ուղեւորելով Թորգոմ Եպիսկոպոս կը հասնէր Մատրաս ուր 165 հայեր կային: Հոն լատինաց Ծննդեան օրը պաշտամունք կը կատարէր, իսկ Ս. Ծննդեան օրը, Յունուարի 6-ին, պատարագ կը մատուցանէր Կալկաթայի մէջ ուր 500-600 կ'ապրէին: Յաջորդ ամիսներուն կը շրջէր մնացեալ միւս հայ գաղութները՝ Ռանկունի, Սինկափուրի, Սուրաբայայի, եւ Հոկտեմբեր 26-ին կը վերադառնար Կալկաթա: Հոն կը վարակուէր ժանտատենդէ (Թիֆօ), եւ 38 օր հիւանդանոց կը մնար: Տասնեւչորս ամիսներ Եգիպտոսի իր պաշտօնէն հեռու մնալէ ետք, կազդուրուած, կը վերադառնար Գահիրէ 1918 Փետրուար 17-ին:*

*Հնդկահայոց մասին Հայրապետական Նուիրակ Թորգոմ Եպիսկոպոս Գուշակեան իր հիացումը կը յայտնէր տեղւոյն հայերուն աշխատունակ եւ յառաջադէմ յատկութեանց համար, գնահատելով նաեւ անոնց հասարակական գործունէութիւնը որուն հիմը կը կազմէր հոգեւոր եւ մշակութային գործը, որոնց փարած էր հնդկահայութիւնը Կալկաթայի Մարդասիրական Ճեմարանով 1846 Թուականէն ի վեր, եւ Մատրասի ու Կալկաթայի հայերէն տպարաններով, անդրանիկ լրաթերթ »Ազդարար«ով, եւ այլ հրատարակութիւններով: Սրբազանը կը նկատէր միւս կողմէ սակայն պակասը հոգեւոր դաստիարակութեան՝ կիրակնօրեայ քարոզներու եւ ժողովրդային լսարաններու չգոյութեամբը: Չկային նաեւ հայուհիներու միութիւններ, հայախօսներու ակումբներ, հայերէնի եւ պատմութեան դասաւանդութիւններ, ինչպէս անոնք գործօն վիճակի մէջ էին միջին արեւելքի կազմակերպեալ համայնքներուն մէջ:*

*Թորգոմ Եպիսկոպոս կ'ըսէր իր Գէորգ Ե Ամենայն Հյաոց Հայրապետին ուղղեալ տեղեկագրին մէջ Թէ »համոզմամբ կրնամ ըսել Թէ Հնդկահայ գաղութը մասամբ գոհացուցիչ էր առեւտրական տեսակէտով, եւ տակաւին մխիթարական հոգեւոր տեսակէտով, ու ազգային զգացման տեսակէտով: Բայց ի՞նչ պիտի ըլլար Հնդկաստանի հայ գաղութի ապագան, կը հարցնէր ան, զոր կը բնորոշէր որպէս »փշոտ եւ դառն« հարց, քանի որ »սեւ ամպ մը կ'անցնէր սրտէս ամէն անգամ որ կը մտածէի այս մասին«: Հարց կուտար Թէ »ապագային, կէս դար կամ դար մը ետք, անշուշտ պիտի լինին հայեր Հնդկաստանի մէջ, բայց պիտի լինի՞ հայութիւն«:*

### Պաշտօնական Այց Երուսաղէմ 1918 թուին

*1918 Թուականի Զատկին Բրիտանական իշխանութեան հրաւէրով Եգիպտահայ Թեմի Առաջնորդ Գորգոմ Արքեպս. Գուշակեան Գահիրէէն Երուսաղէմ կը մեկնէր պաշտօնական այցելութեամբ՝ Ս. Զատկի տօնակատարութեանց նախագահելու համար՝ Հրդկաստանէն տակաւին նոր վերադարձած: Թորգոմ Սրբազան նոյն առիթով ջանք կ'ընէր որ Առաքելական Աթոռը որ Թափուր կը մնար տասնամեակէ մը ի վեր, գտնէր իր արժանաւոր գահակալը՝ յանձին իր ուսուցչին ու տիպար հոգեւո-րականին՝ Եղիշէ Դուրեան Արքեպիսկոպոսին որ Կ. Պոլիս կը մնար: Յարութիւն Պատրիարք Վեհապետեան վախճանած էր 1910 Թուին, եւ Սահակ Բ Խապայեան Կիլիկիոյ Կաթողիկոս-Պատրիարքն ալ Երուաղէմէն մեկնած էր 1917 Թուին Բրիտանիոյ իշխանութեանց Պաղեստին ներխուժման նախօրէին, երբ Թուրք պետութիւնը բոլորովին դուրս քշուած էր արդէն միջին արեւելքէն:*

*Թորգոմ արքեպիսկոպոսի առաջին այցելութիւնն էր Երուսաղէմ որ առաջին պատեհութիւնը պիտի ընծայէր 1917 Թուի Հոկտեմբերին հաստատուած անգլիական նորակազմ կառավարութեան, ճանչցնելու Սուրբ Տեղեաց պահպանութեան հայոց համահաւասար իրաւունքը՝ լատինաց եւ յունաց կողքին: Սրբազան Հօր կ'ընկերանար Գահիրէէն Վահան Թէքէեան որպէս ազգային Պատուիրակութեան ներկայացուցիչ, եւ երկուքը միասին կարեւոր ծառայութիւն կը մատուցանէին հայոց վանքին ու կը յաջողէին պահել հայոց սրբատեղիներու իրաւունքները, կազմելով նաեւ պատասխանատու վարչութիւն մը Նախա-գահութեամբ Եղիշէ եպիսկոպոս Զիլինկիրեանի: Թորգոմ արքեպիսկոպոսի ծրագիրն էր նաեւ գետին պատրաստել նոր պատրիարքի ընտրութեան համար որ պիտի կատարուէր »նախկին ձեւով«, այսինքն Կ. Պոլսոյ պատրիարքու-թեան կողմէ: Այդ ձեւը պիտի ըլլար վերջինը որուն համար իր համաձայնութիւնը տուած էր Բրիտանիոյ իշխանութիւնը:*

### Եւրոպայի Հայրապետական Նուիրակը

*Եգիպտահայոց առաջնորդ Թորգոմ Արքեպիսկոպոս Գէորգ Ե Ամենայն Հայոց Կաթողիկոսէն այս անգամ կը նշանակուէր Հայրապետական Նուիրակ Եւրոպայի, հոն հայ եկեղեցական Թեմական կազմակերպութեան սկիզբը դնելու համար: Կաթողիկոսը իր Կոնդակով պատուիրած էր եկեղեցականապէս կազմակերպել Եւրոպայի հայութիւնը իբրեւ միակ առանձին առաջնորդական վիճակ, ճշդելով նաեւ*

*Շար.ը էջ 19*

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

**ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՈՆ**

**Yes, I wish to subscribe to Massis Weekly**

**Enclosed a check for (one year)**

*** $50,00 for USA**

*** $60,00 (second class), $ 75,00 (Air Mail) for Canada.**

*** $85,00 (second class), $ 125,00 (Air Mail) Overseas.**

**Name: ------------------------------------**

**Address: ------------------------------------**

**City: --------- State:--------- Zip Code:------**

**Country: ------------**

**Tel :---------------------- Fax : ----------------------**

# «ՀԱՒԱՏՔԻ ՔԱՐԵՐԸ ՓՆՏՌՈՂ-ԳՏՆՈՂ ԵՒ ՉԱՓԱԳՐՈՂ ԱՌԱՔԵԱԼԸ» *

**Ռ. ԿՈՐԻՒՆ**

Շատ պարզ ու հասկանալի ճշմարտութիւն է, որ ժողովուրդները գոյատեւում են իրենց սեփական մշակոյթով, ժառանգական արժէքների պահպանմամբ ու գալիք սերունդներին փոխանցման առաքելութեամբ: Մշակոյթ եւ հայրենի հող, երկու իրար լրացնող, երկու իրարից սերւած, երկու իրար պաշտպանող, երկու անհրաժեշտութիւն գոյատեւման համար: Մենք հայերս որպէս ապրող ժողովուրդներից մէկը, դարերի խորքից ենք եկել մեր ինքնուրոյն մշակոյթով: Ինչպէս մեր մագաղաթեայ աղբիւրներն են վկայութիւն տալիս՝ ժամանակին ծովից ծով հայրենիք ենք ունեցել, հզօր իշխանութեան տէր, քաղաքներ ենք կառուցել, յուշակոթողներ ենք կերտել, նաեւ համաշխարհային քաղաքակրթութեան եւ մշակոյթի զարգացման համար մեր լուման ներդրել: Նախքան քրիստոնէութիւնը հզօր էինք, մեր իշխանութեան եւ հողերի տէրը, սակայն Քրիստոնէութեան կառչելուց յետագայ դարերում թուլացանք ու տկարացանք , յայտնւեցինք օտարների լծի տակ մասնատւած հայրենիքով: Ամենասոսկալին այն որ մեր Արեւմտեան Հայաստանի ժողովուրդը 1915-ին ցեղասպանութեան ենթարկւեց, մեր սրբազան երկիրը պարպւեց իր իսկ տիրոջից, կոտորածից ճողոպրածները ցիր ու ցան եղան աշխարհի տարբեր կողմերում, կազմեցին մեր այսօրւայ Սփիւռքը: Մեր պապերը իրենց դարերի կեանքում մերթ խաղաղ մերթ փոթորկոտ յիշատակ են թողել հազարաւոր յուշակոթողներ ողջ հայրենիքում, կոտորածից յետոյ Արեւմտեան Հայաստանի մեր կոթողները մնացին գուրգուրացող ու հոգացող ձեռքերից զուրկ, անտէր ու անպաշտպան:

Թշնամին մեր քոյր եւ եղբայրներին ջարդելուց եւ տեղահան անելուց բացի նաեւ ծրագրեց ոչնչացնել այն բոլոր յիշատակները, որոնք անտէրունչ ձգւել էին: Յաճախակի Սփիւռքեան մամուլը տեղեկութիւններ էր հաղորդում մեր կոթողների աւերման կամ վերացման մասին, միջազգային մշակութային կազմակերպութիւններից օգնութիւն էր խնդրւում վերահասու լինել, բայց ո՞ր միջազգային կազմերպութիւնը պաշտպան կանգնեց մեզ ընդ դէմ թուրքերի այս մշակութային ջարդերին: Ծառն իր արմատով է ծառ, յոյսը օտարի վրայ ինքնախաբէութիւն է: Թուրքը չէր ուզում խօսուն վկայ գոյութիւն ունենար բռնագրաււած հայկական հողերում, որպէսզի ի սպառ վերանար հայի հետքը, աշխարհին հաւաստիացնելու որ հայութիւն չի ապրել այդ տեղերում:

Լաւ են ասել, գաղտնիքը դժւար թէ թաքուն մնայ, նա կը դրսեւորւի օրից մի օր:

Թշնամին հաւատացած էր, որ իր կատարած ջարդերը կը մոռացւեն եւ ոչ մի ուժ չի ճարւի իրեն դատաքննութեան կանչի, նաեւ կարծումէր գաղտնօրէն կոթողները վերացնելով վերջ կը տայ նրանց գոյութեան: Նրա մտքից երբեք չէր անցնում, որ վերընձիւղւած ճարտարապետ երիտասարդները գաղտնի իրենց պապենական հողերն են գնում եւ մէկ-մէկ նրանք պատկերահանում են, գտնւած վայրը քարտէսագրում են, որ մի օր քաղաքական նպաստաւոր պայմաններում թէ հայութեան կոտորածի եւ թէ մշակութային ջարդի համար դատի կանչեն թուրքին:

Անկասկած արդար դատավարութեան դռնբացէքը անխուսափելիօրէն մօտ է,

Մեր ճարտարապետ երիտասարդներից մէկը, որ յանդուգն ու խիզախ քայլերի դիմելով 1970-ից սկսեալ գաղտնի ճամբորդութիւններով պատկերահանել է մեր յուշակոթողները աւերակ եւ կիսաւերակ պայմաններում նա չափագրել ու փաստագրել է: Նա մեծ զոհողութիւններով ու յոյժ նւիրւածութեամբ այդ բոլորը սահիկների, գրքոյկների, պրոշուրների վերածելով ստեղծել է հսկայական արխիւ:

Հայրենասիրութեան աննման ծառայութիւն:

Նա 1978-ին Գերմանիայում իր ճարտարապետ կնոջ հետ միասնաբար պաշտօնականացնում է Հայկական Ճարտարապետութիւնը ուսումնասիրող կազմակերպութիւնը իր 11 տարի առաջ հիմնած անցեալով: Նրա գործունէութեան համբաւը եւ աշխատանքների ծիրը դէպի հայրենիք եւ սփիւռքեան օջախներ է տարածւում: Աշխատանքը իր շուրջ է գրաւում նոր թեկնածուներ: Մի խումբ իրանահայեր գլխաւորութեամբ պրն. Շահէն Յարութիւնեանի կազմակերպութիւնը 1996-ին գրանցւում է ԱՄՆ-ում: Ծառայողականութեամբ կազմակերպութիւնը հայրենիքում արւեստից այրերի մօտ ծանօթ էր, այդու նրա ջանքերով 1998-ին պաշտօնապէս գրանցւում եւ դարձեալ հաստատւում է 2000-ին եւ գրասենեակ է յատկացւում : Այստեղ նրա եւ աշխատակիցների անխոնջ աշխատանքներով կարգի են բերւում տասնամեակների ընթացքում կուտակւած արխիւային բազմաբնոյթ նիւթերը, դասակարգւում են նրանք ըստ բնակավայրերի եւ վարչատարածքային միաւորների, ամենից կարեւորը կատարւում է թւայնացման աշխատանքները (Առաւել լայն տեղեկութիւնների համար դիմել կազմակերպութեան պաշտօնաթերթ՝ «Վարձք» Երեւան 2010):

Ո՞վ էր այն հայ երիտասարդը, հայ մարդը, հայ ճարտարապետը, հայ նւիրեալն ու հերոսը, որ միայնակ յետագային իր համակիր ընկերներով լծւել էր հայկական յուշարձանների պաշտպանութեան, նա դոկտ. պրոֆ. Յովհաննէս Հախնազարեանի որդին էր ՝ ծնւած 1941-ի, Մայիսի 5-ին, մկրտւել էր Արմէն անունով: Հայրը ճանաչւած կրթական գործիչ եւ համալսարանի գերմաներէն լեզւի դասախօս Թեհրանի համալսարանում, պարսից պետական ուսումնադաստիարակչական յայտնի դէմք, Թեհրանի «Քուշէշ-Դաւթեան» միջնակարգ դպրոցի տեսուչ եւ հայկական դպրոցների վերատեսուչ: Յովհաննէս Թումանեանին նւիրւած 100 ամեակի յոբելեանին միայն նաեւ պրոֆ. Սաիդէ Նաֆիսին են հրաւիրւում, դա 1969 թիւն էր:

Արմէնը շրջանաւարտ լինելով «Քուշէշ-Դաւթեան» միջնակարգ դպրոցից ուղարկւում է Գերմանիա ուսանելու: Յաջողութեամբ աւարտում է ճարտարապետութեան ճիւղը եւ արժանանում է դոկտ. տիտղոսին պաշտպանելով իր աւարտաճառը Արտազ գաւառի Սուրբ Թադէոս Առաքեալի վանքի մասին ընդարձակ ուսումնասիրութեամբ:



Այստեղ ուզում եմ անդրադառնալ «Վարձք»-ի մէկ պարբերութեան Արմէնի մասին: Արտասահմանում մասնագիտացած Իրանցի շրջանաւարտներ, որոնց շարքին նաեւ Արմէնը հրաւիրւում է տեսութեան Փահլաւի դինաստիայի երկրորդ եւ վերջին շահ Մահմադ Ռեզայի մօտ: Շահը գնահատելով բոլորին առաջարկում է իւրաքանչիւրը մէկական ցանկութիւն յայտնի, նրանք տարբեր աշխատանքային եւ պաշտօնների խնդրանքներ են ներկայացնում շահին, հերթը հասնում է Արմէնին: Նա շահից միայն խնդրում է, իրեն թոյլ տրւի Արտազում գտնւող Սուրբ Թադէոս Առաքեալի վանք եւ ու մուտք ունենայ ազատօրէն ուսումնասիրութեան համար, քանի որ այդ տարածքը սահմանամերձ զինւորական ռազմակայան էր համարւում եւ ամէն մարդու չէր արտօնւում: Նա կարող էր առիթից օգտւել եւ պաշտօն խնդրելով հանգստաւէտ կեանք ստեղծէր իր համար նիւթապէս ապահովւած ու լիացած, բայց արի ու տես, նա ընտրում է տատասկոտ ճամբան, նա կոչում ունէր իր ժողովրդին ծառայեցնելու իր ջամբած մասնագիտութիւնը, իր ամբողջ էութեամբ նւիրւեց 30-40 տարիներ հաւաքագրելով, պատկերահանելով, վերանորոգելով, թւայնացնելով, գրքեր հրատարակելով աշխարհին ցոյց տալու հայոց պանծալի ճարտարապետութեան կոթողները, նաեւ փաստացի տւեալներով տեղեկացնելու թուրքիոյ կատարած մշակութայիկն ջարդերի մասին:

Վաղահաս էր Արմէնի մահը, սակայն այս տարիքում շատ բան էր արել եւ դեռ անելիք շատ ունէր, այդուհանդերձ շարունակւելու է գործը իր հիմնած կազմակերպութեան նւիրեալ ընկերներով ու գործակիցներով, որոնք անթառամ պահելով Արմէնի յիշատակը ի կատար են ածելու կիսատ ու թերի մնացած գործերը յուշակոթողների կապակցութեամբ առաւել եւս ուշադիր ու բծախնդիր մեր պապերի աւանդը անվթար պահելու ի խնդիր, ինչպէս այլ ժողովուրդներն են վարւում իրենց ազգային գանձերի հետ:

Լսեցինք եւ կարդացինք, թէ ինչպէս եկեղեցական հոգեհանգիստներով ու դահլիճային սգահանդէսներով հայրենիքում, Թեհրանում եւ այլուր վեր են հանել Արմէնի կատարած աշխատանքները վասն հայրենիքի եւ ազգութեան, բարձրօրէն արժեւորելով գլուխ են խոնարհել նրա յիշատակի առջեւ ազնիւ պարտքի զգացումներով:

Անմասն չմնաց ԱՄՆ-ի կազմակերպութիւնը թէ թաղման քառասնօրեակին եւ թէ տարելիցին:

Ցուցերեկոյ էր կազմակերպւել Լոս Անջելէսի Իրանահայ միութեան կենտրոնատեղիում տարելիցի առիթով Փետրւարի 21, 2010-ին երեկոյեան ժամի 5.30-ին:

Աննախընթաց ներկայութիւն, սրահը ծայրէ-ծայր լեցուն էր նոյնիսկ յոտնկայս հայրենակիցներով, բացառիկ հոծ ներկայութիւն:

Արմէնի գունաւոր շրջանակւած նկարը եռոտանու վրայ, բեմի մօտ, քաղցր ժպիտով էր նայում հանդիսականներիս, ժպտուներես, որը կարելի է այսպէս մեկնաբանել, որ նա գոհ էր իր արածի համար ծառայելով իր սիրած ազգին ու ժողովրդին, նա չէր զղջում նեղութիւններով լի ընտրութեան համար, ահաւասիկ նա իր արածի համար փառաւորւում է, հոծ ներկայութիւնը վկայութիւնն էր նրա ծառայութեան, որով իր բացած ճամբան կանաչաւուն է մնալու:

Ցուցերեկոյի բացումը կատարեց կազմակերպութեան նախագահն՝ ճարտարագէտ Ժորա Մանուչարեանը: Նա իր բանաւոր խօսքի մէջ հակիրճ բառերով եւ երախտագիտութեամբ յիշեց Արմէնին եւ թւարկեց նրա կատարած գործերը, ապա բեմ հրաւիրեց օրւայ բանախօս պրն. Սեպուհ Յովհաննիսեանին ներկայացնելու Արմէնին: Յարմար ընտրութիւն, քանի որ նրա պատանի տարիքում «Արարատ» միութեան անդամակցութեան ժամանակ պրն. Սեպուհն «Արարատ» միութեան նախագահն էր: Արդարեւ յարգելի պրն. Սեպուհն հանգամանօրէն ներկայացրեց հաւաստի տպաւորութիւն թողնելով ներկաների վրայ: Առաջարկում եմ նա իր գրութիւնը մամուլով լոյս ընծայի: Այնուհետեւ ճարտ. Ժորան բեմ հրաւիրեց առաջնորդարանի դիւանապետ պրն. Սարգիս Մասէրէջեանին փոխանցելու առաջնորդ Մուշեղ արք. Մարտիրոսեանի ուղերձը, որից յետոյ պրն. Վիգէն Փափազեանը հայ դատի կողմից դրւատեց Արմէնի կեանքն ու գործունէութիւնը անգլերէն լեզւով:

Գեղարւեստական բաժնում ելոյթ ունեցան դոկտ. Վահան Անանեանը եւ Մարսէլ Ստեփանեանը միասնաբար, առաջինը ջութակով, իսկ միւսը դաշնամուրով: Կատարւեց «Աւէ Մարիա» նշանաւոր մեղեդին, Շուբերթի, Առնօ Բաբաջանեանի եւ պարսկական ֆոլքլոր երաժտութիւնից հատւածներ: Նրանք ներդաշնակւած կատարումներով վարպետօրէն ներկայացրեցին կտորները:

Այնուհետեւ ճարտ. Ժորան պաստառի վրայ ցուցադրեց յուշարձանների պատկերներ տալով հակիրճ բացատրութիւններ կայք

Շար.ը էջ 15

ՊԱՏՄՈՒԱԾՔ

## ՀԱԼԷՊ
## ՏԽՐՈՒՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ 40 ԱՄԵԱԿԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ

*Հալէպի մէջ Ս.Դ.Հնչակեան Կուսակցութեան «Տխրունի» Ուսանողական Երիտասարդական միութեան հիմնադրութեան նուիրուած եզրափակիչ ձեռնարկները սկսան Կիրակի, 7 Փետրուարի առաւօտեան:*

*Տխրունիական ընկերներ՝ գլխաւորութեամբ Ս.Դ.Հ. Կեդրոնական վարչութեան ատենապետին, եւ ընկերակցութեամբ կուսակցութեան՝ Հայաստանի եւ ԱՄՆ-ի ներկայացուցիչ ընկերներուն, ինչպէս նաեւ Հայաստանի եւ Սուրիոյ հիւսիսային եւ հարաւային շրջաններու վարիչ մարմիններու ընկերներուն, այցելեցին Հալէպի հայոց գերեզմանատուն՝ այնտեղ գտնուող Քսան Հնչակեան հերոսներուն յիշատակին կանգնեցուած յուշարձանին ծաղկեպսակ զետեղելու:*

*Ծաղկեպսակի զետեղման եւ Ուխտի երգէն ետք ընկերները այցելեցին ընկերներու շիրիմները՝ իրենց յարգանքի տուրքը մատուցելու:*



*Եզրափակիչ ձեռնարկը տեղի ունեցաւ երեկոյեան Հ.Բ.Ը.Մ. Նազարեան սրահին մէջ: Հանդիսութեան ներկայ էին Ս.Դ.Հ.Կուսակցութեան կեդրոնական վարչութեան ատենապետ ընկ. Սեդրակ Աճեմեան, Հայաստանէն եւ Ամերիկայէն հիւրաբար ներկայ գտնուող Կեդրոնական Վարչութեան ընկերներ, ինչպէս նաեւ Դամասկոսէն ժամանած հարաւային Սուրիոյ Վարիչ Մարմինի եւ «Տխրունի» Ուս.-Երիտ. Միութիւնը ներկայացնող ընկերներ:*

*Ձեռնարկը սկսաւ Սուրիոյ, Հայաստանի քայլերգներով՝ դաշնամուրի վրայ կատարողութեամբ Օրդ. Արազ Գէորգեանի, ապա օրուան հանդիսավարուհին՝ ընկ.հի Սեւան Քէլեշեան ներկաներուն հրաւիրեց՝ մէկ վայրկեան յոտնկայս յարգելու հայ ժողովուրդի եւ Հնչակեան կուսակցութեան նահատակները: Ապա ընկերուհին հերթաբար հրաւիրեց ընկ. Յարութ Օքճեանը, որ արաբերէն լեզուով փոխանցեց բացման խօսքը, որմէ ետք ընկ.հի Աստղիկ Տէմիրճեան-Արապեան ներկայացուց հայերէն բացման խօսքը, ուր ընկերուհին նշեց. «Քառասուն տարի առաջ՝ 1969 Թուականին, Հալէպի Կիլիկեան կրթական հաստատութեան լուսաճառագ դպրոցին մէջէն՝ զետեղուած պողպատի նման ծնունդ առաւ շարժում մը՝ երիտասարդական թարմ լիցքերով, ու կարճ միջոցի մը մէջ վարար գետի նման հեղեղեց ու իր խելայեղ ընթացքին մէջ առաւ Կիլկեան շրջանակի ողջ երիտասարդութիւնը...»: Այս շարժումը ծաւալեցաւ նաեւ Կիլիկեանէն դուրս՝ ընդգրկելով նաեւ այլ երիտասարդներ, որոնք մռւցուած ժառանգորդներէն էին երբեմնի հնչակեաններու:*

*Ընկերուհին թուեց «Տխրունի» Ուսանողական Երիտասարդական Միութեան տարած հայապահպանման, մշակութային եւ ազգային գաղափարական աշխատանքները եւ ապա աւելցուց. «Իր կազմաւորման օրէն անցած են 40 տարիներ ու տակաւին «Տխրունի» ուսանողական երիտասարդական միութիւնը կը գոյատեւէ իր սկզբնական եռանդով եւ հաստատապէս կը մնայ պայքարի սրբացան դիրքերու վրայ, մինչեւ հայ ժողովուրդի պահանջատիրութեան յաղթական պսակումը՝ բռնագրաւած հողերը վերադարձնելով իրենց իրաւատիրոջ, եւ Մեծ Եղեռնին՝ մարդկային, մշակութային եւ նիւթական կորուստներու արդար հատուցումով:*

*Ապա ան իր խօսքը փակեց՝ ըսելով. «Այս պանծալի յոբելեանական քառասնամեակի առիթով կ՚ըսենք. «Փառք ու պատիւ հիմնադիրներուն,*

*Փառք ու պատիւ զինք ծնող Ս.Դ.Հնչակեան կուսակցութեան,*

*Մենք՝ հետեւորդներս, կ՚ուխտենք անշեղօրէն քալել անոնց ուղիէն, զոր գծած է մեր ուսուցիչը՝ Սարգիս Տխրունին»:*

*Հանդիսութեան գործադրուեցաւ օրուան պատշաճ ու բծախնդրօրէն պատրաստուած գեղարուեստական յայտագիրը հետեւեալ շարքով. նուագ՝ զուգանուագ, դաշնամուր՝ Յակոբ Պարղուտեան, ջութակ՝ Յարութ Քարատանաքեան:*

*Պար՝ Ն.Ս.Մ.Մ.ի պարախումբի՝ «Անուրջներ»: Ասմունք՝ ընկերուհի Ջանի Նազարեան, որ իր կատարողութեամբ գրաւեց ներկաներուն սիրտերն ու միտքերը, ապա ելոյթ ունեցաւ Ն.Ս.Մ.Միութեան պատանեկան պարախումբը: Յաւարտ գեղարուեստական յայտագրին՝ բեմ հրաւիրուեցաւ օրուան բանախօս, Հալէպի »Տխրունի « Ուս.-Երիտ. Միութեան նախկին ատենապետներէն, այժմ Լիբանանի Շրջանի Վարիչ Մարմնի անդամ ընկ. Ալեքսան Քէօշկէրեան:*

*Պատգամաբեր ընկերոջ խօսքէն ետք դահլիճին մէջ յանկարծ բարձրախօսէն ձայնագրութիւն մը լսուեցաւ: Մեզմէ՝ կարճատեւ ժամանակ մը առաջ առյաւէտ բաժնուած ընկ. Յակոբ Աղայեանի ձայնն էր: Սիրելի՛ ղեկավար ընկերոջ ծանօթները յոտնկայս եւ ծափահարութիւններով լսեցին «Տխրունի» Ուս.-Երիտ Միութեան հիմնադրութեան 20-րդ տարեդարձին առթիւ արտասանած խօսքերը: Դահլիճին մէջ կը տիրէր յուզում՝ խառնուած ուրախութեամբ, երբ մահացած ընկերոջ որդին՝ Հայրօն, բեմ բարձրացաւ ստանալու համար հօրը յիշատակին համար պատրաստուած յուշանուէրը՝ միութեան Ատենապետ Ընկ. Յարութ Պալապանեանի եւ վարչական ընկերուհիներէն Անի Գալլաքեան ձեռամբ:*

*Յետ մահու պարգեւատրըւող ընկերոջ որդին իր պատասխան խօսքին մէջ շնորհակալութիւն յայտնեց վարչութեան եւ հաւաստեց, որ ինք եւս հաւատարիմ պիտի մնայ հօրը՝ Յակոբ Աղայեանի գաղափարական կուսակցական ուղիին:*

*Ապա կուսակցական ու յեղափոխական երգերով՝ մթնոլորտը ճոխացուցին հալէպահայ երգիչ Գէորգ Գատեհճեանը եւ Լիբանանէն ժամանած Պերճ Նազգաշեանն ու իր նուագախումբը:*

*Ձեռնարկին փակումը կատարեց Դամասկոսի Հայոց Թեմի առաջնորդ Արմաշ Սրբազան Նալպանտեան: Պաշտօնական երեկոյթի աւարտին տեղի ունեցաւ խրախճանքպարահանդէս Հալէպի շքեղ սրահներէն մէկուն մէջ: Խանդավառութիւնը եւ ուրախ մթնոլորտը շարունակուեցաւ մինչեւ առաւօտեան ժամերը:*

*Հանդէսը ճոխացուցին, Պէյրութէն յատուկ ժամանած, օրուան հանդիսավար Ընկհ. Սիլվա Եփրեմեան ու Հնչակեան կուսակցական երգերու մեկնաբան Պերճ Նազգաշեան:*

*Վերջապէս միայն կարելի է նոր վերելքներ ու յաջողութիւններ մաղթել «Տխրունի»-ական ընկերներուն:*

*Ներկայ մը*

## ՀԵՆՐԻԿ ԱՆԱՍԵԱՆԻ ԴՈՒԴՈՒԿԻ ՀԱՄԵՐԳԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԱՌԱՋԻՆ ԿԱՏԱՐՈՒՄԸ ՔԱՐԱՔԱՍՈՒՄ

*Ճանաչուած կոմպոզիտոր, դիրիժոր Հենրիկ Անասեանը մի քանի տարի առաջ յօրինել էր կոնցերտ՝ դուդուկի եւ սիմֆոնիկ նուագախմբի համար: Դասական հիմունքների վրայ ստեղծուած եռամասանի այդ ստեղծագործութիւնը միակն է հայ իրականութեան մէջ:*

*Կոնցերտի կատարման համար, հեղինակը դուդուկի բաժնի նոթաները տուել է երկու հայ մենակատարների եւ համաշխարհային համբաւ վայելող, փայտեայ փողային գործիքների վրայ նուագող տաղանդաւոր երաժիշտ, ազգութեամբ վենեզուելացի, բոլորին յայտնի Պէդրօ Էուստաչէին:*

*Եւ ահա, վերջերս յայտնի երաժիշտը խնդրել է Հենրիկ Անասեանին՝ թոյլ տալ կատարելու կոնցերտը Վենեզուելայի Սիմոն Բոլիվար աշխարհահռչակ սիմֆոնիկ նուագախմբի հետ, ու ըստ այնմ էլ Քարաքաս ղուարկել նուագախմբի նոթաները:*

*Մաեստրօ Անասեանը սիրով համաձայնուել է ու մի քանի համատեղ փորձերից յետոյ նոթաներն ուղարկուել է Քարաքաս:*

*Կառավարկան Սիմոն Բոլիվար շքեղ սրահի բացման առթիւ կազմակերուելիք համերգին մասնակցելու համար հրաւիրուել է Պէդրօ Էուստաչէն, որն էլ առաջարկել է ծրագրում ընդգրկել Հենրիկ Անասեանի դուդուկի կենցերտը:*

*Դիրիժոր Ալֆրէտօ Ռուգելէսը սիրով ընդառաջելէ Պէդրոյի խնդրանքին, մանաւանդ որ իմացել է, թէ ինքն է լինելու առաջին մեկնաբանը այդ եզակի ստեղծագործութեան:*

*Եւ, որովհետեւ ձեռնարկը կառավարկան յանգամանք ունի, նրա մուտքը լինելու է միայն ու միայն հրաւէրներով, անկասկած, միայն ընտրովի մարդկանց համար:*

*Համերգը կայանալու է Մարտի 5ին Քարաքասի նորաբաց Սիմոն Բոլիվար սրահում: Այդ առնչութեամբ Քարաքաս է մեկնելու Անասեան ամոլը՝ դուդուկի կենցերտի համաշխարհային առաջին կատարմանը ներկայ լինելու համար:*

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՐԵՐԸ ՓՆՏՌՈՂ-ԳՏՆՈՂ ԵՒ ՉԱՓԱԳՐՈՂ ԱՌԱՔԵԱԼԸ» *

*Շարունակուած էջ 14-էն*

*էջի գործածութեան եւ թւայնային ձեւաոճի մասին:*

*Նախքան ծրագրի աւարտը ճարտ. Ժորան ընթերցեց Երեւանի գլխաւոր ճարտ. Նարեկ Սարգսեանի ուղերձը, Սամւէլ Կարապետեանի գրութիւնը եւ Արմէնի կնոջ՝ Մարգրիթի ու դուստրերի շնորհակալական խօսքը ուղղուած մեր ժողովրդին: Արդարեւ պահը յուզիչ էր, բոլորի հայեացքին նկատւում էր ափսոսանքի արտայայտութիւն, թէ ինչ արժանաւոր հայ ձեռքից գնաց, կորուստը մեծ ու անփոխարինելի...*

*Ներկաներին հոգեսուրճ հիւրասիրուեց առ ի խաղաղութիւն եւ հանգիստ Արմէնի աճիւնին:*

*Մօտիկից չէի ճանաչում Արմէնին:*

*Մակարդակով մարդկանց շուրթերից էի գովասանքներ լսել, թերթերից էի կարդացել նրա առաքելութեան մասին: Իր դասախօսութիւններից մէկում էի ներկայ գտնւել Թեհրանում, ուր Արեւմտեան Հայաստանի յուշակոթողների շուրջ մեկնաբանութիւններ էր անում սահիկներ ցուցադրելով: Հայաստանի հեռուստատեսային ալիքով էի լսել նրա հետազօտութիւնների եւ յայտնաբերումների մասին : Ահա այս բոլորը ինձ հիմք ծառայեց եւ ոգեւորեց, որ նուաստս գրիչ առնի եւ ներկայացնի այս գրութիւնը, այսպիսով իմ պարտքը կատարելու, իմ երախտագիտութիւնը յայտնելու այդ հային, եւ ասելու ՝ սիրելի՛ Արմէն, քո յարախօս աւանդով հայութեան սրտում ջերմ տեղ գրաւեցիր:*

*Մէկի մասին արտայայտւելու կամ գրելու համար պէտք չէ որ նրա ընկերը եղած լինես կամ նրա հետ նիստ ու կաց արած լինես, այլ նրա արժանիքները, նրա ծառայութեան ոլորտն ու որակը նկատի առնել եւ ըստ այնմ արժեւորել: Հայրենիքի նւիրւածութիւնը եւ արւեստը հացփոխութիւն չի ճանաչում:*

** Երկտողը որպէս բնաբան քաղուած է Անահիտ Սարգսեանի «Արմէնին» նուիրւած բանաստեղծութիւնից, Երեւան:*


AGBU 2010
Summer Intern Programs
Join the world's best and brightest college students of Armenian descent for a summer filled with once-in-a lifetime professional, educational, cultural and social experiences in New York City, Yerevan and now Moscow.
Moscow Summer Intern Program
June 26 - July 31, 2010
NEW
Experience the exhilaration of the Russian capital, which is home to the largest Armenian population in the diaspora, hundreds of international corporations and leading organizations, and a major hub of trade, commerce, and diplomacy. Stay at Moscow State University with Armenian students from around the world and immerse yourself in the thrill of modern Russia.
New York
Admissions Closed
Moscow
June 26 - July 31
APPLICATION DEADLINE
March 15, 2010
msip@agbu.org
agbu.org/msip
Yerevan
June 25 - August 6
APPLICATION DEADLINE
March 15, 2010
ysip@agbu.org
agbu.org/ysip
FOR MORE INFORMATION VISIT WWW.AGBU.ORG

## ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

*Շարունակուած էջ 6-էն*

*յաջորդեցին Մարտի 1-ի ողբերգական դէպքերը, որը «Օղակ» տեսակի գործողութիւն էր: Ուշագրաւ է կատարուած փաստը մինչեւ Մարտի մէկը. դա կրկին հոգեբանական գրոհի գործածումն էր, նոյն 1991թ.-ի ռազմավարութիւնը: Տարբերութիւնն այն է, որ 1991թ.-ին պայքար էր ազգային միասնութեան, անկախութեան գաղափարախօսութեան հիմքի վրայ, եւ ազգն ատրպէյճանցիների կողմից (ռուսների օգնութեամբ) բնութագրւում-«անուանակոչւում» էր բացասական համատեքստում: 2008թ.-ի Փետրուարի վերջին գործող իշխանութիւնները պաշտօնական մակարդակով սեփական ժողովրդի մի ստուար զանգուածի տուեցին «պիտակներ»՝ «թմրամոլներ», «իրաւախախտներ», «բոմժեր», «աղաւաղուածներ», Ազատութեան հրապարակն անուանուեց «Թատերական հրապարակ» (ի դէպ, այս անուանումը Խորհրդային պաշտօնական լրատուամիջոցներով է գործածուել) եւ հետեւեց Մարտի 1-ի «Ջարդը»: Այսինքն՝ տաս օր շարունակ գործող վարչախումբն ակտիւ հոգեբանական գրոհ էր տանում սեփական ժողովրդի դէմ, որպէսզի «Թերարժէք» ներկայացնելով՝ կարողանայ համապատասխան գործողութիւններ իրականացնել: Զուգահեռներ անցկացնելով կը տեսնենք, որ Խորհրդային Միութեան «Ժամանակ» լրատուական ծրագիրը եւ Հայաստանի Հանրապետութեան «Հայլուր» պաշտօնական լրատուական ծրագիրը գործել են նոյն տրամաբանութեամբ: Հոգեբանական պատերազմի մեխանիզմը այլ կերպ չի կարող գործել: Եթէ իսկապէս նշուէր, որ Ազատութեան հրապարակում կան մարդիկ հասարակութեան բոլոր շերտերից՝ արուեստագէտներ, գիտնականներ, մտաւորականներ, աշխատաւորներ, ծառայողներ, առհասարակ՝ քաղաքացիներ, բնականաբար, համահունչ չէր լինի կազմակերպուած «Օղակ» գործողութիւնը, իսկ իրաւախախտների եւ թմրամոլների նկատմամբ՝ արդարացուած է:*

*Հոգեբանական պատերազմում ազդեցութեան օբյէկտը ժողովուրդն է, եւ յատկապէս զինուորականները, ոստիկանները, յատուկ ծառայութիւնների այն «հատուածը», որոնք պէտք է աջակցեն կամ իրականացնեն գործողութիւնը: Զինծառայողներն աւելի գաղափարականացուած են եւ մշտապէս գաղափարահոգեբանական ճնշման են ենթարկւում ռազմաքաղաքական ղեկավարութեան կողմից: Զնայած հասարակութեան հետ «հեռակայ» շփմանը, այնուամենայնիւ, զինուորը գիտակցաբար եւ ենթագիտակցօրէն կրում է «կառոյցի» գաղափարախօսութիւնը: Օրեր շարունակ իրականացուել են գաղափարախօսական աշխատանքներ՝ ամրապնդելով այն դրոյթը, որ Ազատութեան հրապարակում յանցագործ զանգուած է: Դրան գումարւում է ագրեսիայի արհեստականօրէն բարձրացման վրայ կատարուող աշխատանքներ՝ յարաբերական «հանգիստ» զինծառայութեան մէջ մտցնելով «անհանգիստ» վիճակներ՝ յաճախակի արհեստական ահազանգեր, պահակակէտերում միտումնաւոր լարուածութիւն, ցուրտ, որի արդիւնքում առկայ են ֆիզիքական լարուածութիւնը, գերյոգնածութիւնը, անքնութիւնը. այսինքն՝ ծառայութիւնը վերածւում են պատերազմող երկրի ծառայողների ֆիզիքական պայմաններին, որ ցանկացած զինուոր «մտածի»՝ իր այս սարսափելի վիճակի պատճառը «այդ մի խումբ իրաւախախտներն են»: «Կոնֆլիկտային իրավիճակներում առաջանում են խմբային նոյնականացման եւ խմբային ձուլուածութեան ֆենոմեններ (իւրայիններ-օտարներ): Դա նշանակում է, որ կոնֆլիկտող իւրաքանչիւր կողմ իր յուզական հակազդումներում, ձգտումներում եւ մտահանգումներում դառնում է մէկ ամբողջական, եւ նրա անդամները կոնֆլիկտն ընկալում են իրենց խմբում գոյութիւն ունեցող գնահատականներով եւ նորմերով: Խմբի ներսում ձեւաւորւում է հոգեբանական շփում, վերանում են սոցիալական շերտի տարբերութիւնները: Խմբի ներսում մեծանում է ինքնագնահատականը, բարձրանում է իր նշանակալիութիւնը: Խումբը վարքային մակարդակում հանդիսանում է որպէս պաշտպան»[4]:*

*Նոյն մարտավարութիւնը՝ հոգեբանական գրոհը, գործում է հետմարտիմէկյան ժամանակահատվածում, երբ պաշտօնական լրատուամիջոցները կատարուածը պարբերաբար անուանում են «Մարտի 1-ի զանգուածային անկարգութիւններ», որից ենթադրւում է, որ դատական համակարգում ունեն կազմակերպուած անկարգութեան «մեղաւորներ», եւ ոչ թէ այլախոհութեան համար ձերբակալուածներ:*

*Այսպիսով, Խորհրդային Միութեան քարոզչամեքենային յատուկ ոճը, հոգեբանական գրոհի մարտավարութիւնն արդի է եւ ժառանգուած, ինչպէս ռեժիմի շարունակութիւնը: 1991թ.-ին ստեղծուած «գրոհային հայի» թշնամու կերպարը մարդկանց ենթագիտակցականում գոյութիւն ունի, թէկուզ դադարել է քարոզչամեքենայի նման գործունէութիւնը եւ գուցէ մոռացուել են կոնկրետ «պիտակները», սակայն բացասական երանգները պահպանւում են, յատկապէս, որ աշխարհաքաղաքական դիրքով զուգորդւում (ասոցացւում) են միւս կովկասեան ազգերի հետ, որոնք անմիջապէս խնդիր ունեն ռուսական շահերի հետ: Երբեմն զուգորդուածութիւնն այնպիսին է, որ շատերը հայերին նոյնիսկ համարում են մուսուլմանական կրօնի հետեւորդներ: Հայաստանում նմանատիպ քարոզչական աշխատանքները նոյն ազգի հանդէպ առաւել վտանգաւոր են, առանց այդ էլ «հայը պակասութիւն չի զգում» իր ազգին ծայրահեղօրէն վերաբերուելու՝ գերագնահատելու կամ թերագնահատելու, իսկ ազգի մէջ «թշնամու կերպար» ստեղծելով՝ խաթարւում է սոցիալ-հոգեբանական հաւասարակշռութիւնը եւ ձուլուելու փոխարէն ենթագիտակցօրէն միտում է առաջանում պառակտուելու (իւրաքանչիւր հայ կը ձգտի խեղաթիւրուած կերպարի հետ միաձուլումից դուրս գալու, «ազատուելու»՝ չկարեւորելով ով, երբ, ինչի համար, ում մասին եւ ինչ պայմաններում է «տուել բացասական պիտակներ»):*

*Ազգը նման է մէկ առանձին անձի. նա թոյլ է եւ կարող է պարտուել, երբ չունի հոգեկան հաւասարակշռուածութիւն, ներքին կոնֆլիկտները գերիշխում են եւ չի կարողանում բռնել «հասունացման» ուղին, ժամանակին չի կարողանում փոխհատուցել բարդոյթները, որոնք մնում են հիմնական, կարծրանում են եւ նեղացնում ընկալումը՝ դարձնելով այն խիստ սուբիեկտիւ, հետեւաբար ճիշտ չի կարողանում գնահատել իր արժէքներն ու դիրքերը, որից էլ կրկին առաջանում են ներքին եւ արտաքին կոնֆլիկտներ:*

*Երբ Աստուած ուզում է պատժել մարդուն՝ զրկում է բանականութիւնից: Երբ Աստուած ուզում է պատժել ազգին՝ «զրկում» է մտաւորական ընտրանուց:*

## ԲԱՑ ՆԱՄԱԿ

*Շարունակուած էջ 7-էն*

*ուշացաւ ռմբակոծումի պատճառաւ: Շուշին ունէր այդ սեւ օրերուն միայն 3 հազար բնակիչ՝ կիներ, ծերեր, մանուկներ, վիրաւոր մարտիկներ: Ստիպուեցանք աշխատող ձեռքեր որոնել մօտակայ քաղաքներէն, Կորիս, Սիսիան, Եղեգնաձոր: Վարձեալները միայն մէկ ամիս յօժար էին աշխատիլ: Ամէն բան ձեռքով կը կատարուէր, աւազ եւ ցիմենտ կռնակի վրայ պէտք էր կրել մինչեւ երրորդ յարկ»: Շուշիին ծաղկումին համար ամէն ոք յօժար էր տաժանակիր աշխատանքի լծուիլ առանց տրտնջալու: Սակայն Շուշին ունէր ձմեռնային դաժան ամիսները, ուստի դպրոցին վերակառուցումի այդ աշխատանքները տեղի կ'ունենային Ապրիլէն Հոկտեմբեր երկարող ամիսներուն միայն:*

*Հակառակ այս անհաւատալի պայմաններուն, Երաժշտանոցը հերոսական վերելքով կը կառուցուէր: 1995ի ձմեռուայ նախօրեակին գլխաւոր կառոյցին երեք տանիքները վերանորոգուած էին, սակայն ուրախութիւնը կիսատ մնաց: Հաւաքուած գումարները սպառելու մօտ էին իսկ թարմ նուիրատուութիւններ չէին հասներ: Միւս կողմէ ինֆլէյշնը պատճառ կը դառնար ապրանքներու սղաճին: «Ստիպուած եղանք քանիցս կեցնել եւ ընդհատել շինութիւնը մինչեւ նոր դրամահաւաք. շինանիւթերու պակասը ուրիշ լուրջ հարցերէն էր», կը շարունակէ պատմել Կարէնը մեզի ցոյց տալով գեղեցկօրէն դրուած, թէեւ անաւարտ, գլխաւոր սրահին մուտքին նկարները: «1997ին մեծ դժուարութեամբ Իրանէն բերել տուինք, Մեղրիի կամուրջէն անցնելով, ապակիէ պատուհանները. գինը՝ $3,000»: Հայկական Միացեալ ֆոնտը Լոս Անճելըսէն օգնութեան կը փութայ մօտ 21,000 տոլլարով: «1997ի Սեպտեմբերին յաջողած էինք մեր տրամադրութեան տակ ունենալ 16 դասարան»: Այսպէս, ի գին գերմարդկային ճիգերու, Սեպտեմբեր 7, 1997ին Շուշիի Դանիէլ Ղազարեան Երաժշտական դպրոցը իր դռները կը բանայ 35 երկսեռ աշակերտներով: Բացման արարողութիւնը կը կատարուի, առաջին անգամ ըլլալով, Արցախի Հանրապետութեան սեփական նոր դրօշի տակ, տեղւոյն եւ Հայաստանի պետական այրերու ներկայութեան:*

*Այսօր, Շուշիի երկճիւղ, երաժշտական-ակադեմական Դանիէլ Ղազարեան դպրոցը ունի 13 տարուայ հերոսական անցեալ եւ մօտ 150ի հասնող աշակերտութիւն: Դպրոցին 11 կարգերը կը յաճախեն նաեւ շրջանի գիւղ-քաղաքներէն մեծ թիւով ուսումնատենչ փոքրիկներ: Մեր տրամադրութեան տակ դրուած է ցանկը վերջին երեք տարիներու շրջանաւարտներուն, ապա Ստեփանակերտի թէ Երեւանի երաժշտանոցներուն եւ քոլէճներուն մէջ իրենց ուսումը շարունակող աշակերտներուն ցանկը: Նաեւ դպրոցէն ներս կը գործէ Էտվին Իսաղուլեանի անուան արուեստի աշխատանոցը ուր աշակերտները կը զարգացնեն իրենց նկարչական կամ այլ արուեստի հակումները: Դ. Ղ. անուան դպրոցի աշակերտներէն ոմանք մասնակցած են զանազան փառատօներու (օրինակ 2009ի Արնօ Պապաջանեանի անուան մրցոյթ-փառատօնին) եւ գրաւած պատուաւոր պատուանդան: Տնօրէն Կարէն Ղարիպեան առաջին օրերէն մինչեւ օրս ճիգ չէ խնայած այս դպրոցին առաւելագոյնը պարգեւելու համար: Իր մենահամերգներուն հասոյթները ամբողջութեամբ նուիրած է իր փայփայած դպրոցին. կազմակերպուած է դրամահաւաքի ճաշկերոյթներ: Դ.Ղ.Դպրոցին սատար կանգնող Գալիֆորնիոյ կազմակերպութիւնը ճանչցուած է Գալիֆորնիոյ լայսընսի տակ իբրեւ ոչ շահաբեր կազմակերպութիւն մը*

*Shushi Music School Society Inc. A Non-Profit Organisation*

*A468463, FTB # 752546 SM5SS, Tax ID 95-4514194*

*2415 CANADA Blvd, CA 91208*

*Annual Sponsorship per Student: $500*

*Musical Instruments $ 700-7.000*

*Website: www.shushischool.org*

*Contact person: Miss Selma Hovsepian 818-577 8480*

*Այժմ Դ.Ղ. անուան դպրոցը կը դիմագրաւէ չափազանց լուրջ նիւթական դժուարութիւններ: Մենք, այս դպրոցին բարգաւաճումին սատարողներս, հայ մշակոյթի ծառայող արուեստագէտներու եւ հայ դպրութեան հետամուտ խմբակը կը յայտնենք մեր խոր մտահոգութիւնը այս հոյակապ կեդրոնին առնչութեամբ: 2009 Նոյեմբերին, Գոհաբանութեան օրը, համահայկական ճիգերով գոյացաւ աւելի քան 16միլիոն տոլլար: Արդեօք, Շուշիին համար հանգանակուած այս հսկայ գումարէն փշրանք մը չկրնա՞ր հասնիլ այսքան զոհողութեամբ եւ դժուարութիւններով գոյացած Դ.Ղ. դպրոցին: Տարազ մը չկա՞յ որու խողովակով հիմնադրամի ղեկավար այրերը, եթէ ուզեն, կարենան այս դպրոցն ալ, իբրեւ կենսական հիմնարկ, մաս կազմել տալ նախաձեռնուած Շուշիին վերելքին սատարող շինարարութիւններուն: «Ըսէ ինծի ինչպէս եւ ինչ բանի կը գործածես դրամդ եւ մարմինդ, ըսեմ քեզի դուն ով ես»:*

**Ձեր Ծանուցումները Վստահեցէք**

**«Մասիս» Շաբաթաթերթին**

**T: (626) 797-7680 F: (626) 797-6863**

**massis2@earthlink.net**

## ՄԱՐԶԱԿԱՆ

# ՎԱՆՔՈՒՎԸՐՈՒՄ ԱՒԱՐՏԵՑԻՆ ՁՄԵՌԱՅԻՆ ՈՂԵՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐԸ



*Քանատայի մարզիկները, նուաճելով 26 մետալ՝ 14 ոսկէ, 7 արծաթէ, 5 պրոնզէ, զբաղեցրել են 1-ին տեղը Վանկուվըր քաղաքում աւարտուած 21-րդ ձմեռային օլիմպիական խաղերի ոչ պաշտօնական թիմային հաշուարկում: 2-րդ տեղում է Գերմանիայի թիմը, որը նուաճել է 30 մետալ՝ 10 ոսկէ, 13 արծաթէ, 7 պրոնզէ, 3-րդ՝ ԱՄՆ-ի՝ 37 մետալ՝ 9 ոսկէ, 15 արծաթէ, 13 պրոնզէ, 4-րդ՝ Նորվեկիայի՝ 23 մետալ՝ 9 ոսկէ, 8 արծաթէ, 6 պրոնզէ, 5-րդ՝ Հարաւային Քորեայի՝ 14 մետալ՝ 6 ոսկէ, 6 արծաթէ, 2 պրոնզէ, 6-րդ՝ Շուեյցարիայի՝ 9 մետալ՝ 6 ոսկէ, 3 պրոնզէ, 7-րդ՝ Չինաստանի՝ 11 մետալ՝ 5 ոսկէ, 2 արծաթէ, 4 պրոնզէ, 8-րդ՝ Շուեդիայի՝ 11 մետալ՝ 5 ոսկէ, 2 արծաթէ, 4 պրոնզէ, 9-րդ՝ Աւստրիայի՝ 16 մետալ՝ 4 ոսկէ, 6-ական արծաթէ եւ պրոնզէ, 10-րդ՝ Հոլանտայի, որ նուաճել է 8 մետալ, այդ թւում 4 ոսկէ, 1 արծաթէ, 3 պրոնզէ:*

*Տղամարդկանց հաքիյի մրցաշարում օլիմպիական ախոյեանի կոչումը նուաճել է Քանատայի հաւաքականը, որ եզրափակիչ մրցամարտում 3:2 հաշուով յաղթել է ԱՄՆ-ի խումբին: Դահուկային սպորտի 50 քիլոմեթր մասսայական մեկնարկ տղամարդկանց մրցաձեւում ախոյեան է դարձել նորվեկիացի Պետեր Նորթուգը՝ 2 ժամ, 05 րոպէ, 35 վայրկեան արդիւնքով: Սնոուբորդի զուգահեռ հսկա-ոլորավայրէջք մրցաձեւում տղամարդկանց մրցաշարում յաղթել է քանատացի Ջէյսն Անդերսը, իսկ լեռնադահուկային սպորտի հսկայ ոլորավայրէջք մրցաձեւում՝ իտալացի Ջուլիանօ Ռացցոլին:*

*Աւելացնենք, որ Կիրակի գիշերը, Վանկուվըրի ,Պրիթիշ Քոլոմպիա փելըսէ մարզապալատում տեղի է ունեցել օլիմպիական խաղերի հանդիսաւոր փակման արարողութիւնը, որին ներկայ էին Քանատայի վարչապետ Սթիվըն Հարփերը եւ միջազգային օլիմպիական կոմիտէի՝ ՄՕԿ-ի նախագահ, բելգիացի Ժակ Ռոգգեն: Վանկուվըրի օլիմպիական խաղերի կազմակերպչական կոմիտէի նախագահ Ջոն Ֆերլոնգան իր ցաւակցութիւնն է յայտնել Վրաստանին՝ Վանկուվըրում մարզումների ժամանակ զոհուած վրացի սահորդ Նոդար Կումարիտաշվիլիի մահուան առթիւ: Համերգից յետոյ կատարուել է էստաֆետի կարգով օլիմպիական դրօշի փոխանցում Վանկուվըրից Սոչիին, որտեղ 2014 թուականին տեղի կ՚ունենան յաջորդ ձմեռային օլիմպիական խաղերը:*

*Վանկուվըրի քաղաքապետ Կրեկըրի Ռոպըրթսընը օլիմպիական դրօշը յանձնել է Սոչիի քաղաքապետ Անատոլի Պախոմովին: ՄՕԿ-ի նախագահ Ժակ Ռոգգեն, ջերմօրէն շնորհաւորելով Վանկուվըրի օլիմպիադայի կազմակերպիչներին, մասնակիցներին ու հիւրերին, խաղերի յաջող կազմակերպման եւ անցկացման համար, պաշտօնապէս յայտարարել է ձմեռային օլիմպիադան փակուած: Խաղերի փակման արարողութեանը Հայաստանի դրօշակակիրն էր լեռնադահուկորդ Արսէն Ներսիսեանը:*

# ԼԵՒՈՆ ԱՐՈՆԵԱՆԸ 5-ՐԴՆ Է ԱՇԽԱՐՀՈՒՄ

*ՖԻԴԵ-ն հրապարակեց աշխարհի ուժեղագոյն շախմատիստների վարկանիշային հերթական աղիւսակը: Հայաստանի շախմատիստներից ամենաբարձր վարկանիշային միաւորներ ունի Լեւոն Արոնեանը՝ 2782, որ հինգերորդ ցուցանիշն է:*

*Աղիւսակը շարունակում է գլխաւորել նորվեգացի գրոսմայստեր Մագնուս Կառլսենը՝ 2813 միաւոր: Յաջորդ երեք տեղերը զբաղեցնում են համապատասխանաբար բուլկարացի Վեսելին Թոփալովը (2805), ռուս Վլադիմիր Կրամնիկը (2790) եւ հնդիկ Վիշվանաթան Անանդը (2787):*

*100 ուժեղագոյն շախմատիստների մէջ Հայաստանից ընդգրկուել են նաեւ Վլադիմիր Յակոբյանը՝ 41-րդ տեղ, Գաբրիէլ Սարգսեանը՝ 53 եւ Արման Փաշիկեանը՝ 84: Ի դէպ, մեր շախմատիստները բաւական ետ են մնում Ատրպէյճանի ներկայացուցիչներից, որոնցից երեքը զբաղեցնում են համապատասխանաբար 6, 12 եւ 13 տեղերը:*

*Երկրների դասակարգման աղիւսակում Հայաստանը զբաղեցնում է 10-րդ տեղը: Այստեղ ՖԻԴԵ-ն հաշուի է առնում տուեալ երկրի առաջատար 10 շախմատիստների արդիւնքները: Աղիւսակը գլխաւորում է Ռուսաստանը, ապա յաջորդում են Ուքրանիան, Չինաստանը, Ֆրանսան, Հնդկաստանը, Իսրայէլը, Ատրպէյճանը, ԱՄՆ-ն եւ Հունգարիան:*

## ԱՊԱՔԻՆՄԱՆ ՄԱՂԹԱՆՔ

*Քաղաքիս ծանօթ ազգայիններէն եւ բարերար տիար Նուպար Մխսի-Գէորգեան վերջերս ենթարկուած է վիրաբուժական գործողութեան մը: «Մասիս» շուտափոյթ եւ կատարեալ ապաքինում կը մաղթէ իրեն:*

# ԳԵՆԱԴԻ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆԸ ՊԱՇՏՊԱՆԵԼ Է ԵՒՐՈՊԱՅԻ ԱԽՈՅԵԱՆԻ ԻՐ ՏԻՏՂՈՍԸ



*Պրոֆեսիոնալ բռնցքամարտի համաշխարհային կազմակերպութեան WBO-ի վարկածով միջին քաշային կարգում Եվրոպայի չեմպիոն, ռուսաստանցի Գենադի Մարտիրոսեանը Փետրվարի 27-ին կայացած մրցամարտում տեխնիկական նոկաուտով 10-րդ ռաունդում յաղթել է Ֆրանսիան ներկայացնող Ազիզ Դահարիին եւ պաշտպանել Եվրոպայի չեմպիոնի իր տիտղոսը:*

*Մրցամարտը բաղկացած էր 12 ռաունդից, բայց 10-րդից հետ Ա. Դահարին հրաժարվել է մրցամարտը շարունակելուց եւ Գ. Մարտիրոսեանը հռչակվել է հաղթող: Պրոֆեսիոնալ բռնցքամարտի Եվրոպայի միութեան EBU-ի վարկածով մինչեւ 76,2 կգ քաշային կարգում Եվրոպայի չեմպիոն, գերմանաբնակ հայաստանցի բռնցքամարտիկ Խորէն Գեւորը իր յաջորդ մրցամարտը կարող է անցկացնել շոտլանդացի Մեթյու Մաքլինի հետ: Նախատեսվում է, որ մրցամարտը տեղի կ՚ունենայ Ապրիլի 16-ին անգլիական Բիրմինգեմ քաղաքում:*

# ԱՐՄԷՆ ՆԱԶԱՐԵԱՆԸ ՃԻՒՏՈՅԻ ԱՇԽԱՐՀԻ ԳԱՒԱԹԻ ՅԱՂԹՈՂ

*Հայաստանի ճիւտոյիստ Արմէն Նազարեանը յաջող հանդէս եկաւ Չեխիայի մայրաքաղաք Պրահայում ընթացող աշխարհի գաւաթի հերթական փուլում եւ 66 կգ քաշային կարգում յաղթող ճանաչուեց:*

*Մեր մարզիկը եզրափակիչ տանող ճանապարհին հերթով յաղթեց կիպրացի Սոտիրիս Խարալամբուսին, իտալացի Ֆրանչեսկօ Ֆարալդոյին, ղազախ Դաստան Իկիբաեւին, ֆրանսացիներ Մաքսիմ Լէ Գոանվիչին եւ Դաւիթ Զուկեւիչին: Եզրափակիչում նրա մրցակիցն էր վերջիններիս հայրենակից Ֆլորան Ուրանին: Արմէն Նազարեանը յաղթելով ֆրանսացի երրորդ ճիւդոյիստին, գրաւեց առաջին տեղը եւ նուաճեց ոսկէ մետալ:*

*Այս քաշային կարգում մեր միւս մարզիկը՝ Համբարձում Տօնոյեանը, արդէն առաջին մրցամարտում պարտուեց լեհ ճիւդոյիստ Պաւել Զագրոդնիկին եւ դուրս մնաց պայքարից:*

*73 կգ քաշային կարգում հանդէս եկող Արտիոմ Բաղդասարեանը յաղթահարեց առաջին երկու փուլերը՝ պարտութեան մատնելով համապատասխանաբար ուքրանացի Արտիոմ Վասիլենկոյին եւ Թուրքիայի ներկայացուցիչ Թանջու Սորլիին: Աւաղ, 1/8 եզրափակիչում նա զիճեց գերմանացի Քրիստոֆեր Վոլեկին:*

*Հայաստանի չորրորդ ներկայացուցիչը՝ Յակոբ Առաքելեանը անյաջող հանդէս եկաւ 100 կգ քաշայինների մրցումներում եւ ժամանակից շուտ դուրս մնաց պայքարից:*

# ՄԱՐԱՇԻ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ ՎԵՐԱՆՈՐՈԳԵՑ ԻՐ ՈՒԽՏԸ

*Շարունակուած էջ 8-էն*

*հաստատութիւններ, անոնց մասին տալով այժմէական լուսաբանութիւններ: Այդ կապակցութեամբ, ան անդրադարձաւ նաեւ այն մասին, թէ հայոց եւ թուրքերու բնակարանները, իրենց ճարտարապետական իւրայատկութիւններով, կը տարբերէին իրարմէ: Անոնք տարբեր էին իրարմէ, իրենց պարզած արտաքին տեսքով: Պրն. բանախօսը աչքի առաջ ունենալով Կիլիկիոյ շրջաններու ներգրաւման չգոյութիւնը հայոց պահանջատիրութեան մէջ, մարաշցիներու՝ Մարաշ վերադառնալու երազը հեռու կը մնայ իրականալէ:*

*Հանդիսատեսներուն ծանօթացնելու համար բեմ հրաւիրուեցաւ ծերունազարդ անձնաւորութիւն մը, որ ուրիշ մէկը չէր եթէ ոչ՝ Մարաշի ջարդերէն մազապուրծ փրկուելով վերապրող դարձած ներկայիս 101 տարեկան Պրն. Պարգեւ Պաղտիկեան, որ բուռն ծափողջոյններով դիմաւորուեցաւ ներկաներուն կողմէ:*

*Խոր տպաւորութիւն թողուց հանդիսատեսներուն վրայ այս ծանօթացումը, որ ունեցաւ իր իմացական իմաստը. 101 տարեկան մարաշցին, ալեհեր Տիար Պարգեւ Պաղտիկեան Մարաշի ջահը լուելեայն կը փոխանցէր օրուան առաջին մոմավար՝ փոքրիկն Նարեկին: Տարակոյս չկար, ջահը զիրար յաջորդող նոր սերունդներուն փոխանցելով կարելի պիտի դառնար յաւիտենականացնել մեր ազգի գոյապահպանումը եւ նուիրականացնել անոր բիւրաւոր նահատակներուն ազգային երազները:*

*Հոգեւոր հայրերու՝ ճաշասեղաններու օրհնութենէն ետք, տեղի ունեցաւ գեղարուեստական բարձրորակ յայտագիր, որուն իրենց մասնակցութիւնը կը բերէին հայ ասմունքի, երգի եւ նուագարանի տաղանդաշատ արուեստագէտ-արուեստագիտուհիներ, «Զարմանալի Հայեր» քերթողութեան իր հրաշալի ասմունքով՝ Նունէ Աւետիսեան, իր տուտուկի հմայքով միջազգային բեմերու բարձր գնահատանքին արժանացած՝ Ռուբէն Յարութիւնեանը, շնորհալի դաշնակահար՝ Աշոտ Սարգիսեանը, իր ազատագրական եւ ազգային միասնութեան նուիրուած հրաւէր..երգերով եւ իր կատարողական տաղանդով ծանօթ երգչուհի Սալբի Մայիլեան եւ ժողովրդական դասական երգերու շնորհազարդ մեկնաբան՝ երգիչ Յովհաննէս Շահպազեան, որոնք իրենց ելոյթները նուիրեցին ցեղասպան թուրք յորդաներու դէմ՝ Մարաշի մղած ճակատամարտին 90-րդ տարելիցին առիթով:*

*Ձեռնարկի աւարտին դուրս ելանք սրահէն բարձր տպաւորութեամբ, մտածելով միշտ փոքրիկն մոմավար Նարեկին եւ վերապրող 101 տարեկան մարաշցիին մասին, թէ այո՝ տարակոյս չկար, որ մեր դարաւոր գոյապայքարի ջահը նոր սերունդներուն փոխանցելով միայն կարելի պիտի դառնար յաւիտենականացնել մեր ազգի գոյապահպանումը եւ նուիրականացնել անոր բիւրաւոր նահատակներուն ազգային երազները:*

*Բիւր յարգանք Մարաշի Աղէտի Նահատակներուն 90-րդ Տարելիցին:*

# ՄԱՀԱԶԴ



ԳՐԻԳՈՐ ԳՈՒՋՈՒԵԱՆ
(Ծնեալ 1929 Հալէպ)

*Սրտի դառն կսկիծով կը գուժենք մեր սիրելի ամուսնոյն, հօր, մեծ հօր, եղբօր եւ հարազատին **ԳՐԻԳՈՐ ԳՈՒՋՈՒԵԱՆԻ** մահը, որ պատահեցաւ Երեքշաբթի, 2 Մարտ, 2010ին:*

*Յուղարկաւորութեան արարողութիւնը տեղի պիտի ունենայ Երկուշաբթի, Մարտ 8ին, 2010, կէսօրէ ետք ժամը 12:30ին, Հոլիվուտ Հիլզ Ֆորըսթ Լոնի ծերմակ եկեղեցւոյ մէջ:*

*Սգակիրներ՝*
*Այրին՝ Կիւլէն Գուզուեան*
*Դուստրը՝ Հուրիկ Գուզուեան*
*Դուստրը՝ Կարօ եւ Սիլվա Մսրլեան եւ զաւակները*
*Տղան՝ Յակոբ եւ Նայիրի Գուզուեան եւ զաւակները*
*Դուստրը՝ Վազգէն եւ Սեդա Խոտանեան եւ զաւակը*
*Քոյրը՝ Ալիս Յարութիւնեան եւ զաւակները*
*Քոյրը՝ Ժոզէֆին Այն Մալըք եւ զաւակները (Լիբանան)*
*Եղբօր տիկինը՝ Մարիժան Գուզուեան եւ զաւակները*
*Եղբայրը՝ Վահրամ եւ Մարի Գուզուեան եւ զաւակները (Հալէպ)*
*Աներձագը Տէր եւ Տիկին Ներսէս Ղազարեան եւ զաւակունք (Պոսթըն)*
*Քենին Տէր եւ Տիկին Էլիզա Լպատ եւ զաւակունք (Դամասկոս)*
*Աներձագը Տէր եւ Տիկին Կարպիս Ղազարեան եւ զաւակունք (Դամասկոս)*

*Եւ համայն Գուզուեան, Ղազարեան, Յարութիւնեան, Այն Մալըք, Մսրլեան, Խոտանեան, Մուրատեան ընտանիքներ եւ հարազատներ:*

Փոխան ծաղկեպսակի կը խնդրուի նուիրատուութիւններ կատարել Նոր Սերունդ Մշակութային Միութեան (NSCA 815 E Colorado Blvd. Suite 140, Glendale, CA 91205)

# ԹՈՐԳՈՄ ՊԱՏՐԻԱՐՔ ԳՈՒՇԱԿԵԱՆ

*Շարունակուածէջ 13-էն*

*խմբաւորել թեմի գործունէութիւնը երեք ուղղութիւններով՝ Եւրոպայի արեւմտեան, կեդրոնական եւ հարաւային մասերուն մէջ:*

*1929 թուի Օգոստոս 12-ին Գահիրէէն մեկնելով Թորգոմ Արքեպիսկոպոս կը հասնէր Փարիզ, ուր ստուար թիւով հայեր կը բնակէին, ու ապա կ'անցնէր Հոլանտա եւ Լեհաստան, ուր հայերը աննշան թիւ մը կը կազմէին: Իր եզրակացութիւնը այն կ'ըլլար որ »անկարելի էր եւ անօգուտ ամբողջ եւրոպահայութիւնը միակ առաջնորդական վիճակի մը մէջ պարագրելու ծրագիրը«: Գործնական պիտի ըլլար համայնքները խմբել մէկէ աւելի առաջնորդական վիճակներու մէջ, բան մը որ տասնամեակներ ետք ճշմարտուեցաւ եւ գործադրուեցաւ:*

*Սրբազան Հօր կատարած խղճամիտ մարդահա-մարի քննութենէն յայտնի եղած է որ 1930 թուականէն առաջ Եւրոպայի բոլոր երկիրներուն մէջ հայերու թիւը 67,000-ի կը հասնէր, որոնց մեծագոյն մասը՝ 64,000-ը Ֆրանսայի մէջ: Հայրապետական Նուիրակը Փարիզը նկատելով հայերու կեդրոնացեալ քաղաքը իր 25,000 հայութեամբ, եւ Լիոն քաղաքը՝ 1,500, եւ Մարսիլիոյ շրջանը՝ 2,400, կը յանձնարարէր վերջին երկուքին վրայ պատասխանատու հոգեւորականներ նշանակել՝ Փարիզի Հայրապետական Պատուիրակի իշխանութեան տակ: Իր թելադրութիւնը եղած է նաեւ Ֆրանսայէ դուրս բնակող մօտ 3,000 հաշուող հայութեան համար հովուական շրջաններ հաստատել:*

*Գուշակեան Թորգոմ Սրբազանի հայեցողութեամբ Եւրոպայի թեմական կազմակերպութեան ընդհանուր նկարագիրը պէտք է ըլլար եկեղեցական, որուն համար Հայաստանեայց Եկեղեցին պիտի կատարէր ազգային դերը, դառնալով առանցքը ազգային կեանքին, կրօնական, կրթական եւ մշակութային մարզերէ ներս: Թորգոմ Արքեպիսկոպոս ընդգծած է մանաւանդ որ »Հայ Եկեղեցւոյ պատկանեալ ազգայինները միայն պէտք է լինին ընտրող եւ ընտրելի«, որովհետեւ թեմին կամ հայրապետական պատուիրակութեան կողմէ կատարուելիք գործը »գործն է Հայ Լուսաւորչական Եկեղեցւոյ եւրոպական համայնքին«:*

(Շարունակելի - 1)

**ՄԱՍԻՍ**
**ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ**

# ԹՈՒՐՔԻԱՅԻ «ԷՐԳԵՆԵՔՈՆ» ԱՀԱԲԵԿՉԱԿԱՆ ԿԱՌՈՅՑԻ ԱՐՄԱՏՆԵՐԸ

*Շարունակուածէջ 5-էն*

*«Ումրիյէ» գործի գլխաւոր դատաւոր է նշանակուել Քյոքսալ Շենգունը: Գործի գլխաւոր մեղադրող Ջեքերիյա Օզը երթեւեկում է զրահապատ մեքենայով եւ ունի 13 թիկնապահ:*

*«Էրկենեքոնի» անդամները մեղադրւում են 2006 թուականին իտալացի հոգեւորական Անդրեա Սանտորոյի սպանութեան, 2007 թուականին Մալաթիայում երեք քրիստոնեաների սպանութեան, Հրանդ Դինքի սպանութեանը մասնակցութեան ունենալու մէջ, ինչպէս նաեւ մի շարք պետական յեղաշրջման նախագծերի նախապատրաստութիւնների, մարդկանց սպանութիւնների, պատրաստուող ահաբեկչութիւնների մէջ: Անգամ ծրագրուել է նաեւ երկրի վարչապետ Ռեջէփ Թայյիփ Էրդողանի դէմ մահափորձ:*

*Սկզբնական շրջանում ձերբակալուեցին 84 կասկածեալներ, սակայն հետագայում եւս բազմաթիւ ձերբակալումներ եղան եւ դրանք մեծ թափով շարունակւում են մինչ օրս: «Էրկենեքոնի» հետ են կապում նաեւ լրագրող Ուղուր Մումջուի եւ գեներալ Էշրէֆ Բիթլիսի սպանութիւնները: Ուշագրաւ է նաեւ 2009 թուականի երկու գեներալների կողմից յեղաշրջման նախապատրաստումը: Գեներալ Քեմալ Եաւուզը պէտք է գործեր Անկարայում, իսկ Թունջէր Քըլընչը՝ Ստամբուլում: Նախապատրաստւում էր նաեւ սպաննել Սւազի 12 հայ առաջնորդների: Այժմ երկու գեներալներն էլ ձերբակալուած են: «Էրկենեքոնի» գործով ձերբակալուածների թւում են ազգայնական փաստաբան Քեմալ Քերինչիզը, «Աշխատաւորների կուսակցութեան» առաջնորդ Դողու Փերինչեքը, պաշտօնաթող բրիգադային գեներալ Վելի Քիւչիւքը: Իր աշխարհիկ հայեացքներով յայտնի Cumhuriyet թերթի գլխաւոր խմբագիր Իլհան Սելչուկին մեղադրանք է ներկայացուել «Էրգենեկոնի» քաղաքացիական առաջնորդը լինելու մէջ: Kanal Turk հեռուստաընկերութեան նախկին սեփականատէր Թունջայ Օզքանը 16 այլ անձանց հետ ձերբակալուել է 2008-ի Սեպտեմբերին:*

*«Էրկենեքոնի գործով» դատախազների կողմից պատրաստուած մեղադրականի համաձայն՝ «Էրկենեքոնը» «ստուերային կառավարութեան» մարմնաւորումն է:*

*«Ստուերային կառավարութիւնը» մի ընդյատակեայ միութիւն է, որը կազմուած է մի խումբ քաղաքացիական եւ զինուորական անձանցից, ովքեր իրենց ձեռքում ունեն իշխանութեան լուրջ լծակներ, յաճախ գործում են օրէնքից դուրս՝ համագործակցելով կազմակերպուած յանցաւորութեան հետ: Ստուերային կառավարութեան հիմքն են հանդիսանում երկրի զինուած ուժերն ու հետախուզական ծառայութիւնների ներկայացուցիչները:*

*Թուրքիայում «ստուերային կառավարութեան» գաղափարը գալիս է դեռ Սառը պատերազմի ժամանակներից, երբ ապօրինի զինուած խմբերը ենթադրաբար համագործակցում էին Արեւմուտքի հետախուզական գործակալութիւնների հետ՝ կոմունիզմի տարածումը կանխելու համար: Սակայն կան մարդիկ, որ գտնում են, թէ ստուերային կառավարութիւնը գալիս է դեռեւս Օսմանեան կայսրութեան ժամանակներից: Իսկ երբ Սառը պատերազմն աւարտուեց, ստուերային կառավարութեան թիրախները փոխուեցին՝ ուղղուելով քրդերի դէմ, ինչպէս նաեւ ԱՍԱԼԱ-ի դէմ (Հայաստանի ազատագրութեան հայ գաղտնի բանակ):*

*«Էրկենեքոնի» կապերի շրջանակն էլ էր բաւական մեծ՝ Քուրդիստանի բանուորական կուսակցութիւն (PKK), Յեղափոխական ժողովրդական ազատագրման ճակատ (DHKP/C), Թուրքիայի բանուորների եւ գիւղացիների ազատագրման բանակ (TIKKO), Թուրքական վրիժառուական խմբաւորում (TIT), անգամ Հըզբոլլահ: Այս բոլորը Թուրքիայում համարւում են ահաբեկչական կազմակերպութիւններ: Նշւում է նաեւ, որ այն կապի մէջ է եղել նաեւ ռուսական անվտանգութեան ուժերի հետ:*

*«Էրկենեքոնի» գործում նոր էջ բացուեց Փոյրազքյոյի գաղտնի զինապահեստի բացայայտումից յետոյ: Զինապահեստում բացի մեծ քանակութեամբ զէնքից եւ զինամթերքից գտնուեցին նաեւ մի շարք անչափ կարեւոր փաստաթղթեր, որոնք լոյս սփռեցին էրգենեքոնականների հակաքրիստոնէական լուրջ մտադրութիւնների վրայ: Նոյն Փոյրազքյոյի զինապահեստում գտնուեց «Ծաղավանդակ» (Kafes) գործողութիւնների պլանը, որը նախատեսում էր մի շարք «անհաւատների» սպանութիւններ, այդ թւում նաեւ «Ակօս» թերթի գլխաւոր խմբագիր, պոլսահայ հասարակական գործիչ Հրանդ Դինքի սպանութեան մանրամասն նախագիծը, որը ներկայացուած էր որպէս առանձին գլուխ: Նոյն ծրագրով պատրաստւում էր նաեւ Պոլսոյ Հայոց պատրիարք Մեսրոպ Մութաֆեանի սպանութիւնը:*

*Դարի դատավարութեան, ահա հենց այսպէս է որակուել «Էրկենեքոնի» դատավարութիւնը Թուրքիայում: Այն դեռ բաւական երկար կ'ընթանայ եւ նոր լոյս կը սփռէ Թուրքիայի պատմութեան վրայ:*

www.haynews.am

ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ
1060 North Allen Avenue
Pasadena, CA 91107
Գրասենեակները վերանորոգուած եւ յարմար վարձքերով:
Հետաքրքրուողներէն հեռաձայնել՝
(626) 398-0506


Չափազանց կարևոր է թերթիկը հետ ուղարկել, քանի որ
դրանից կարող է կախված լինել յուրաքանչյուրիս ապագան:
2010 թվականի մարդահամարի թերթիկը լրացնելով և հետ ուղարկելով՝ մենք համայնքային ծրագրերի իրագործման հնարավորություն ենք ստեղծում: Մասնակցելով 2010 թվականի մարդահամարին, մենք կարող ենք ստանալ մեր մասնաբաժինը համայնքային բարելավման պետական ծրագրով նախատեսվող 400 միլիարդ դոլլարից: Ուրեմն լրացնենք և հետ ուղարկենք մարդահամարի թերթիկը: Ապագան մեր ձեռքերում է: Լեզվական աջակցության համար այցելե՛ք 2010census.gov
ՄԱՍՆԱԿՑԵԼՈՎ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻՆ՝
ՁևԱՎՈՐԵՆՔ ՄԵՐ ԿՅԱՆՔԻ ՅԱՆԿԱԼԻ ՈՐԱԿԸ:
United States Census 2010
ԱՄՆ ՄԱՐԴԱՀԱՄԱՐ-2010
ԱՅՆ ՄԵՐ ՁԵՌՔՈՒՄ Է
Paid for by U.S. Census Bureau